
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԲԱՆԿ**

**ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏԻՆ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ 5

Ա. ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՈԼՈՐՏ

1. ՀՀ ԿԲ խնդիրների, նպատակների և պատասխանատվության շրջանակների հստակությունը դրամավարկային քաղաքականություն իրականացնելիս **11**
2. Դրամավարկային քաղաքականության մշակման և հրապարակման գործընթացը **23**
3. Դրամավարկային քաղաքականության վերաբերյալ հրապարակվող տեղեկատվությունը **30**
4. Կենտրոնական բանկի հաշվետվելիությունը և բարեխղճության երաշխիքները **37**

Բ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

5. Ֆինանսական քաղաքականությունների համար պատասխանատու ֆինանսական գործակալությունների դերի, պատասխանատվությունների և նպատակների հստակությունը **43**
 6. Ֆինանսական քաղաքականությունների մշակման և հաշվետվելիության գործընթացը **50**
 7. Ֆինանսական քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը հասարակությանը **54**
 8. Ֆինանսական գործակալությունների հաշվետվելիությունը և բարեխղճության երաշխիքները **56**
- Հավելված **59**

Ներածություն

Այս նյութի նպատակն է ներկայացնել ՀՀ ԿԲ թափանցիկության համապատասխանությունը միջազգային չափանիշներին: Թափանցիկություն տերմինը կիրառվում է այն առումով, որ ԿԲ քաղաքականության նպատակները, օրենսդրական, ինստիտուցիոնալ և քաղաքականության իրականացման դաշտը, տվյալներն ու տեղեկատվությունը, հաստատության հաշվետվելիությունը հասկանալի, մատչելի ձևով, ինչպես նաև որոշակի պարբերականությամբ պետք է ներկայացվեն հասարակությանը:

ՀՀ ԿԲ թափանցիկության համապատասխանությունը միջազգային չափանիշներին առաջին անգամ ներկայացվել է հանրությանը 2008 թ. ապրիլին, հրապարակվել է առանձին գրքույկ, որը հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով տեղադրվել է ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում: Հաջորդող տարիներին 2009 թ. այս փաստաթուղթը վերանայվել և լրամշակվել է: Այս փաստաթուղթը հանդիսանում է 2008 թ.-ին հրապարակված նյութի վերանայված և լրամշակված տարբերակը:

Նախորդ հրապարակման համեմատ պահպանվել է նյութի կառուցվածքը: Ներկայացվող նյութը բաղկացած է 8 գլուխներից: Առաջին չորս գլուխներում լուսաբանվել են դրամավարկային քաղաքականության թափանցելիության հարցերը: Մասնավորապես, դիտարկվել են ՀՀ կենտրոնական բանկի նպատակների, խնդիրների, պատասխանատվության շրջանակների և դրամավարկային քաղաքականության մշակման գործընթացի թափանցելիությանը, ՀՀ ԿԲ կողմից տարբեր բնույթի տեղեկատվության հրապարակմանը և ԿԲ հաշվետվելիությանն ու բարելավության երաշխիքներին վերաբերող հարցերը: Հաջորդ չորս գլուխներում ներկայացվել են ֆինանսական քաղաքականության ոլորտի թափանցելիության խնդիրները: Մասնավորապես, ուսումնասիրվել են ֆինանսական քաղաքականությունների համար պատասխանատու հաստատությունների՝ ՀՀ ԿԲ, ՀՀ ֆինանսների

նախարարության, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի, Ֆոնդային բորսայի և Ֆինանսական դիտարկումների կենտրոնի դերի, պատասխանատվությունների և նպատակների թափանցելիությանը, ֆինանսական քաղաքականության մշակման գործընթացի և այդ քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության հրապարակմանը, ինչպես նաև ֆինանսական հաստատությունների հաշվետվելիությանն ու բարելավողության երաշխիքներին վերաբերող հարցերը:

Նյութում շեղատառերով նշված են համաշխարհային ստանդարտները, այնուհետև ներկայացված է ՀՀ-ում գործող միջավայրը:

2008թ. մայիս - 2010թ. տեղեկատվության հիման վրա ՀՀ ԿԲ թափանցիկության հիմնադրույթների ուսումնասիրությունից հետևում է, որ ՀՀ կենտրոնական բանկը թափանցիկ կառույց է: Մասնավորապես՝ փաստաթղթում առկա 77 կետերից 74-ի պահանջներին Կենտրոնական բանկը լիովին է համապատասխանում, իսկ 3 դրույթներում ամրագրված պահանջները կիրառելի չեն ՀՀ կենտրոնական բանկի համար:

Ա. ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խնդիրների, նպատակների և պատասխանատվության շրջանակների հստակությունը դրամավարկային քաղաքականություն իրականացնելիս

1.1. Դրամավարկային քաղաքականության վերջնական նպատակը և ինստիտուցիոնալ միջավայրը պետք է հստակ սահմանված լինեն օրենսդրությամբ, այդ թվում՝ ԿԲ մասին օրենքով կամ կարգերով:

ՀՀ ԿԲ կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության վերջնական նպատակը՝ **Հայաստանի Հանրապետությունում գների կայունության ապահովումը** և ինստիտուցիոնալ միջավայրը¹ հստակ սահմանված են ՀՀ Սահմանադրությունում (հոդված 83.3), «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում (4-րդ հոդվածի 1-ին կետ), ՀՀ ԿԲ զարգացման տեսլականում (հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 24.06.2008թ. 179Ա որոշմամբ), «ՀՀ ԿԲ կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության ընդունման վերաբերյալ» հայտարարությունում, «ՀՀ ԿԲ կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության հիմնավորում» փաստաթղթում (19.12.2005թ.), «ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ» փաստաթղթում (հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 15.12.2009թ. թիվ 372Ա որոշմամբ), «ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ու Կենտրոնական բանկի միջև համագործակցության որդեգրած սկզբունքների վերաբերյալ» համաձայնագրում (կնքված 13.10.2006թ-ին), «Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության որոշ մարմինների և

¹ Ինստիտուցիոնալ միջավայրը ներկայացնում է տարբեր ֆինանսական հաստատությունների միջև հարաբերությունների ամբողջական կառուցվածքը և այդ կառուցվածքի ներսում ԿԲ և կառավարական/ոչ կառավարական այլ մարմինների փոխհարաբերությունները:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջև տեղեկատվություն փոխանակելու մասին» ՀՀ Կառավարության 19.08.2004թ. թիվ 1354-Ն որոշմամբ:

Լիովին համապատասխանում է:

1.1.1. Դրամավարկային քաղաքականության վերջնական նպատակը պետք է օրենսդրորեն սահմանված, հրապարակայնորեն ներկայացված և բացատրված լինի:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության վերջնական նպատակը՝ **Հայաստանի Հանրապետությունում գների կայունության ապահովումը**, սահմանված է ՀՀ Սահմանադրությամբ (հոդված 83.3), «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով (հոդված 4, կետ 1): Վերջնական նպատակի տարեկան մակարդակը սահմանվում է յուրաքանչյուր տարվա «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում, որը հրապարակվում է Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում, ինչպես նաև տեղադրվում է ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ ԿԲ-ի և ՀՀ Կառավարության ինտերնետային կայքերում: ՀՀ ԿԲ վերջնական նպատակը մեկնաբանվում է «ՀՀ ԿԲ կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության ընդունման վերաբերյալ հայտարարությունում», «ՀՀ ԿԲ կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության հիմնավորում» փաստաթղթում, ՀՀ ԴՎՔ ծրագրում, ՀՀ ԿԲ Գնաճի եռամսյակային հաշվետվություններում, ՀՀ ԿԲ պաշտոնատար անձանց հրապարակային ելույթներում, ՀՀ ԿԲ մասնագետների կողմից վերջնական նպատակին առնչվող ընթացիկ հիմնախնդիրների մասին տարբեր թերթերում և ամսագրերում հրապարակվող հոդվածներում, զանգվածային լրատվությանը ներկայացվող մամուլի հաղորդագրություններում և այլ մուլտիմեդիա նյութերում (ինչպես օրինակ՝ «Գնաճի հրեշը» մուլտֆիլմը): ՀՀ ԿԲ ԴՔ վերջնական նպատակը մեկնաբանող պաշտոնական փաստաթղթերը, ԿԲ պաշտոնատար անձանց հրապարակային գրավոր ելույթները, մասնագետների հոդվածները և մամուլի հաղորդագրությունները տեղադրվում են նաև ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում:

Լիովին համապատասխանում է:

1.1.2. Կենտրոնական բանկի պարտականությունները² պետք է սահմանված լինեն օրենսդրությամբ:

ՀՀ ԿԲ խնդիրները սահմանված են ՀՀ Սահմանադրությամբ (հոդված 83.3) և «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով (հոդված 4, 5 և այլն):

Լիովին համապատասխանում է:

1.1.3. Կենտրոնական բանկին վերաբերող օրենսդրության մեջ պետք է նշված լինի, որ դրամավարկային քաղաքականության նպատակներին հասնելու համար ԿԲ-ն լիազորված է կիրառել դրամավարկային քաղաքականության գործիքներ:

«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում (հոդված 9, 10, 20, 37, 38, 51) նշված է, որ ԿԲ-ն սահմանում է վերաֆինանսավորման տոկոսադրույքը և կարող է իրականացնել բաց շուկայական, ավանդային և վարկային գործառնություններ, թողարկել ԿԲ արժեթղթեր, սահմանել ԿԲ-ում տեղաբաշխվող պարտադիր պահուստների չափը, տիրապետել, օգտագործել և տնօրինել արտարժույթ: Ի լրումն դրան, գործում են՝ ա) «ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ» փաստաթուղթը (հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 15.12.2009թ. թիվ

² Պարտականությունները այն հիմնական խնդիրներն են, որոնք ԿԲ-ն իրականացնում է որպես ամբողջական ֆինանսական համակարգի մի մաս և որոնց համար ԿԲ-ն հաշվետու է օրենսդրին և հանրությանը: Այդ պարտավորությունների հստակ, օրենսդրորեն սահմանումը օգնում է հանրությանը հասկանալու ԿԲ իրավասությունների շրջանակը, իսկ ԿԲ-ին օգնում է հաշվետվություններ ներկայացնելիս:

372Ա որոշմամբ), որում հանգամանորեն ներկայացված են ՀՀ ԿԲ գործիքակազմը, դրանց կիրառման ընթացակարգերը, հաշվետվելիության պարբերականությունն ու ձևաչափը և բ) «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկվող կարճաժամկետ պետական պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգը» (հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 7.04.2005թ. 144-Ն որոշմամբ), որում ներկայացված են ԿԲ կողմից պարտատոմսերի թողարկման հիմնական պայմանները, պահառության գործունեությունը, տեղաբաշխման աճուրդների ընթացակարգը, երկրորդային շուկայում շրջանառության, գրավադրման և մարման կարգը:

Լիովին համապատասխանում է:

1.1.4. Արժութային քաղաքականության իրականացման ինստիտուցիոնալ պատասխանատվության ընդհանուր կողմերը պետք է արտացոլված լինեն օրենսդրության մեջ:

ՀՀ արժութային քաղաքականության իրականացման ինստիտուցիոնալ պատասխանատվության ընդհանուր կողմերն արտացոլված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքում (հոդված 142, 143, 356), «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում (հոդված 5, 48-49, 51), «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքում (հոդված 4, 5, 8, 9, 10), «Արժութային քաղաքականության սկզբունքների մասին» ՀՀ ԿԲ հայտարարության մեջ (հաստատված ՀՀ ԿԲ վարչության 19.07.1996թ. թիվ 122 որոշմամբ), «Արժութային արժեքների փոխադրման, առաքման, ներմուծման, արտահանման և հայտարարագրման» կարգում (հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 29.07.2005թ. թիվ 386-Ն որոշմամբ), «ՀՀ տարածքում միջազգային կազմակերպությունների կողմից աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման համար արտարժույթով վճարումների իրականացման կարգում» (հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 29.07.2005թ. թիվ 387-Ն որոշմամբ), «Կարճաժամկետ վարկերի ժամկետայնությունը և փոքրածավալ գումարների չափը սահմանելու մասին» ՀՀ ԿԲ 29.07.2005թ. թիվ 389-Ն որոշման մեջ:

«Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքն առաջին անգամ ընդունվել է 2.09.1993թ-ին և արմատապես փոխվել է 24.11.2004թ-ին:

Համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի հոդված 48-ի՝ «Կենտրոնական բանկը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության արժութային գործակալը և լիազորված է իրականացնելու արժութային քաղաքականություն»: ՀՀ ԿԲ կողմից արժութային քաղաքականություն իրականացնելու միանձնյա լիազորությունը գործում է 1996թ. հունիսի 30-ից: Մինչև 1996թ. այդ պատասխանատվությունը դրված էր ՀՀ ԿԲ և ՀՀ Կառավարության վրա:

Արժութային քաղաքականության իրականացման և ընթացիկ հիմնախնդիրների մասին նշվում են ԱՄՀ-ի հետ փոխըմբռնման հուշագրերում և տեղադրվում ԱՄՀ ինտերնետային կայքում, Ազգային ժողովում ՀՀ ԿԲ նախագահի հրապարակային ելույթներում, ՀՀ ԴԲ ծրագրում, ԿԲ տարեկան ու եռամսյակային հաշվետվություններում, զանգվածային լրատվության միջոցներում (օրաթերթեր, ամսագրեր, հեռուստատեսություն) և ինտերնետային կայքի միջոցով:

Լիովին համապատասխանում է:

1.1.5. Դրամավարկային քաղաքականության և ԿԲ-ին լիազորված այլ գործառույթների գծով պարտականությունների իրականացման համար հաշվետվելիության միջոցների, մեթոդների և գործընթացների ընդհանուր կողմերը պետք է արտացոլված լինեն օրենսդրության մեջ:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության և ԿԲ-ին լիազորված այլ գործառույթների գծով պարտականությունների իրականացման համար հաշվետվելիության միջոցների, մեթոդների և գործընթացների ընդհանուր կողմերն արտացոլված են «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում (հոդված 6, 17, 50, 52), համաձայն որի ՀՀ-ում գների կայունությունն ապահովելու նպատակով ԿԲ-ն մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային

քաղաքականության եռամսյակային ծրագրեր: Եռամսյակը մեկ անգամ, հաջորդ 12 ամիսների համար ԿԲ-ն հրապարակում է դրամավարկային քաղաքականության ծրագիր, որը կրում է ուղեցուցային բնույթ: Դրամավարկային քաղաքականության ծրագրերը ներառում են՝ ա) գնաճի կանխատեսումները, բ) դրամավարկային քաղաքականության ուղղությունները և գ) օրենքով սահմանված խնդիրների իրականացման համար ԿԲ խորհրդի հաստատած անհրաժեշտ այլ դրույթներ: ԿԲ-ն մինչև յուրաքանչյուր տարվա մայիսի 1-ը հրապարակում է նախորդ ֆինանսական տարվա տարեկան հաշվետվությունը, որը ներառում է աուդիտորական կազմակերպության հաստատած ֆինանսական հաշվետվությունը և ԿԲ կառավարման վերաբերյալ դրույթները: ԿԲ-ն պարբերաբար, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ, հրապարակում է ՀՀ ֆինանսական կայունության վերաբերյալ հաշվետվություն: ԿԲ-ն պարբերաբար, բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ հրապարակում է նախորդ հաշվետու ժամանակաշրջանի ԿԲ հաշվեկշիռը: ԿԲ-ն, յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո, դրան հաջորդող երկու ամսվա ընթացքում հրապարակում է նախորդող տասներկուամսյա ժամանակաշրջանի համար ԿԲ խորհրդի հաստատած դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունը: Կենտրոնական բանկը յուրաքանչյուր տարի՝ մինչև մայիսի 1-ը, Ազգային ժողով է ուղարկում և "Ազգային ժողովի կանոնակարգ" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ու ժամկետում Ազգային ժողովի նիստում ներկայացնում է ընթացիկ տարվա առաջին եռամսյակում հաստատված դրամավարկային քաղաքականության ծրագիրը, ինչպես նաև նախորդ տարվա դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունը:

Լիովին համապատասխանում է:

1.1.6. Եթե կառավարությունը լիազորված է բացառիկ դեպքերում չեղյալ համարել քաղաքականության միջոցառումների վերաբերյալ ԿԲ որոշումները, ապա նման իրավունքի կիրառման

պայմանները և հասարակությանն այդ մասին տեղեկացման մեխանիզմները պետք է արտացոլված լինեն օրենսդրությունում:

«Կառավարությունը քաղաքականության միջոցառումների վերաբերյալ ՀՀ ԿԲ որոշումները չեղյալ համարելու լիազորություն չունի: Համաձայն ՀՀ Սահմանադրության (հոդված 83.3) և «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի (հոդված 1)՝ ՀՀ կենտրոնական բանկը սահմանադրությամբ և օրենքով իրեն վերապահված խնդիրները և գործառույթներն իրականացնելիս անկախ է:

Լիովին համապատասխանում է:

1.1.7. ԿԲ ղեկավարներին և ղեկավար մարմիններին աշխատանքի նշանակման կարգը, պաշտոնավարման ժամկետները և աշխատանքից ազատելու ընդհանուր չափանիշները պետք է արտացոլված լինեն օրենսդրության մեջ:

«ՀՀ ԿԲ ղեկավարներին և ղեկավար մարմիններին աշխատանքի նշանակման կարգը, պաշտոնավարման ժամկետները և աշխատանքից ազատելու ընդհանուր չափանիշներն արտացոլված են ՀՀ Սահմանադրությունում (հոդված 83.3) և «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում (հոդված 18-20, 22): Նշված հոդվածներում տրվում են ԿԲ նախագահի, նրա տեղակալի, ԿԲ խորհրդի մյուս անդամների նշանակման և ազատման գործընթացները, նշանակման ժամկետները, ԿԲ նախագահի, նրա տեղակալի, ԿԲ խորհրդի մյուս անդամներին ներկայացվող պահանջները, ինչպես նաև նրանց պատասխանատվության շրջանակները հստակ սահմանող դրույթներ:

Լիովին համապատասխանում է:

1.2. Դրամավարկային և գանձարանային ոլորտների միջև ինստրիպուցիոնալ փոխհարաբերությունները պետք է հստակ սահմանված լինեն:

Դրամավարկային և գանձարանային գործառնությունների իրականացման գործում ՀՀ ԿԲ և ՀՀ ֆինանսների նախարարության

դերերի տարանջատումը և դրանց միջև ինստիտուցիոնալ փոխհարաբերությունները հստակ սահմանված են ՀՀ Սահմանադրությամբ (83.3 հոդված), ՀՀ օրենքներով և նորմատիվ ակտերով [«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք (հոդված 30-33), «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք (հոդված 15, 16, 21), տվյալ տարվա բյուջեի մասին օրենք, «ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ու ՀՀ կենտրոնական բանկի միջև համագործակցության որդեգրած սկզբունքների վերաբերյալ» համաձայնագիր (կնքված 13.10.2006թ.) և «ՀՀ իշխանության որոշ մարմինների ու ՀՀ կենտրոնական բանկի միջև տեղեկատվություն փոխանակելու մասին» ՀՀ Կառավարության 19.08.2004թ. թիվ 1354-Ն որոշում]:

Լիովին համապատասխանում է:

1.2.1. Եթե կենտրոնական բանկը կառավարությանը տրամադրում է վարկեր, կանխավճարներ կամ օվերդրաֆտ, ապա դրանց տրամադրման պայմանների, ինչպես նաև սահմանաչափերի մասին պետք է տեղեկացվի հասարակությանը:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից Կառավարության ուղղակի վարկավորումը, ինչպես նաև կանխավճարների և օվերդրաֆտի տրամադրումը արգելված է «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով (հոդված 34):

Լիովին համապատասխանում է:

1.2.2. ԿԲ կողմից կառավարությանը տրամադրված վարկերի, կանխավճարների կամ օվերդրաֆտների ծավալների և պայմանների, ինչպես նաև ԿԲ-ում կառավարության ավանդների մասին պետք է տեղեկացվի հասարակությանը:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից Կառավարության ուղղակի վարկավորումը, ինչպես նաև կանխավճարների և օվերդրաֆտի տրամադրումը արգելված է «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով (հոդված 34):

ՀՀ ԿԲ-ում Կառավարության միջոցների ավանդադրումը իրականացվում է Կենտրոնական բանկի և Ֆինանսների նախարարության միջև կնքվող ավանդային պայմանագրի հիման վրա, որում, յուրաքանչյուր առանձին դեպքում, սահմանվում են ավանդադրվող գումարի չափը, ժամկետայնությունը և տոկոսադրույքը:

ՀՀ կենտրոնական բանկում Կառավարության ավանդների դիմաց վճարվող տոկոսագումարների վերաբերյալ հասարակությանը տեղեկացվում է ՀՀ պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության միջոցով:

ՀՀ ԿԲ-ում Կառավարության ավանդների ընդհանուր չափի մասին հասարակությանը չի տեղեկացվում: ՀՀ կենտրոնական բանկի եռամսյակային կամ տարեկան հաշվեկշիռներում, որոնք հրապարակվում են, Կառավարության բոլոր միջոցները նշվում են մեկ տողով և առանձնացվում են միայն ըստ արժույթների: Համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի (հոդված 3, 4)՝ ավանդների վերաբերյալ տեղեկատվությունը կարող է հրապարակել միայն հաճախորդը, որն այս պարագայում ՀՀ Կառավարությունն է:

Մասամբ է համապարասխանում:

1.2.3. Կառավարության ՊՊ առաջնային շուկայում ուղղակի մասնակցության (եթե թույլատրվում է) և երկրորդային շուկայում ԿԲ մասնակցության ընթացակարգերը պետք է հրապարակվեն:

Կառավարության պետական պարտատոմսերի (այսուհետ՝ ՊՊ) առաջնային շուկայում ՀՀ ԿԲ մասնակցությունը արգելված է «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով (հոդված 10), համաձայն որի՝ ԿԲ-ն չի կարող առաջնային տեղաբաշխման ընթացքում իր հաշվին ձեռք բերել ՀՀ պետական արժեթղթեր: Պետական արժեթղթերի առաջնային տեղաբաշխման ընթացքում ԿԲ-ն կարող է ձեռք բերել դրանք այլ պետությունների կենտրոնական կամ այլ առաջնակարգ բանկերի հանձնարարությամբ և նրանց հաշվին: ՊՊ երկրորդային շուկայում ԿԲ մասնակցությունը կարգավորվում է «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով (հոդված 10), համաձայն որի՝ ԿԲ-ն դրամավարկային քաղաքականություն իրականացնելու նպատակով կարող է ֆինանսական շուկայում ձեռք բերել և օտարել

ինչպես պետական, այնպես էլ հուսալի այլ արժեթղթեր, որի ընթացակարգը հրապարակվել է ՀՀ ԿԲ խորհրդի «ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ» փաստաթղթում (հաստատվել է ՀՀ ԿԲ խորհրդի 15.12.2009. թիվ 372Ա որոշմամբ): Կառավարության ՊՊ երկրորդային շուկայի շրջանառության, այդ թվում նաև ԿԲ մասնակցության ծավալների և միջին եկամտաբերության մասին ամենօրյա տեղեկատվությունը տեղադրվում է ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում:

Լիովին համապատասխանում է:

1.2.4. Տնտեսության այլ հատվածներում ԿԲ մասնակցությունը (օր.՝ բաժնեդիրական կապիտալի ձեռքբերում, ընկերությունների կառավարման մարմիններին անդամակցություն, վճարովի ծառայությունների փրամադրում) հասարակության համար պետք է լինի բաց և հիմնված հստակ սահմանված սկզբունքների ու գործողությունների վրա:

Տնտեսության այլ հատվածներում ՀՀ ԿԲ մասնակցության սկզբունքներն ու գործողությունների շրջանակը հստակ սահմանված են «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում (հոդված 56): ՀՀ ԿԲ բոլոր տեսակի ներդրումները ներկայացվում են ՀՀ Ազգային ժողով և հաստատվում «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով:

Լիովին համապատասխանում է:

1.2.5. ԿԲ շահույթի բաշխման կարգի և կապիտալի համալրման մասին տեղեկատվությունը պետք է հրապարակային լինի:

ՀՀ ԿԲ շահույթի հաշվարկման, բաշխման և կապիտալի համալրման կարգը սահմանվում է «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով (հոդված 11, 12, 17), իսկ դրա մասին փաստացի տեղեկատվությունը հրապարակվում է ՀՀ ԿԲ տարեկան հաշվետվությունում:

Լիովին համապատասխանում է:

1.3. ԿԲ-ի՝ որպես կառավարության գործակալի գործառույթները պետք է հստակ սահմանված լինեն:

ԿԲ-ի՝ որպես ՀՀ Կառավարության գործակալի գործառույթները հստակ սահմանված են «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում (հոդված 32), որը վկայում է, որ ՀՀ ԿԲ-ի՝ որպես դրամավարկային քաղաքականություն իրականացնողի և որպես Կառավարության գործակալի գործառույթները հստակ տարանջատված են:

Լիովին համապատասխանում է:

1.3.1. ԿԲ պարտականությունների (արտաքին և ներքին պարտքի ու արտաքին պահուստների կառավարում, կառավարության բանկային սպասարկում, կառավարության ֆիսկալ գործակալ, միջազգային համագործակցության բնագավառում փնտրելի և ֆինանսական քաղաքականության գծով խորհրդական) մասին հասարակությանը պետք է տեղեկացվի:

Ըստ «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի (հոդված 5, 8, 32)՝ ՀՀ ԿԲ-ն, որպես Կառավարության գործակալ, կառավարում է պետական բյուջեի և ներքին ու արտաքին պետական պարտքի սպասարկման հետ կապված գործառնությունները, տիրապետում, օգտագործում և տնօրինում է ՀՀ միջազգային պահուստները, իրականացնում է ՀՀ Կառավարության բանկային սպասարկումը, հանդիսանում է Կառավարության ֆինանսական գործակալն ու խորհրդատուն, ինչպես նաև ներկայացնում է ՀՀ շահերը միջազգային ֆինանսական կազմակերպություններում:

Կառավարության գործակալի իր գործառույթների կատարման մասին ՀՀ կենտրոնական բանկը հասարակությանը տեղեկացնում է ԿԲ եռամսյակային և տարեկան հաշվետվությունների միջոցով («ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 17):

ՀՀ ԿԲ-ն եռամսյակային պարբերականությամբ Կառավարությանն է ներկայացնում միջազգային պահուստների վիճակի ու կազմի մասին տեղեկատվություն և հրապարակում է («ՀՀ

կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 52) ՁԼՄ-ներում և տեղադրում ԿԲ ինտերնետային կայքում:

Լիովին համապատասխանում է:

1.3.2. Պարտքի առաջնային թողարկման, երկրորդային շուկայում գործունեության մեխանիզմների, պետական արժեթղթերի առևտրի արդյունքում կիրառվող հաշվարկային ընթացակարգերի և դեպոզիտարիաների բնագավառներում ԿԲ-ի, ֆինանսների նախարարության կամ պետական ինքնուրույն գործակալության միջև պարտականությունների բաշխման մասին հասարակությանը պետք է տեղեկացվի:

Պարտքի առաջնային թողարկման, երկրորդային շուկայում գործունեության մեխանիզմների, պետական արժեթղթերի առևտրի արդյունքում կիրառվող հաշվարկային ընթացակարգերի և դեպոզիտարիաների բնագավառում ՀՀ ԿԲ, ՀՀ ֆինանսների նախարարության և Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի պարտականությունները հստակ սահմանված են Հայաստանի Հանրապետության Կառավարության 2007թ-ի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) պարտատոմսերի թողարկման պայմանները, Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 3-ի N 1103-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1580-Ն որոշմամբ, ՀՀ Կառավարության 19.10.2006թ. թիվ 1606-Ն և ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 30.03.2004թ. թիվ 75-Ն որոշումներով հաստատված կարգերով: Ընդ որում, ՀՀ Կառավարության կողմից հաստատված կարգերն են՝ «ՀՀ պետական (գանձապետական) կարճաժամկետ պարտատոմսերի թողարկման պայմանների և ՀՀ պետական (գանձապետական) կարճաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգը», «ՀՀ պետական (գանձապետական) միջին ժամկետայնության մասնակի

մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման պայմանների և ՀՀ պետական (գանձապետական) միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգը», «ՀՀ պետական (գանձապետական) միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման պայմանների և ՀՀ պետական (գանձապետական) միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգը», «ՀՀ պետական (գանձապետական) երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման պայմանների և ՀՀ պետական (գանձապետական) երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգը» և «ՀՀ պետական (գանձապետական) խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման պայմանների և ՀՀ պետական (գանձապետական) խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխման և մարման սպասարկման կարգը»: ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ հաստատված կարգերն են՝ «ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, թերտեղաբաշխված պարտատոմսերի տեղաբաշխման, հետզնման կազմակերպման և մարման սպասարկման կարգը», «ՀՀ պետական պարտատոմսերի պահառության գործունեության մասին կարգը», «ՀՀ պետական պարտատոմսերի գրավի հետ կապված գործառնությունների իրականացման մասին կարգը», «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների համակարգում կիրառվող հաշվեհամարների կոդավորման կարգը», «ՀՀ պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում շրջանառության կարգը», «Պետական պարտատոմսերով գործառնություններում կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների մասին կարգը»:

ՀՀ ԿԲ խորհրդի 30.03.2004թ. թիվ 75-Ն որոշումը, կից կարգերով, տեղադրված է ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում:

Պետական արժեթղթերի բոլոր թողարկումների, աճուրդների, տեղաբաշխումների և հետզնումների մասին տեղեկատվությունը

տրամադրվում է ՁԼՄ-ներին և տեղադրվում ԿԲ ինտերնետային կայքում:

Լիովին համապատասխանում է:

2. Դրամավարկային քաղաքականության մշակման և հրապարակման գործընթացը

2.1. Դրամավարկային քաղաքականության սկզբունքները, գործիքները, վերջնական նպատակային թիրախները պետք է նկարագրվեն, մեկնաբանվեն և հրապարակվեն:

«ԿԲ կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության սկզբունքները, գործիքները, վերջնական նպատակային թիրախները նկարագրվում, մեկնաբանվում և հրապարակվում են ԿԲ տարեկան հաշվետվություններում, գնաճի եռամսյակային հաշվետվություններում, ԿԲ ամսական տեղեկագրերում, վերաֆինանսավորման տոկոսադրույքի արձանագրություններում և վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ մամուլի հաղորդագրություններում, որոնք տեղադրվում են նաև ԿԲ ինտերնետային կայքում: Հաշվետվությունները հրապարակվում են «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով (հոդված 17) սահմանված կարգով:

Լիովին համապատասխանում է:

2.1.1. Դրամավարկային քաղաքականության գործիքների կիրառման ընթացակարգը պետք է լինի հրապարակային:

Դրամավարկային քաղաքականության գործիքների կիրառման ընթացակարգը և դրանց հրապարակման հաճախականությունն ու ձևաչափը նկարագրված են «ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ» փաստաթղթում և «Դրամական միջոցների ներգրավման», «Լոմբարդային վարկերի տրամադրման», «Ռեպո և հակադարձ ռեպո գործարքների կնքման», «Պետական պարտատոմսերի հետ

երկրորդային շուկայում գործառնությունների իրականացման» գլխավոր համաձայնագրերում, որոնք տեղադրված են ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում: «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկվող կարճաժամկետ պետական պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգը» (հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 7.04.2005թ. 144-Ն որոշմամբ) նույնպես տեղադրված է ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում:

Լիովին համապատասխանում է:

2.1.2. Դրամավարկային գործառնությունների իրականացման և շուկաներում գործունեության ընթացքում ԿԲ և գործընկերների միջև գործարքների կնքման հարաբերությունները կարգավորող կանոնները և գործընթացը պեղք է ներկայացվեն հասարակությանը:

Դրամավարկային գործառնությունների իրականացման և շուկաներում գործունեության ընթացքում ՀՀ ԿԲ և գործընկերների միջև գործարքների կնքման հարաբերությունները կարգավորող կանոնները և գործընթացը հստակ շարադրված են «ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ» փաստաթղթում, որը տեղադրված է ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում: Փաստացի իրականացված դրամավարկային գործառնությունների և դրանց գործընթացների մասին տեղեկատվությունը, ըստ սահմանված կարգի, հրապարակվում և տեղադրվում է ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում: ԿԲ ինտերնետային կայքում տեղադրվում են նաև «Դրամական միջոցների ներգրավման», «Լոմբարդային վարկերի տրամադրման», «Ռեպո և հակադարձ ռեպո գործարքների կնքման» և «Պետական պարտատոմսերի հետ երկրորդային շուկայում գործառնությունների իրականացման» գլխավոր համաձայնագրերը:

Լիովին համապատասխանում է:

2.2. Եթե գոյություն ունի դրամավարկային քաղաքականության որոշումներ կայացնող մշտական մարմին, որը խորհրդակցություններ է անցկացնում՝ գնահատելու համար տնտեսությունում բազային փոփոխությունները, հսկում է դրամավարկային քաղաքականության ծրագրով նախանշված խնդիրների իրականացումը և մշակում է ապագա ժամանակահատվածի քաղաքականությունը, ապա այդ մարմնի կազմի, կառուցվածքի, գործառույթների մասին տեղեկատվությունը պետք է հրապարակվի:

Դրամավարկային քաղաքականության որոշումներ կայացնող մշտական մարմինը՝ ՀՀ ԿԲ խորհուրդը, խորհրդակցություններ է անցկացնում՝ գնահատելու համար տնտեսությունում բազային փոփոխությունները, հսկում է դրամավարկային քաղաքականության ծրագրով նախանշված խնդիրների իրականացումը և մշակում է ապագա ժամանակահատվածի քաղաքականությունը: ՀՀ ԿԲ խորհրդի կազմի, կառուցվածքի, գործառույթների մասին տեղեկատվության հրապարակման կարգը սահմանված է «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով (հոդված 19-21) և ՀՀ ԿԲ խորհրդի 18.11.2008թ. թիվ 310-Ա որոշմամբ հաստատված «ՀՀ ԿԲ խորհրդի աշխատանքի կանոնակարգով» (գլուխ 2):

Լիովին համապատասխանում է:

2.2.1. Եթե դրամավարկային քաղաքականության որոշումներ կայացնող մշտական մարմինը խորհրդակցություններ է անցկացնում՝ գնահատելու համար տնտեսությունում բազային փոփոխությունները, հսկում է դրամավարկային քաղաքականության ծրագրում նշված խնդիրների իրականացումը և մշակում ապագա ժամանակահատվածի քաղաքականությունը, ապա այդ նիստերի ժամանակացույցը հրապարակվում է:

ՀՀ ԿԲ խորհրդի նիստերի ժամանակացույցի հրապարակայնությունն ապահովվում է «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով (հոդված 19-21) և ՀՀ ԿԲ խորհրդի 18.11.2008թ. թիվ 310-Ա որոշմամբ:

մամբ հաստատված «ՀՀ ԿԲ խորհրդի աշխատանքի կանոնակարգով» (գլուխ 2):

Լիովին համապատասխանում է:

2.3. Հասարակությանը ժամանակին պետք է տեղեկացվի դրամավարկային քաղաքականության գործիքների պարամետրերի փոփոխությունների մասին (բացի կարճաժամկետ ճշգրտող գործիքներից):

Համաձայն «ՀՀ ԿԲ խորհրդի աշխատանքի կանոնակարգի» (գլուխ 4, կետ 12) և «ՀՀ ԿԲ մամլո հրապարակումների կարգը հաստատելու մասին» ՀՀ ԿԲ նախագահի 15.02.2006թ. թիվ 1/63Լ որոշման (կարգի կետ 2/Ա) ՀՀ ԿԲ կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքների մասին որոշումը կայացվում է յուրաքանչյուր ամիս՝ նախօրոք հայտարարված տարեկան ժամանակացույցին համապատասխան գումարվող ՀՀ ԿԲ խորհրդի նիստում, իսկ վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ մամուլի հաղորդագրությունը որոշման կայացման օրը հրապարակվում է զանգվածային լրատվության միջոցներում և տեղադրվում ԿԲ ինտերնետային կայքում:

Լիովին համապատասխանում է:

2.3.1. ԿԲ-ն պետք է տեղեկացնի հասարակությանը դրամավարկային քաղաքականության ոլորտի վերաբերյալ որոշումների հիմքում ընկած հիմնական դատողությունների մասին:

Դրամավարկային քաղաքականության ոլորտի վերաբերյալ որոշումների հիմքում ընկած հիմնական դատողությունները ՀՀ ԿԲ-ն ներառում է վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ մամուլի հաղորդագրության և վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ խորհրդի նիստի արձանագրության մեջ, որոնք տպագրվում են մամուլում և տեղադրվում ԿԲ ինտերնետային կայքում: Վերաֆինանսավորման տոկոսադրույքի արձանագրություն-

ները հրապարակվում են նաև ԿԲ ամսական տեղեկագրում և Գնաճի եռամսյակային հաշվետվություններում («ՀՀ ԿԲ խորհրդի աշխատանքի կանոնակարգ», գլուխ 5):

Լիովին համապատասխանում է:

2.4. ԿԲ-ն պետք է պարբերական հրապարակային հայտարարություններ կատարի դրամավարկային քաղաքականության նպատակներին հասնելու ընթացքի, ինչպես նաև այդ նպատակներին հասնելու հեռանկարների վերաբերյալ:

ՀՀ ԿԲ-ն դրամավարկային քաղաքականության նպատակներին հասնելու ընթացքի, ինչպես նաև այդ նպատակներին հասնելու հեռանկարների վերաբերյալ հրապարակային հայտարարություններ է կատարում ամսական պարբերականությամբ հրապարակվող վերաֆինանսավորման տոկոսադրույքի արձանագրությունների, գնաճի եռամսյակային հաշվետվությունների, դրամավարկային քաղաքականության եռամսյակային ծրագրերի և տարեկան հաշվետվությունների, ինչպես նաև ՀՀ ԿԲ պաշտոնատար անձանց հրապարակային ելույթների և ամսագրային հոդվածների միջոցով: Յուրաքանչյուր եռամսյակ ՀՀ ԿԲ խորհուրդը առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների առջև հանդես է գալիս հայտարարությամբ՝ պարզաբանելով գնաճի կանխատեսված ցուցանիշներից շեղումները, նշելով առաջիկա եռամսյակի կանխատեսումները և դրամավարկային քաղաքականության ուղղությունները: ԿԲ-ն պարզաբանումներ է տալիս նաև ՀՀ Ազգային ժողովին, նրա հանձնաժողովներին, խորհրդակցում է ՀՀ Կառավարության հետ՝ համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի (հոդված 7, 17):

Լիովին համապատասխանում է:

2.4.1. ԿԲ-ն պետք է հասարակությանը պարբերաբար տեղեկացնի իր կողմից նախանշված դրամավարկային քաղաքականության խնդիրների մասին՝ հիմնավորելով դրանք, նշելով քանակական նպատակային ցուցանիշները և գործիքները, ինչպես նաև կարևորագույն բազային խնդիրները:

Ամսական պարբերականությամբ հրապարակվող վերաֆինանսավորման տոկոսադրույքի արձանագրություններում, գնաճի եռամսյակային հաշվետվություններում, դրամավարկային քաղաքականության եռամսյակային ծրագրերում և տարեկան հաշվետվություններում, ՀՀ ԿԲ պաշտոնատար անձանց հրապարակային ելույթներում և ամսագրային հոդվածներում ՀՀ ԿԲ-ն հասարակությանը տեղեկացնում է նպատակադրված խնդիրներին հասնելու համար իր կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության մասին, հիմնավորում է դրանց իրատեսականությունը՝ նշելով քանակական նպատակային ցուցանիշները և գործիքները, ինչպես նաև կարևորագույն բազային խնդիրները: Յուրաքանչյուր եռամսյակ ՀՀ ԿԲ խորհուրդը հանդես է գալիս հայտարարությամբ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների առջև՝ նշելով առաջիկա եռամսյակի գնաճի կանխատեսումները և դրամավարկային քաղաքականության ուղղությունները: ԿԲ-ն պարզաբանումներ է տալիս նաև ՀՀ Ազգային ժողովին, նրա հանձնաժողովներին, խորհրդակցում է ՀՀ Կառավարության հետ՝ համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի (հոդված 7, 17):

Լիովին համապատասխանում է:

2.4.2. ԿԲ-ն պետք է սահմանված ժամկետներում հասարակությանը ներկայացնի հաշվետվություն՝ ձևավորված մակրոտնտեսական իրավիճակի վերաբերյալ և այն մասին, թե այդ իրավիճակն ինչպես կարող է անդրադառնալ դրամավարկային քաղաքականության նպատակադրումների վրա:

ՀՀ-ում ձևավորված մակրոտնտեսական իրավիճակի վերլուծությունը և դրամավարկային քաղաքականության նպատակների իրագործման վրա մակրոտնտեսական իրավիճակի հնարավոր ազդեցությունների մասին տեղեկատվությունը ՀՀ ԿԲ-ն հրապարակում է ամսական տեղեկագրերում, գնաճի եռամսյակային հաշվետվություններում, դրամավարկային քաղաքականության եռամսյակային ծրագրերում և տարեկան հաշվետվություններում, ՀՀ ԿԲ պաշտոնատար

անձանց հրապարակային ելույթներում և ամսագրային հոդվածներում: ՀՀ ԿԲ ամսական տեղեկագրերը, գնաճի եռամսյակային հաշվետվությունները, դրամավարկային քաղաքականության եռամսյակային ծրագրերը և տարեկան հաշվետվությունները տեղադրվում են ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում:

Լիովին համապատասխանում է:

2.5. Դրամավարկային քաղաքականության իրականացման կանոնների կառուցվածքում էական փոփոխություններ կատարելու մտադրության դեպքում ԿԲ-ն պետք է առաջնայնություն պահանջարկության հասարակության հետ խորհրդակցությունների անցկացմանը՝ որոշակի ժամանակահատվածի ընթացքում:

ՀՀ տարածքում գործող բանկերի գործունեության վրա էապես ազդող ակտերում³ (կանոնակարգեր, կարգեր, նորմատիվային որոշումներ) փոփոխություններ կատարելու դեպքում ՀՀ ԿԲ-ն համագործակցում է Հայաստանի բանկերի միության հետ, այդ թվում մինչև այդ փոփոխության ընդունումը խորհրդակցում է դրանց հետ և տալիս է անհրաժեշտ բացատրություններ («ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 39): ՀՀ ԿԲ խորհրդի նիստերին մասնակցում է ՀՀ բանկերի միության ներկայացուցիչը: ՀՀ բանկերի միության հետ համագործակցության և բանկային գործունեության հետ կապված խնդիրների ուսումնասիրության և կարգավորման նպատակով ԿԲ նախագահը յուրաքանչյուր ամիս հանդիպում է ՀՀ բանկերի միության անդամների հետ:

ՀՀ ԿԲ խորհրդի նիստերի ընթացքում նորմատիվ ակտերի վերաբերյալ ընդունված որոշումների մասին տեղեկատվությունը տրամադրվում է ՁԼՄ-ներին և տեղադրվում ԿԲ ինտերնետային կայքում:

³ Դրամավարկային քաղաքականության իրականացման կանոնների թվում են՝ պարտադիր պահուստավորման պահանջը, գանձապետական արժեթղթերի և ԿԲ արժեթղթերի աճուրդների գործընթացը, բաց շուկայական գործառնություններ իրականացնելիս ԿԲ գործընկերներին ներկայացվող որակավորման պահանջը, փոխհարաբերությունների կանոնները և գործընթացները:

Լիովին համապատասխանում է:

2.6. Դրամավարկային քաղաքականության մշակման նպատակով ֆինանսական հաստատությունների կողմից հաշվետվությունների՝ ԿԲ ներկայացման կարգը, նորմերը պետք է հասանելի լինեն հասարակությանը:

Բանկերի կողմից հաշվետվությունների՝ ՀՀ ԿԲ ներկայացման կարգը, ժամկետները, ձևաչափը սահմանված են «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ով (հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 26.02.2008թ. թիվ 50-Ն որոշմամբ):

Վարկային կազմակերպությունների կողմից հաշվետվությունների՝ ՀՀ ԿԲ ներկայացման կարգը, ժամկետները, ձևաչափը սահմանված են «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ում (հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 03.03.2005թ. թիվ 93-Ն որոշմամբ):

Ապահովագրական ընկերությունների կողմից ՀՀ ԿԲ ներկայացվող հաշվետվությունները, դրանց լրացման և ներկայացման կարգն ու ժամկետները սահմանված են «Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները» կանոնակարգ 3/04-ում (հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 2007թ. նոյեմբերի 16-ի թիվ 366-Ն որոշմամբ):

Վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից ՀՀ ԿԲ ներկայացվող հաշվետվությունները, դրանց լրացման և ներկայացման կարգն ու ժամկետները սահմանված են «Վճարահաշվարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 22-ում (հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 2005 թ. հուլիսի 6-ի թիվ 333-Ն որոշմամբ):

Արժույթային դիվերնների-բրոքերների կողմից հաշվետվությունների՝ ՀՀ ԿԲ ներկայացման կարգը, ժամկետները,

ձևաչափը սահմանված են ՀՀ ԿԲ կանոնակարգ 12-ում (հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 04.05.2007թ. թիվ 135-Ն որոշմամբ):

Արտարժույթի փոխանակման կետերի կողմից հաշվետվությունների՝ ՀՀ ԿԲ ներկայացման կարգը, ժամկետները, ձևաչափը սահմանված են ՀՀ ԿԲ կանոնակարգ 10-ում (հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 15.05.2007թ. թիվ 138-Ն որոշմամբ):

Գրավատնային գործունեություն իրականացնող անձանց կողմից ՀՀ ԿԲ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ձևերը, ժամկետները և լրացման կարգը հաստատված է ՀՀ ԿԲ խորհրդի 12.09.2006թ. թիվ 534-Ն որոշմամբ:

Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից ՀՀ ԿԲ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը և ժամկետները սահմանված են «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 4/03-ով (հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 22.04.2008 թ. թիվ 140Ն որոշմամբ):

Հաշվետու թողարկողների կողմից ՀՀ ԿԲ ներկայացվող հաշվետվությունները սահմանված են «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ով (հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 11.03.2008թ. թիվ 68Ն որոշմամբ):

Վերոնշյալ կանոնակարգերը և որոշումները նախ հրապարակվում են Հայաստանի Հանրապետության գերատեսչական տեղեկագրերում, ապա՝ տպագրվում են ՀՀ ԿԲ պարբերականներում և տեղադրվում են ԿԲ ինտերնետային կայքում:

Լիովին համապատասխանում է:

3. Դրամավարկային քաղաքականության վերաբերյալ հրապարակվող տեղեկատվությունը

3.1. ԿԲ կողմից տրամադրվող տեղեկատվության ծածկույթը, հաճախականությունը, մատչելիությունը, ժամանակին լինելը

պեղք է համապատասխանեն ստանդարտներին և չհակասեն ԱՄՀ տվյալների տարածման համակարգի դրույթներին:

Հայաստանի Հանրապետությունը 2003 թ. նոյեմբերի 7-ից անդամակցում է Արժույթի միջազգային հիմնադրամի վիճակագրական համակարգին՝ Տվյալների տարածման հատուկ չափորոշիչին (SSՀԶ, անգլերեն՝ Special Data Dissemination Standard (SDDS)), որի մասին մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է www.dsb.imf.org ինտերնետային կայքում: SSՀԶ համակարգին ՀՀ անդամակցությունը սահմանված է ՀՀ վարչապետի 2003 թ. հունվարի 17-ի «Արժույթի միջազգային հիմնադրամի տվյալների տարածման հատուկ ստանդարտին Հայաստանի Հանրապետության անդամակցման նախապատրաստական միջոցառումների մասին» թիվ 11-Ա որոշմամբ:

ՀՀ-ում SSՀԶ-ի գծով կորորդինատորը Ազգային վիճակագրական ծառայությունն է: ՀՀ կենտրոնական բանկը, SSՀԶ-ին Հայաստանի անդամակցության շրջանակներում, ապահովում է տնտեսության ֆինանսական հատվածի տեղեկատվությունը՝ ԱՄՀ ստանդարտներով սահմանված ծածկույթով, հաճախականությամբ, մատչելիությամբ և ժամկետայնությամբ: Համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի (հոդված 5), ինչպես նաև ՀՀ ԿԲ խորհրդի 2003 թ. դեկտեմբերի 9-ի «ԱՄՀ-ի SSՀԶ-ին Հայաստանի Հանրապետության անդամակցության շրջանակներում ՀՀ կենտրոնական բանկի մեթատվյալներին հավանություն տալու մասին» թիվ 416 որոշման՝ ՀՀ ԿԲ-ն ապահովում է ԿԲ ամփոփ հաշվեկշռային ցուցանիշների, բանկային համակարգի ամփոփ հաշվեկշռային ցուցանիշների և տոկոսադրույքների, ինչպես նաև միջազգային պահուստների և արտարժույթային իրացվելիության ու փոխարժեքի վիճակագրության վարումը և դրանց հրապարակումը:

Արժույթի միջազգային հիմնադրամի SSՀԶ-ին ՀՀ անդամակցության մասին առավել մանրամասն տեղեկատվությունը տե՛ս ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում (<http://cba.am/statistics>):

Լիովին համապատասխանում է:

3.2. ԿԲ-ն նախապես հայտարարված ժամանակացույցով հասարակությանը պետք է ներկայացնի իր հաշվեկշիռը, այնուհետև, որոշակի ժամկետից հետո, ամփոփ տեղեկատվություն՝ շուկայում ԿԲ գործառնությունների վերաբերյալ:

ՀՀ ԿԲ կողմից հասարակությանը ներկայացվող հաշվեկշռի հրապարակման ժամանակացույցը և շուկայում գործառնությունների ծավալների վերաբերյալ ագրեգացված տեղեկատվության հրապարակման կարգը սահմանված է «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով (հոդված 17) և «ՀՀ ԿԲ պարբերականների թողարկման և հրապարակման կարգի ու պայմանների մասին» ՀՀ ԿԲ խորհրդի 11.03.2008թ. թիվ 70-Ն որոշմամբ (ենթահավելված 1): Համաձայն այս փաստաթղթերի՝ ՀՀ ԿԲ-ն իր հաշվեկշիռը ներկայացնում է հասարակությանը ԿԲ տարեկան հաշվետվությունների, տարեկան վիճակագրական տեղեկագրերի, եռամսյակային բանբերների, ամսական տեղեկագրերի միջոցով, ինչպես նաև եռամսյակային պարբերականությամբ տրամադրում ՋԼՄ-ներին և տեղադրում ԿԲ ինտերնետային կայքում: Բացի այդ, ԿԲ-ն ամեն օր ինտերնետային կայքում տեղադրում է ֆինանսական շուկայում իրականացրած գործառնությունների ծավալների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն, ինչպես նաև ՀՀ ԿԲ ամփոփ հաշվեկշռային ցուցանիշները:

Լիովին համապատասխանում է:

3.2.1. ԿԲ-ն հասարակությանը ներկայացնում է իր հաշվեկշիռը՝ հաճախակի և նախապես հայտարարված ժամանակացույցով:
Հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան կազմված ԿԲ մանրամասն հաշվեկշիռը պետք է հրապարակվի առնվազն տարին մեկ անգամ:

ՀՀ ԿԲ կողմից հասարակությանը ներկայացվող հաշվեկշռի հրապարակման ժամանակացույցը սահմանված է «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով (հոդված 17), «ՀՀ ԿԲ պարբերականների թողարկման և հրապարակման կարգի ու պայմանների» մասին ՀՀ ԿԲ խորհրդի 11.03.2008թ. թիվ 70-Ն որոշմամբ (ենթահավելված

1) և «ՀՀ ԿԲ պարբերականների պատրաստման, հաստատման, հրատարակման, բաշխման և թարգմանության» մասին ՀՀ ԿԲ նախագահի 03.04.2008թ. թիվ 1/304Լ որոշմամբ (ենթահավելված 1), որոնցում նշված է, որ ՀՀ ԿԲ-ն եռամսյակային պարբերականությամբ հասարակությանն է ներկայացնում իր հաշվեկշիռը «ԿԲ բանբերում» և տեղադրում է ԿԲ ինտերնետային կայքում: Տարեկան կտրվածքով մանրամասնեցված և արտաքին աուդիտորական կազմակերպության կողմից հաստատված հաշվեկշիռը ներկայացվում է ԿԲ տարեկան հաշվետվություններում:

Լիովին համապատասխանում է:

3.2.2. Դրամավարկային գործառնությունների, այդ թվում՝ վերաֆինանսավորման և այլ մեխանիզմների ամփոփ ծավալների ու պայմանների մասին տեղեկատվությունը պետք է ներկայացվի հասարակությանը նախապես հայտարարված ժամանակացույցով՝ պահպանելով գաղտնիությունը:

ՀՀ ԿԲ դրամավարկային գործառնությունների, այդ թվում՝ վերաֆինանսավորման և այլ մեխանիզմների ամփոփ ծավալների ու պայմանների մասին տեղեկատվության հրապարակման հաճախականությունն ու ձևաչափը ներկայացված են «ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ» փաստաթղթում և «Դրամական միջոցների ներգրավման», «Լոմբարդային վարկերի տրամադրման», «Ռեպո և հակադարձ ռեպո գործարքների կնքման», «Պետական պարտատոմսերի հետ երկրորդային շուկայում գործառնությունների իրականացման» գլխավոր համաձայնագրերում, որոնք տեղադրված են ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում: Մասնավորապես՝ օրական կտրվածքով տեղեկատվություն է հրապարակվում արժույթային և դրամային շուկաներում ԿԲ և առևտրային բանկերի միջև իրականացված գործառնությունների, ինչպես նաև ԿԲ հաշվեկշռային փաստացի ցուցանիշների վերաբերյալ: Շաբաթական կտրվածքով տեղեկատվություն է հրապարակվում ԿԲ կողմից արժույթային բորսայում իրականացված գործառնությունների վերաբերյալ: Օրական և շաբաթական կտրվածքով հրապարակված

տեղեկատվությունը ամփոփ ներկայացվում է ԿԲ ամսական տեղեկագրում և եռամսյակային ու տարեկան հաշվետվություններում:

Դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքների որոշման խորհրդի նիստերը գումարվում են և համապատասխանաբար տոկոսադրույքները սահմանվում են ըստ նախօրոք հայտարարված տարեկան ժամանակացույցի, որը հրապարակվում է մինչև ընթացիկ տարվա նոյեմբերի 30-ը՝ էլեկտրոնային և այլ կապի միջոցներով: Ընդ որում նշված ժամանակացույցը հաստատվում է պարտադիր պահուստավորման օրացույցին համապատասխան, որը ևս հրապարակվում է:

Լիովին համապատասխանում է:

3.2.3. Պահպանելով առանձին կազմակերպությունների մասին տեղեկատվության գաղտնիությունը, ԿԲ-ն պետք է իր կողմից տրամադրված արտակարգ ֆինանսական աջակցության մասին ամփոփ տեղեկատվությունը հրապարակի այն դեպքում, եթե դա չի խաթարի ֆինանսական կայունությունը:

ՀՀ ԿԲ կողմից առևտրային բանկերին տրամադրված բոլոր վարկերը ամփոփ արտացոլվում են ԿԲ հաշվեկշռում, որը հրապարակվում է եռամսյակային և տարեկան պարբերականությամբ: Բացի այդ, տրամադրված վարկերի վերաբերյալ առավել մանրամասնեցված տեղեկատվությունը ներառվում է ՀՀ ԿԲ տարեկան հաշվետվությանը կից ծանոթագրությունում:

Համաձայն Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման միջազգային ստանդարտների (ՖՀՆՄՍ) հաշվապահական հաշվառման ստանդարտներում սահմանված էականության սկզբունքի՝ առևտրային բանկերին տրամադրվող լոմբարդային վարկերի ծավալի էական դառնալու դեպքում ՀՀ ԿԲ-ն պարտավոր է առանձնացված արտացոլել նշված վարկերը:

Լիովին համապատասխանում է:

3.2.4. Երկրի արտարժութային պահուստային ակտիվների, պարտավորությունների և դրամավարկային քաղաքականություն իրականացնող մարմինների պարտավորությունների մասին տեղեկատվությունը հասարակությանը պետք է ներկայացվի նախապես հայտարարված ժամանակացույցով՝ ԱՄՀ տվյալների տարածման սրանդարտներին համապատասխան:

Հայաստանի միջազգային պահուստների և արտարժութային իրացվելիության ստանդարտ աղյուսակը կազմվում է համաձայն SSՀ2-ի պահանջների և ԱՄՀ մեթոդաբանության: Աղյուսակը մանրամասն տեղեկատվություն է տրամադրում ինչպես միջազգային պահուստների, այնպես էլ միջազգային պահուստներին վերաբերող արտարժութային հոսքերի վերաբերյալ: Տվյալները ներառում են ՀՀ արտաքին պահուստները, արտաքին պետական և պետական երաշխիքով պարտքի սպասարկման նախատեսվող վճարները և այլ հոսքեր՝ մինչև 1 ամիս, 1 - 3 ամիս և մինչև 12 ամիս ժամանակահատվածի համար: Այն կազմվում է ամսական կտրվածքով և տեղադրվում է ՀՀ ԿԲ և ԱՄՀ ինտերնետային կայքերում:

ՀՀ ԿԲ տարեկան վիճակագրական տեղեկագրում հրապարակվում է նաև ԿԲ արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն:

Լիովին համապատասխանում է:

3.3. ԿԲ-ն պետք է հիմնադրի հասարակական տեղեկատվական ծառայություն և ապահովի դրա գործունեությունը:

ՀՀ ԿԲ-ն ապահովում է հասարակական տեղեկատվության ծառայության՝ ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայության գործունեությունը: Հասարակայնության հետ կապերի ծառայությունը, հիմնվելով իր կանոնադրության, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մամլո հրապարակումների կարգի» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մամլո քարտուղարի աշխատանքի ուղեցույցի» դրույթների վրա, հասարակությանը պարբերաբար տեղեկացնում է ԿԲ գործունեության մասին:

Ամսական պարբերականությամբ հրապարակվում են ԿԲ խորհրդի որոշումները ռեպո (վերաֆինանսավորման) տոկոսադրույքի վերաբերյալ, որին հաջորդ տասնօրյակում հետևում են նիստի արձանագրության հրապարակումները, յուրաքանչյուր խորհրդի նիստից հետո հրապարակվում են ԿԲ խորհրդի կայացրած որոշումները, յուրաքանչյուր եռամսյակը մեկ հրապարակվում են ԿԲ հաշվեկշիռը և ՀՀ արտաքին պահուստների կազմի և վիճակի մասին տեղեկատվությունը, ամփոփ տվյալներ ֆինանսաբանկային համակարգի սուբյեկտների (բանկեր, վարկային կազմակերպություններ, ապահովագրական ընկերություններ և վճարահաշվարկային կազմակերպություններ) գործունեության և վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ, բաղադրյալ տնտեսական ինդեքսները, պարբերաբար հրապարակվում են ԿԲ կողմից վարկանշվող ձեռնարկությունների վարկանիշերը, ՀՀ ԿԲ աշխատակիցների հետազոտական աշխատանքները, տեղեկացվում է ԿԲ նախագահի այցելությունների և հանդիպումների մասին: Օրական կտրվածքով տեղեկատվություն է տրամադրվում արժույթային շուկաներում ձևավորված միջին շուկայական փոխարժեքի, ինչպես նաև պետական պարտատոմսերի թողարկումների մասին:

Քաղաքացիների հարցումներին տրվում են բանավոր կամ գրավոր պատասխաններ՝ հարցմանը հաջորդող հինգ օրերի ընթացքում:

Լրագրողների հարցումներին Հասարակայնության հետ կապերի ծառայությունը պատասխանում է հարցազրույցներ կազմակերպելով կամ գրավոր նրանց հարցերին պատասխանելով: Պարբերաբար կազմակերպվում են մամուլի ասուլիսներ՝ ԿԲ խնդիրներին առնչվող հարցերի լուսաբանման նպատակով:

Տարեկան մեկ կամ երկու անգամ տնտեսական թեմաներ լուսաբանող ՁԼՄ-ների լրագրողների համար կազմակերպվում են ուսումնական դասընթացներ, որոնց ընթացքում ԿԲ պաշտոնատար անձինք ներկայացնում են բանկի կողմից իրականացվող քաղաքականությունը, նպատակները, օգտագործվող գործիքակազմը, կիրառվող մեխանիզմները:

Հանրակրթական դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար ուսումնական տարվա ընթացքում կազմակերպ-

վում են էքսկուրսիաներ: Դրանց ժամանակ բացատրվում են ԿԲ խնդիրները, գործառույթները, ներկայացվում է փողի և ֆինանսների պատմությունը, տրվում են այլ հանրամատչելի տեղեկություններ:

Լիովին համապատասխանում է:

3.3.1. ԿԲ-ում պեղք է գոյություն ունենա պարբերականների, այդ թվում՝ տարեկան հաշվետվության, թողարկման ծրագրման ծրագիր:

ՀՀ ԿԲ պարբերականների, այդ թվում՝ տարեկան հաշվետվության, թողարկման ծրագիրը սահմանված է «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով (հոդված 6, 17) և ՀՀ ԿԲ խորհրդի 11.03.2008թ. «ՀՀ ԿԲ պարբերականների թողարկման և հրատարակման կարգն ու պայմանները» թիվ 70-Ն որոշմամբ, համաձայն որի՝ ՀՀ ԿԲ-ն ամսական պարբերականությամբ հրատարակում է «ՀՀ ԿԲ տեղեկագիրը», եռամսյակային պարբերականությամբ՝ ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության ծրագրերը և Գնաճի հաշվետվությունները, «ՀՀ ԿԲ բանբերը», իսկ տարեկան պարբերականությամբ՝ «ՀՀ ԿԲ տարեկան հաշվետվությունը», «ՀՀ ԿԲ վիճակագրական տեղեկագիրը»: Այդ պարբերականների պատրաստման, հաստատման, հրատարակման, բաշխման և թարգմանության կարգը հաստատված է ՀՀ ԿԲ նախագահի 03.04.2008թ. թիվ 1/304Լ որոշմամբ:

Լիովին համապատասխանում է:

3.3.2. ԿԲ բարձրաստիճան պաշտոնատար անձինք պեղք է պատրաստ լինեն հասարակությանը ներկայացնելու իրենց կազմակերպության գործունեության ցուցանիշները և նպատակները:

ՀՀ ԿԲ բարձրաստիճան պաշտոնատար անձինք հասարակությանը ներկայացնում են իրենց կազմակերպության գործունեության ցուցանիշները և նպատակները ՀՀ Կառավարությունում, ՀՀ Ազգային ժողովում («ՀՀ կենտրոնական

բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 7), յուրաքանչյուր եռամսյակ հանդես են գալիս հայտարարությամբ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների առջև՝ ներկայացնելով գնաճի կանխատեսված ցուցանիշներից շեղումների բացատրությունները, առաջիկա եռամսյակի կանխատեսումները և դրամավարկային քաղաքականության ուղղությունները, հրապարակային ելույթներ են ունենում ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում, հեռուստատեսությամբ, ՀՀ ԿԲ գործունեությունը պարզաբանող դասախոսություններ են կազմակերպում տնտեսագիտություն դասավանդող դպրոցական ուսուցիչների համար, մասնագիտական հոդվածներ են տպագրում մամուլում:

Լիովին համապատասխանում է:

3.4. Հասարակությանը պետք է հասանելի լինեն ԿԲ կողմից հրապարակվող բոլոր կանոնակարգող փաստաթղթերը:

ՀՀ ԿԲ բոլոր կանոնակարգող փաստաթղթերը հրապարակվում են ամսական, եռամսյակային, կիսամյակային և տարեկան պարբերականությամբ լույս տեսնող թողարկումներում, որոնք տրամադրվում են Ազգային ժողովին, Կառավարությանը, կրթական հաստատություններին, գրադարաններին, ՀՀ-ում գործող միջազգային ֆինանսական կազմակերպությունների ներկայացուցչություններին, հասարակական կազմակերպություններին, լրատվական գործակալություններին: Բոլոր փաստաթղթերը նախքան հրապարակումը տեղադրվում են ԿԲ ինտերնետային կայքում:

Լիովին համապատասխանում է:

4. Կենտրոնական բանկի հաշվետվելիությունը և բարեխղճության երաշխիքները

4.1. ԿԲ պաշտոնյաները պետք է պատրաստ լինեն պետական լիազորված մարմնին հաշվետվություն փախու դրամավարկային քաղաքականության ընթացքի վերաբերյալ, ներկայացնելու իրենց կազմակերպության կողմից իրականացվող քաղաքականության նպատակները, այդ նպատակներին հասնելու իրենց գործողությունները և, եթե նպատակահարմար է, փոխանակելու կարծիքներ տնտեսական և ֆինանսական համակարգի իրավիճակի վերաբերյալ:

ՀՀ ԿԲ պաշտոնյաների հաշվետվելիությունը կանոնակարգվում է «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով (հոդված 7), համաձայն որի՝ ԿԲ նախագահը կամ նրա տեղակալը պարբերաբար պարզաբանումներ կամ բացատրություններ են տալիս Ազգային ժողովին և նրա հանձնաժողովներին՝ ԿԲ քաղաքականության մասին: ԿԲ-ն մասնակցում է Կառավարության տնտեսական և ֆինանսական ծրագրերի մշակմանը, ինչպես նաև աջակցում է դրանց իրականացմանը, եթե դա չի հակասում ԿԲ խնդիրներին: Դրամավարկային քաղաքականության ծրագրի մշակման ընթացքում ԿԲ-ն խորհրդակցում է Կառավարության հետ: ԿԲ նախագահը կարող է խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցել Կառավարության բաց նիստերին և գրավոր կարծիք ներկայացնել քննարկվող հարցերի վերաբերյալ: ՀՀ Կառավարության լիազոր ներկայացուցիչը կարող է խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցել ԿԲ խորհրդի բաց նիստերին և գրավոր կարծիք ներկայացնել քննարկվող հարցերի վերաբերյալ: ՀՀ Կառավարության ներկայացուցիչը կարող է մասնակցել նաև Դրամավարկային քաղաքականության հանձնաժողովի և Ֆինանսական կոմիտեի նիստերին:

Լիովին համապատասխանում է:

4.2. ԿԲ-ն պետք է նախապես սահմանված ժամկետներում հրապարակի աուդիտորների կողմից վերստուգված ֆինանսական հաշվետվությունը:

Համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի (հոդված 15, 16) ՀՀ կենտրոնական բանկը մինչև յուրաքանչյուր տարվա

մայիսի 1-ը հրապարակում է նախորդ ֆինանսական տարվա տարեկան հաշվետվությունը, որը ներառում է նաև անկախ աուդիտորական կազմակերպության հաստատած ֆինանսական հաշվետվությունը: Անկախ աուդիտորական կազմակերպության հաստատած տարեկան ֆինանսական հաշվետվությունը տեղադրվում է ԿԲ ինտերնետային կայքում:

Լիովին համապատասխանում է:

4.2.1. Ֆինանսական հաշվետվությունները պետք է վերստուգվեն անկախ աուդիտորի կողմից: Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ֆինանսական հաշվետվություններին վերաբերող ցանկացած գնահատական պետք է կազմի հասարակությանը ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

« ԿԲ հաշվապահական հաշվառման քաղաքականությանը, ֆինանսական հաշվետվությունների բովանդակությանը և անկախ աուդիտորական կազմակերպության կողմից դրանց վերստուգմանը վերաբերող դրույթները սահմանված են «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով (հոդված 15, 16), համաձայն որի՝ ԿԲ-ում հաշվապահական հաշվառումը վարվում է ԿԲ խորհրդի կողմից սահմանված կարգով՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի ընդունած հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան: ԿԲ-ն յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար կազմում է ֆինանսական հաշվետվություն՝ հաշվապահական հաշվառման միջազգային չափանիշներին համապատասխան, որն, այնուհետև, հաստատվում է միջազգային ճանաչում ունեցող անկախ աուդիտորական կազմակերպության կողմից: Ֆինանսական հաշվետվությունները ներառում են՝ տարեկան հաշվեկշիռը, եկամուտների և ծախսերի, շահույթի բաշխման վերաբերյալ հաշվետվությունները, ինչպես նաև ԿԲ խորհրդի կողմից սահմանված այլ դրույթներ:

Լիովին համապատասխանում է:

4.2.2. Հասարակությանը պեղք է տեղեկացվի կառավարման ներքին արարողակարգերի, այդ թվում՝ աուդիտորական ստուգումների սահմանված կարգերի մասին, որոնք անհրաժեշտ են գործառնությունների բարեխիղճ կապարման համար:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում ներքին աուդիտի գործառնությունները իրականացնում է Վերստուգիչ խումբը, որը բանկի հատուկ կառուցվածքային ստորաբաժանում է և կոչված է իրականացնելու անկախ, օբյեկտիվ հավաստիացման և խորհրդատվական գործունեություն՝ ուղղված բանկի համար հավելյալ արժեքի ստեղծմանն ու բանկի գործունեության բարելավմանը:

Վերստուգիչ խմբի խնդիրն է բանկում ձևավորված հսկողության համակարգերի վերլուծության հիման վրա իրականացվող գործառնությունների արդյունավետության և համապատասխանության գնահատումը, դրանց կատարելագործմանն ուղղված առաջարկությունների տրամադրումը բանկի անձնակազմին՝ ներառյալ ղեկավարությանը՝ իրենց պարտականությունների կատարման որակի բարձրացման համար:

Վերստուգիչ խումբը բաղկացած է երեք՝ ֆինանսական, գործառնական և տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտի բաժիններից: Վերստուգիչ խումբը ղեկավարում է Գլխավոր վերստուգիչը: Վերստուգիչ խմբի անդամների և գլխավոր վերստուգիչի կարգավիճակը, նշանակման կարգը և խմբի գործունեության ուղղությունները սահմանված են «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով (հոդված 25): Իր գործունեության ընթացքում Վերստուգիչ խումբը առաջնորդվում է ինչպես «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով, այնպես էլ ՀՀ ԿԲ խորհրդի 2002 թ. դեկտեմբերի 5-ի թիվ 397Ն որոշմամբ հաստատված «ՀՀ կենտրոնական բանկի Վերստուգիչ խմբի կանոնադրությամբ» և 2006թ-ից գործող «ՀՀ կենտրոնական բանկի Վերստուգիչ խմբի էթիկայի նորմերով», որոնք մշակված են համաձայն Ներքին աուդիտի ինստիտուտի⁴ կողմից ընդունված ստանդարտների և կանոնակարգող փաստաթղթերի: Մասնագիտա-

⁴ *Stu* www.theija.org.

կան գիտելիքների զարգացման, իրականացվող աշխատանքների բարելավման, միջազգային չափանիշներին համապատասխանեցման և շարունակական ուսուցման ապահովման համար ՀՀ ԿԲ նախագահի 2009թ. հուլիսի 28-ի թիվ 1/958Լ որոշմամբ Վերստուգիչ խմբի և հաշվապահական հաշվառման ոլորտում ընդգրկված առաջատար աշխատակիցների համար սահմանված է միջազգային մասնագիտական որակավորման պահանջ: Աուդիտի պլանավորման և անցկացման ընթացակարգերը, ներառյալ փաստաթղթավորումը, ստորաբաժանումների հետ փոխգործունեությունը, հաշվետվության և հետստուգումային հսկողության իրականացումը նկարագրված են ՀՀ ԿԲ խորհրդի 2002թ. դեկտեմբերի 5-ի թիվ 397Լ որոշմամբ հաստատված «ՀՀ կենտրոնական բանկի ներքին աուդիտի կազմակերպման և անցկացման» կարգում:

ՀՀ ԿԲ վերստուգիչ խումբը իր աշխատանքներն իրականացնելիս առաջնորդվում է Ներքին աուդիտի ինստիտուտի կողմից մշակված Ներքին աուդիտի մասնագիտական գործունեության միջազգային ստանդարտներով: Ներքին աուդիտի աշխատանքները 2007թ. գնահատվել են անկախ միջազգային փորձագետների կողմից: Անկախ փորձագետների կողմից ներքին աուդիտի գործունեության համապատասխանության ստուգումը, համաձայն վերը նշված ստանդարտի պահանջների, իրականացվում է պարբերաբար՝ առնվազն 5 տարին մեկ:

Լիովին համապատասխանում է:

4.3. ԿԲ գործունեության հետ կապված եկամուտների և ծախսերի մասին տեղեկատվությունը հասարակությանը պետք է տրամադրվի առնվազն տարեկան պարբերականությամբ:

Համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի (հոդված 17) ԿԲ-ն պարբերաբար, բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ պետք է հրապարակի ԿԲ նախորդ հաշվետու ժամանակաշրջանի հաշվեկշիռը: ԿԲ-ն մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող երկրորդ ամսվա 30-ը իրականացնում է օրենքի այս պահանջը և հաշվեկշիռը տեղադրում է նաև ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում:

ՀՀ ԿԲ տարեկան հաշվետվությունը, որը ներառում է անկախ աուդիտորական կազմակերպության կողմից հաստատված ֆինանսական հաշվետվությունը, տարեկան հաշվեկշիռը, եկամուտների և ծախսերի, շահույթի բաշխման վերաբերյալ հաշվետվությունները, հրապարակվում է մինչև հաջորդ տարվա մայիսի 1-ը:

Լիովին համապատասխանում է:

4.4. Հասարակությանը պետք է տեղեկացվի ԿԲ պաշտոնյաների և աշխատակիցների անձնական ֆինանսական հարցերը կանոնակարգող ստանդարտների և շահերի բախումը կանխող կանոնների մասին:

ԿԲ խորհրդի անդամների և ծառայողների անձնական ֆինանսական հարցերը կանոնակարգող և շահերի բախումը կանխող դրույթները սահմանված են «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով (հոդված 19, 23, 24, 26, 27) և «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենքով (հոդված 5), համաձայն որոնց՝ ԿԲ նախագահը, նախագահի տեղակալը, խորհրդի անդամները և կենտրոնական բանկի ծառայողները, եթե հարկային տարում գոնե մեկ օր զբաղեցրել են համապատասխան պաշտոն, պարտավոր են հրապարակել տեղեկատվություն իրենց եկամտի աղբյուրների, ինչպես նաև իրենց և իրենց հետ ընդհանուր տնտեսություն վարող անձանց բոլոր էական ֆինանսական շահերի մասին: Պաշտոնական անձինք հայտարարատու են նաև զբաղեցրած պաշտոնից ազատվելուն հաջորդող հինգ տարվա ընթացքում, իսկ նրանց փոխկապակցված անձինք՝ իրենց փոխկապակցված պաշտոնատար անձանց պաշտոնից ազատվելուն հաջորդող երկու տարվա ընթացքում:

ԿԲ ծառայողները, առանց ԿԲ նախագահի համաձայնության, չեն կարող զբաղեցնել պետական այլ պաշտոն, կատարել վճարովի այլ աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից: ԿԲ ծառայողները չեն կարող աշխատել բանկերում կամ լինել դրանց կառավարման մարմինների անդամներ:

ԿԲ նախագահին, նրա տեղակալին, խորհրդի անդամներին, ԿԲ ծառայողներին արգելվում է անձամբ կամ իրենց հետ փոխկապակցված անձանց միջոցով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակով բանկերից ստանալ առևտրային վարկեր:

ԿԲ խորհրդի անդամները չեն կարող լինել որևէ կուսակցության ղեկավար մարմնի անդամ, զբաղվել քաղաքական գործունեությամբ, զբաղեցնել պետական այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից: ԿԲ խորհրդի անդամները չեն կարող ԿԲ-ում այլ պաշտոն զբաղեցնել:

Լիովին համապատասխանում է:

4.4.1. Հասարակությանը պետք է տեղեկացվի աշխատանքային պարտականությունների կատարման ընթացքում ԿԲ պաշտոնյաների և աշխատակիցների իրավական պաշտպանվածության մասին:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում աշխատակիցների իրավական պաշտպանվածությունը կանոնակարգվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի առաջին և երրորդ բաժիններով:

Լիովին համապատասխանում է:

Բ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

5. Ֆինանսական քաղաքականությունների համար պատասխանատու ֆինանսական գործակալությունների⁵ դերի, պատասխանատվությունների և նպատակների հստակությունը

5.1. Ֆինանսական գործակալությունների գործունեության ինստիտուցիոնալ միջավայրը պետք է հստակ սահմանված լինի օրենսդրությամբ:

Ֆինանսական գործակալությունների գործունեության ինստիտուցիոնալ միջավայրը հստակ սահմանված է «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում (հոդված 35, 36, 37, 38, 39, 39¹ - 39¹⁴), «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում (հոդված 10), «Ֆինանսական կարգավորման և վերահսկողության միասնական համակարգի ներդրման մասին» ՀՀ օրենքում (հոդված 5), «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքում (հոդված 4, 5, 18):

Լիովին համապատասխանում է:

⁵ Ըստ ԱՄՅ սահմանման՝ ֆինանսական գործակալությունը ֆինանսական և վճարահաշվարկային համակարգերի կարգավորման և վերահսկման բացառիկ պատասխանատվություն ունեցող հաստատություն է, որի թվին են դասվում ՀՀ ԿԲ-ն (ըստ «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի հոդվածներ 5-ի, 39¹-39¹⁴-ի, «Հանցավոր ծանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի հոդված 10-ի, «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 13-ի և այլն) և Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը (ըստ «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի հոդված 4-ի):

5.1.1. Ֆինանսական գործակալությունների գործունեության վերջնական նպատակը պետք է հստակ սահմանված լինի օրենսդրությամբ:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից վճարահաշվարկային համակարգերի կարգավորման և վերահսկման նպատակը սահմանվում է «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով (հոդված 5): Նպատակների արդյունքները ամփոփվում են ՀՀ ԴՔ ծրագրում, ՀՀ ԿԲ տարեկան ու եռամսյակային հաշվետվություններում, ՀՀ ԿԲ պաշտոնատար անձանց հրապարակային ելույթներում, նպատակին առնչվող ընթացիկ հիմնախնդիրների մասին տարբեր թերթերում և ամսագրերում ՀՀ ԿԲ մասնագետների հրապարակումներում, հոդվածներում, զանգվածային լրատվությանը ներկայացվող մամուլի հաղորդագրություններում, որոնք տեղադրվում են նաև ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում:

Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի նպատակը սահմանվում է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով (հոդված 18): Նպատակների արդյունքները ամփոփվում են ՀՀ ԴՔ ծրագրում, ՀՀ ԿԲ տարեկան ու եռամսյակային հաշվետվություններում, ՀՀ ԿԲ պաշտոնատար անձանց հրապարակային ելույթներում, նպատակին առնչվող ընթացիկ հիմնախնդիրների մասին տարբեր թերթերում և ամսագրերում ՀՀ ԿԲ մասնագետների հրապարակումներում, հոդվածներում, զանգվածային լրատվությանը ներկայացվող մամուլի հաղորդագրություններում, որոնք տեղադրվում են նաև ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում:

Լիովին համապատասխանում է:

5.1.2. Ֆինանսական քաղաքականություն իրականացնելու պարտականությունները պետք է սահմանված լինեն օրենսդրությամբ:

ՀՀ ԿԲ խնդիրները և իրավասությունները սահմանված են «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով (հոդված 4, 5) և ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող կամ վերահսկվող

անձի գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքներով (օրինակ՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին», «Արժեթղթերի շուկայի մասին» և այլ օրենքներ):

Լիովին համապատասխանում է:

5.1.3. Ֆինանսական գործակալությունների՝ հաշվետու լինելու ընդհանուր կողմերը պետք է ներկայացվեն հասարակությանը:

ՀՀ ԿԲ հաշվետվելիությունը սահմանվում է «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով (հոդված 15՝ կետ 2, 17, 20՝ կետ «թ»): Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի հաշվետվելիությունը սահմանվում է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով (հոդված 24):

Լիովին համապատասխանում է:

5.1.4. Ֆինանսական գործակալությունների կառավարման մարմիններում աշխատանքի նշանակման կարգը, պաշտոնավարման ժամկետները և աշխատանքից ազատելու ընդհանուր չափանիշները պետք է ներկայացվեն հասարակությանը:

ՀՀ ԿԲ կառավարման մարմիններում աշխատանքի նշանակման կարգի, պաշտոնավարման ժամկետների և աշխատանքից ազատելու ընդհանուր չափանիշների հրապարակայնության մասին տե՛ս 1.1.7 կետում:

Լիովին համապատասխանում է:

5.2. Ֆինանսական գործակալությունների փոխհարաբերությունների մասին տեղեկատվությունը պետք է հրապարակվի:

ՀՀ ԿԲ և ֆինանսական մյուս գործակալությունների փոխհարաբերությունների մասին տեղեկատվության հրապարակման մասին տե՛ս 1.2, 1.2.1, 1.2.2, 1.2.3, 1.3, 1.3.1, 1.3.2 կետերում:

Լիովին համապատասխանում է:

5.3. Հասարակությունը պետք է տեղյակ լինի վճարահաշվարկային համակարգի հսկողություն իրականացնող մարմնի դերի մասին:

Գործուն վճարահաշվարկային համակարգ ստեղծելու և զարգացնելու, ինչպես նաև վճարահաշվարկային ծառայություն մատուցող հաստատությունների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու գործընթացում ՀՀ ԿԲ դերը սահմանված է «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով (հոդված 5 և գլուխ 5¹-ում ներառված հոդվածներ): Բացի այդ, Հայաստանի Հանրապետությունում վճարահաշվարկային համակարգերի հսկողությունը իրականացնելու գործում ՀՀ կենտրոնական բանկի պատասխանատվությունը սահմանված է «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի դրույթներով (հոդված 13-16): Վճարահաշվարկային համակարգի կայունության (անվտանգության), արդյունավետության և անկանխիկ վճարումների նկատմամբ հանրության վստահությունը ապահովելու համար ԿԲ-ն իրականացնում է նաև համակարգի հսկողություն: ՀՀ կենտրոնական բանկի ինտերնետային կայքի «Վճարահաշվարկային համակարգ» բաժնում առավել մանրամասն ներկայացված է այս ոլորտին առնչվող տեղեկատվությունը:

Լիովին համապատասխանում է:

5.3.1. Որպես վճարահաշվարկային համակարգը վերահսկող գործակալություն՝ ԿԲ-ն պետք է աջակցի, որ հասարակությանը ժամանակին տեղեկացվի քաղաքականության այն ընդհանուր սկզբունքների (այդ թվում՝ ռիսկերի կառավարման) մասին, որոնք կարող են ազդել համակարգային կարևորություն ունեցող վճարային համակարգերի կայունության վրա:

«Վճարային համակարգի հսկողության իրականացման ԿԲ իրավասությունը ամրագրված է «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով (հոդված 5) և «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով (հոդված 13-16): Վճարային համակարգերի հսկողության բնագավառում իր քաղաքականությունը իրականացնելիս և դրա հրապարակայնությունն ապահովելիս ՀՀ կենտրոնական բանկն առաջնորդվում է Միջազգային հաշվարկների բանկի կողմից մշակված «Կենտրոնական բանկերի կողմից վճարահաշվարկային համակարգերի հսկողությունը» (“Central Bank Oversight of Payment and Settlement Systems”, BIS, 2005) փաստաթղթում սահմանված սկզբունքներով:

Վճարային համակարգի հսկողության քաղաքականության թափանցիկության ապահովման նպատակով ՀՀ ԿԲ-ն վճարահաշվարկային համակարգերի մասնակիցներին և հանրությանը պարբերաբար տրամադրում է այդ բնագավառին առնչվող տեղեկատվություն և վիճակագրական տվյալներ: Մասնավորապես՝ «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամսական հրապարակման մեջ տրվում է վճարահաշվարկային համակարգերի վիճակագրության առանձին հավելված, «ՀՀ ԿԲ բանբեր» եռամսյակային հրապարակման մեջ և ՀՀ ԿԲ տարեկան հաշվետվությունում ներկայացվում է «ՀՀ վճարահաշվարկային համակարգ» առանձին բաժինը, որում լուսաբանվում են ՀՀ վճարահաշվարկային հարաբերությունների զարգացումները՝ համապատասխանաբար եռամսյակային և տարեկան կտրվածքով, «Ֆինանսական կայունության հաշվետվություն»-ում ներկայացվում է նաև վճարահաշվարկային բնագավառում առկա ռիսկերի գնահատումը և դրանց զարգացման հավանական ուղղությունների վերլուծությունը, «Հայաստանի ֆինանսական համակարգը. զարգացումը, վերահսկողությունը, կարգավորումը» ամենամյա պարբերականում նկարագրվում է ՀՀ վճարահաշվարկային համակարգի զարգացման ուղղությամբ ՀՀ ԿԲ միջոցառումները, բնագավառը կարգավորող իրավական դաշտի փոփոխությունները, ՀՀ դրամավարկային քաղաքականության տարեկան ծրագրում առանձին ենթակետերով նշվում է վճարահաշվարկային բնագավառում նախորդ տարվա ընթացքում

կատարված և առաջիկա տարվա ընթացքում նախատեսվող աշխատանքների մասին, վճարահաշվարկային համակարգի մասնակիցներին և ՋԼՄ-ներին եռամսյակային և տարեկան պարբերականությամբ տրամադրվում է «ՀՀ վճարահաշվարկային համակարգ» տեղեկատվական նյութը, որում նկարագրվում է վճարահաշվարկային բնագավառը հաշվետու ժամանակահատվածում, բնութագրվում են հիմնական իրադարձությունները, շուկայի մասնակիցներ և ներկայացվում է վիճակագրական տեղեկատվությունը:

ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում տեղադրված է ՀՀ ԿԲ նախագահի 2006թ. դեկտեմբերի 21-ի թիվ 1/1384Ա որոշմամբ հաստատված «ՀՀ կենտրոնական բանկի կողմից վճարային համակարգի նկատմամբ հսկողության իրականացման հայեցակարգը», որում պարզաբանվում է ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգի հսկողության իրականացման քաղաքականությունը, մասնավորապես՝ վճարային համակարգերի հսկողության նպատակները, շրջանակները, հսկողության շրջանակներում ներառված համակարգերին ներկայացվող պահանջները, վճարային համակարգերի հսկողության իրականացման գործընթացը, համագործակցությունը այլ իրավասու մարմինների հետ և ներկայացվում վճարային համակարգերի հսկողության արդյունքների հրապարակման կարգը: Համաձայն այս հայեցակարգի (6.2 ենթակետ) ՀՀ ԿԲ-ն, իր գործունեության թափանցիկությունն ապահովելու և հանրությանը իրազեկ պահելու նպատակով, վճարային համակարգերի հսկողության բնագավառում իր կողմից իրականացվող աշխատանքների վերաբերյալ որոշակի պարբերականությամբ (տարին մեկ անգամ) տեղեկատվություն է հրապարակում ՋԼՄ-ներում և տեղադրում ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում:

ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում տեղադրված է նաև «ՀՀ վճարահաշվարկային համակարգ» (Red Book) նյութը, որը ներառում է համապարփակ տեքստային տեղեկատվություն Հայաստանում գործող վճարային և արժեթղթերի համակարգերի, կիրառվող վճարային գործիքների, ֆինանսական միջնորդների մասին և համապատասխան վիճակագրական աղյուսակներ: Բացի այդ ՀՀ կենտրոնական

բանկը անդամակցում է Համաշխարհային բանկի, Միջազգային հաշվարկների բանկի և ԱՊՀ երկրների կենտրոնական բանկերի կողմից ստեղծված ԱՊՀ երկրների Վճարային Նախաձեռնություն տարածաշրջանային խմբում (CISPI - Commonwealth of Independent States Payments and Securities Settlement Initiative), որի նպատակն է՝ ապահովել համապատասխան զարգացումները և համագործակցությունը տվյալ տարածաշրջանում:

ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում տեղադրված «Ֆինանսական համակարգի կայունություն» նյութում սահմանված է առանձին բաժին՝ «Վճարահաշվարկային համակարգի հսկողություն», որում ներկայացվում են վճարահաշվարկային բնագավառում առկա ռիսկերի վերլուծությունը և դրանց զսպման նպատակով արդեն ձեռնարկված և ձեռնարկվելիք միջոցառումների վերաբերյալ տեղեկատվություն:

Լիովին համապարասխանում է:

5.4. Երբ ֆինանսական գործակալությունները վերահսկում են ինքնակարգավորվող կազմակերպություններին (օր.՝ վճարահաշվարկային համակարգը), ապա ինքնակարգավորվող կազմակերպության և վերահսկող մարմնի փոխհարաբերությունների վերաբերյալ տեղեկատվությունը պետք է հրապարակվի:

2007թ. հոկտեմբերին Հայաստանի ֆոնդային բորսա և Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ինքնակարգավորվող կազմակերպությունները վերակազմավորվել են բաց բաժնետիրական ընկերությունների, և ներկայումս ՀՀ-ում ինքնակարգավորվող կազմակերպություններ չեն գործում:

Կիրառելի չէ:

5.5. Երբ ինքնակարգավորվող կազմակերպությունները իրավասու են իրականացնել որոշ կարգավորիչ և վերահսկողական գործընթացներ, այդ գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունը պետք է հրապարակվի՝

Ֆինանսական գործակալությունների գործունեության թափանցիկության սկզբունքներին համապատասխան:

Տե՛ս 5.4 կետը:

Կիրառելի չէ:

5.6. Ֆինանսական այլ գործակալությունների կողմից իրենց գործունեության վերաբերյալ հաշվետվությունների, վիճակագրական տվյալների և այլ նյութերի հրապարակում:

Ֆինանսական այլ գործակալությունների թվում նշենք Ֆինանսական դիտարկումների կենտրոնը (ՖԴԿ), որը ՀՀ ԿԲ կառուցվածքային ստորաբաժանումներից մեկն է և որի գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է ԿԲ ինտերնետային կայքի՝ ՖԴԿ-ին հատկացված հատվածում: Համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) (ընդունվել է 2008 թվականի մայիսի 26-ին և ուժի մեջ է մտել օգոստոսի 31-ից) 10-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի՝ ՖԴԿ-ն իր իրավական ակտերով սահմանված կարգով Օրենքով սահմանված գործունեության վերաբերյալ հրապարակում է տարեկան հաշվետվություններ, իսկ նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ լիազոր մարմնի կառավարման բարձրագույն մարմնի կողմից սահմանված պարբերականությամբ և կարգով ՖԴԿ-ն հաշվետվություն է ներկայացնում այդ մարմնին՝ իր գործունեության վերաբերյալ: Օրենքի նշված դրույթի համաձայն, ՖԴԿ-ի կանոնադրությամբ սահմանված է, որ ԿԲ խորհրդին ՖԴԿ-ի կողմից ներկայացվում են ինչպես տարեկան, այնպես էլ եռամսյակային հաշվետվություններ: ՖԴԿ տարեկան հաշվետվությունները կրում են հրապարակային բնույթ և տեղադրվում են ԿԲ ինտերնետային կայքի՝ ՖԴԿ-ին հատկացված հատվածում: Տարեկան հաշվետվություններով հրապարակվում են նաև ՖԴԿ գործունեության վիճակագրական տվյալները, ինչպես նաև իրականացված ֆինանսական վերլուծությունների արդյունքները:

Միաժամանակ, Օրենքի և ԿԲ կողմից ընդունված նորմատիվ ակտերի պահանջների խախտման դեպքում հաշվետվություն տրամադրող անձանց նկատմամբ Կենտրոնական բանկի և համապատասխան այլ վերահսկող մարմինների կողմից կիրառվում են պատասխանատվության միջոցներ, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը նույնպես հրապարակային է և տեղադրվում է ԿԲ ինտերնետային կայքում:

ՖԴԿ-ի գործունեությունը, ի թիվս այլոց, ընդգրկում է նաև ՓԼ/ԱՖ դեմ պայքարի բնագավառում խորհրդատվության և ուսուցման իրականացումը: Այն ենթադրում է պետական մարմինների աշխատակիցներին, ներառյալ՝ իրավապահ մարմիններին, հաշվետվություն տրամադրող անձանց, ԿԲ աշխատակիցներին, ինչպես նաև հասարակության լայն շերտերին խորհրդատվության տրամադրում, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի բնագավառում ուսուցման ծրագրերի մշակում, համակարգում և կենսագործում, որոնք նույնպես հրապարակվում են:

ՖԴԿ-ի և ներպետական մարմինների ու կազմակերպությունների միջև բազմակողմ համագործակցությունն իրականացվում է նաև ՀՀ Նախագահի հրամանագրով ձևավորված «Հայաստանի Հանրապետությունում դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարության, փողերի լվացման, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ Միջգերատեսչական հանձնաժողով) շրջանակներում: Միջգերատեսչական հանձնաժողովի հիմնական խնդիրն է հանդիսանում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում միասնական ու համաձայնեցված պետական քաղաքականության մշակումն ու իրականացումը: ՀՀ ԿԲ նախագահի ղեկավարությամբ գործող այդ հանձնաժողովի կազմի մեջ են մտնում ՓԼ/ԱՖ դեմ պայքարում ներգրավված բոլոր իրավասու գերատեսչությունների և հաստատությունների ներկայացուցիչները: Հանձնաժողովի աշխատանքների կազմակերպումն իրականացվում է ՖԴԿ-ի կողմից: Միջգերատեսչական հանձնաժողովն իր տարեկան գործունեության արդյունքներով ՀՀ Նախագահին ներկայացնում է հաշվետվություն-

ներ, որոնք նույնպես հրապարակվում են ԿԲ ինտերնետային կայքի՝ ՖԴԿ-ին հատկացված հատվածում:

ՖԴԿ-ի կողմից միջազգային փորձի հիման վրա մշակվել են և պարբերաբար մշակվում են փողերի լվացման տիպաբանություններ, որոնք տրամադրվում են հաշվետու անձանց, ինչպես նաև տեղադրվում են ԿԲ ինտերնետային կայքի՝ ՖԴԿ-ին հատկացված հատվածում: Դա, իր հերթին, հնարավորություն է տալիս ընդլայնել նշված ոլորտի պատասխանատու աշխատակիցների տեղեկացվածության աստիճանը և նպաստում է փողերի լվացման ռիսկերի կանխարգելմանը և դեպքերի բացահայտմանը:

Լիովին համապատասխանում է:

6. Ֆինանսական քաղաքականությունների մշակման և հաշվետվելիության գործընթացը

6.1. Ֆինանսական քաղաքականության իրականացման ընթացքում ֆինանսական գործակալությունները պետք է հեղինակեն թափանցիկության պահանջներին՝ հաշվի առնելով գաղտնիությունը և ելնելով վերահսկող մարմինների գործունեության արդյունավետությունն ապահովելու անհրաժեշտությունից:

Ֆինանսական քաղաքականության իրականացման թափանցիկությունն ապահովելիս ՀՀ ԿԲ-ն առաջնորդվում է ԱՄՀ-ի կողմից մշակված «Դրամավարկային և ֆինանսական քաղաքականությունների թափանցիկության ստանդարտներով և կանոններով»:

Համաձայն «ՀՀ ԿԲ մամլո հրապարակումների կարգի» 2-րդ կետի 9 ենթակետի՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի նիստի օրը ՀՀ կենտրոնական բանկի հասարակայնության հետ կապերի ծառայության կողմից հրապարակվում է «Հայաստանի

Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի նիստում» հաղորդագրությունը, որը պարունակում է խորհրդում քննարկված հարցերի մասին տեղեկատվություն, բացառությամբ բանկային և ծառայողական գաղտնիք պարունակող և դրամավարկային քաղաքականության վերաբերյալ հարցերի:

ՀՀ ԿԲ խորհրդի 24.06.2008թ. թիվ 179Ա որոշմամբ հաստատվել է «ՀՀ կենտրոնական բանկի զարգացման տեսլականը», որտեղ մանրամասնեցված են ԿԲ ֆինանսական քաղաքականության ուղղությունները:

Լիովին համապատասխանում է:

6.1.1. Ֆինանսական քաղաքականության իրականացումը կարգավորող կանոնակարգերի և գործառնությունների մասին պեպք է մեկնաբանություններ տրվեն հասարակությանը:

ՀՀ ԿԲ կարգավորող կանոնակարգերում փոփոխություններ իրականացնելիս և/կամ նոր կանոնակարգեր ընդունելիս Կենտրոնական բանկի ֆինանսական քաղաքականության մշակման համար պատասխանատու ստորաբաժանումները մեկնաբանություններ տալու նպատակով կազմակերպում են պարբերական քննարկումներ ֆինանսական կազմակերպությունների մասնագիտացված միությունների հետ: Հանդիպումների արդյունքները քննարկվում և հաշվի են առնվում ՀՀ ԿԲ կողմից որոշումների կայացման ժամանակ: Կենտրոնական բանկի խորհուրդը իր ընդունած նորմատիվ իրավական ակտերի և իր կողմից կիրառվող օրենքների վերաբերյալ տալիս է պաշտոնական պարզաբանումներ՝ «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «իէ» կետի և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի համաձայն:

Ֆինանսական քաղաքականության իրականացումը կարգավորող կանոնակարգերի և գործառնությունների մասին մեկնաբանություններ են տրվում ԿԲ եռամսյակային և տարեկան պարբերական հրատարակություններում (օր.՝ «Հայաստանի ֆինանսական համակարգը. զարգացումը, կարգավորումը, վերահսկողությունը»):

Լիովին համապատասխանում է:

**6.1.2. Ֆինանսական հաստատությունների կողմից հաշվեպլու-
 թյունների՝ ԿԲ ներկայացման կարգը պետք է հրապարակվի:**

Ֆինանսական հաստատությունների կողմից հաշվեպլությունների՝ ՀՀ ԿԲ ներկայացման կարգի հրապարակայնության ապահովման մասին տե՛ս 2.6 կետում:

Լիովին համապատասխանում է:

**6.1.3. Ֆինանսական շուկայի գործունեությունը կարգավորող
 նորմատիվային ակտերը պետք է հրապարակվեն:**

Ֆինանսական շուկայի գործունեությունը կանոնակարգող ՀՀ ԿԲ նորմատիվային ակտերի հրապարակման մասին տե՛ս 3.4 կետում:

Լիովին համապատասխանում է:

**6.1.4. ԿԲ կողմից ֆինանսական հաստատություններից
 գանձումների կարգը պետք է ներկայացվի հասարակությանը:**

Լիցենզիաների, ազդագրերի գրանցման, Կենտրոնական բանկում մասնագիտական համապատասխանության և որակավորման քննություններ անցկացնելու, որակավորման վկայականներ տրամադրելու համար ԿԲ կողմից վճարներ չեն գանձվում, սակայն դրանց համար վճարվում է պետական տուրք: Պետական տուրքի չափի վերաբերյալ տեղեկատվությունն արտացոլված է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում (հոդվածներ 8, 16, 19, 20):

Համաձայն «ՀՀ ԿԲ նախագահի և խորհրդի կողմից պատասխանատվության միջոցների կիրառման մասին որոշումների հրապարակային կարգը հաստատելու մասին» ՀՀ ԿԲ նախագահի 2006թ. նոյեմբերի 3-ի թիվ 1/1071L որոշման՝ ՀՀ ԿԲ կողմից ֆինանսական հաստատությունների նկատմամբ կիրառված բոլոր տուգանքները կիրառելու վերաբերյալ որոշումները և դատարանի վճիռները

համապատասխան պատասխանատու ստորաբաժանումների կողմից հրապարակվում են ԿԲ ինտերնետային կայքում դրանք հրապարակման հանձնելու համար պատասխանատու վարչության կողմից ստացվելուց հետո մեկօրյա ժամկետում: Դրան կից հրապարակվում են նաև ամփոփ նյութեր, որտեղ հանրության համար մատչելի լեզվով (ոչ իրավաբանական) նկարագրվում են կատարված խախտումների բնույթը:

Լիովին համապատասխանում է:

6.1.5. Ֆինանսական գործակալությունների (ներքին, միջազգային) միջև խորհրդատվությունների անցկացման և տեղեկատվության տարածման ֆորմալ գործընթացը պեպք է հրապարակվի:

ՀՀ ԿԲ-ի և այլ ֆինանսական գործակալությունների միջև խորհրդատվությունների անցկացման և տեղեկատվության տարածման մասին տե՛ս 1.2, 1.3, 2.1.2, 3.3 և 4.1 կետերում: Այդ տեղեկատվությունը ՀՀ ԿԲ-ն հրապարակում է տարեկան հաշվետվություններում:

Արժեթղթերի շուկայի վերահսկողության ոլորտում ՀՀ ԿԲ-ն համագործակցում է ԱՊՀ անդամ երկրների հետ՝ շուկաների ինտեգրման նպատակով երկրների օրենսդրությունների ներդաշնակեցման շրջանակներում: Բացի այդ, ՀՀ ԿԲ-ն նաև Միջազգային արժեթղթերի հանձնաժողովի (IOSCO) անդամ է և նախատեսվում է ստորագրել Փոխըմբռնման հուշագիր:

Լիովին համապատասխանում է:

6.2. Ֆինանսական քաղաքականության էական փոփոխությունների մասին ժամանակին պեպք է տեղեկացվի հասարակությանը:

ՀՀ ԿԲ կողմից իրականացվող ֆինանսական քաղաքականության էական փոփոխությունների հրապարակման մասին տե՛ս 6.1 և 3.4 կետերում:

Լիովին համապատասխանում է:

6.3. Ֆինանսական գործակալությունը պետք է պարբերաբար հրապարակի քաղաքականության ընդհանուր նպատակներին հասնելու ընթացքի հաշվետվությունները:

ՀՀ ԿԲ հաշվետվելիությունը սահմանվում է «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով (հոդված 17): ԿԲ-ն հրապարակում է «Հայաստանի ֆինանսական համակարգը. զարգացումը, կարգավորումը, վերահսկողությունը» ամենամյա հաշվետվությունը, որտեղ արտացոլվում են ԿԲ կողմից ֆինանսական և վճարահաշվարկային համակարգերի կարգավորման և վերահսկողության գործընթացներն ու արդյունքները:

ԿԲ-ն պարբերաբար, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ հրապարակում է ՀՀ ֆինանսական կայունության վերաբերյալ հաշվետվություն:

Եռամսյակային կտրվածքով հրապարակվում է դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունը, որում կա նաև ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի զարգացումների վերաբերյալ բաժին:

Հրապարակումները տեղադրվում են նաև ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում:

Լիովին համապատասխանում է:

6.4. Ֆինանսական նորմատիվ ակտերում էական տեխնիկական փոփոխությունների կատարման պարագայում ֆինանսական գործակալությունը պետք է առաջնայնություն տա համապատասխան ժամկետներում հասարակության հետ խորհրդակցելուն:

ՀՀ ԿԲ կարգավորող կանոնակարգերում փոփոխություններ կատարելիս և/կամ նոր կանոնակարգեր ընդունելիս Կենտրոնական բանկի ֆինանսական քաղաքականության մշակման համար պատասխանատու ստորաբաժանումները կազմակերպում են պարբերական քննարկումներ ֆինանսական կազմակերպությունների մասնագիտացված միությունների հետ՝

համապատասխան փոփոխությունները ժամանակին ընդունելու և իրականացնելու նպատակով:

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի համաձայն՝ Կենտրոնական բանկը համագործակցում է բանկային միությունների և ասոցիացիաների հետ բանկային գործունեությանը վերաբերող հարցերի շուրջ, այդ թվում՝ մինչև բանկային համակարգի և բանկերի գործունեության վրա էապես ազդող ակտերի ընդունումը խորհրդակցում է նրանց հետ և տալիս է անհրաժեշտ բացատրություններ: Բանկային միությունների և ասոցիացիաների հետ համագործակցության և բանկային գործունեության հետ կապված խնդիրների ուսումնասիրության և կարգավորման նպատակով Կենտրոնական բանկը կարող է մասնակցել բանկային միությունների, ասոցիացիաների աշխատանքային խմբերի և այլ կառույցների աշխատանքին:

ՀՀ ԿԲ նախագահի 26.02.2009թ. թիվ 1/205Լ որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ հանրության կողմից կարծիքների ներկայացման հնարավորություն ընձեռելու վերաբերյալ կարգը», համաձայն որի ԿԲ ինտերնետային կայքի «Նախագծեր» բաժնում տեղադրվում են նորմատիվ իրավական ակտերի նախագծերը: Համաձայն նշված կարգի Նախագծերի տեղադրման օրվանից 14 աշխատանքային օրվա ընթացքում հանրությունը հնարավորություն ունի իր կարծիքն ուղարկել ԿԲ ինտերնետային կայքի «Նախագծեր» բաժնի աղյուսակ 1-ի «Հետադարձ կապ» սյունակում նշված համապատասխան էլեկտրոնային հասցեներով: Հանրության կողմից ներկայացված կարծիքները քննարկվում են և ընդունված կարծիքների արդյունքում լրամշակված Նախագծերը ներկայացվում են ԿԲ խորհրդի նիստին՝ ամփոփ տեղեկանքում նշելով քննարկումների արդյունքում չընդունված կարծիքները և դրանք չընդունելու հիմնավորումները: Քննարկումների ընթացքում, ելնելով նպատակահարմարությունից, Նախագծի վերաբերյալ կարծիք ներկայացրած անձին կարող է հնարավորություն տրվել մասնակցելու քննարկումներին՝ դրա մասին

նրան հայտնելով (էլեկտրոնային փոստի կամ հեռախոսի միջոցով) քննարկումից առնվազն 3 աշխատանքային օր առաջ:

Լիովին համապատասխանում է:

7. Ֆինանսական քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը հասարակությանը

7.1. ԿԲ-ն պետք է պարբերաբար հաշվետվություն ներկայացնի ֆինանսական համակարգում իրավիճակի (որի համար կրում է պատասխանատվություն) կարևորագույն փոփոխությունների մասին:

ՀՀ ԿԲ հաշվետվելիությունը սահմանվում է «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով (հոդված 17): ԿԲ-ն հրապարակում է «Հայաստանի ֆինանսական համակարգը. զարգացումը, կարգավորումը, վերահսկողությունը» ամենամյա հաշվետվությունը, որտեղ արտացոլվում են ԿԲ կողմից ֆինանսական և վճարահաշվարկային համակարգերի կարգավորման և վերահսկողության գործընթացներն ու արդյունքները:

ԿԲ-ն պարբերաբար, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ հրապարակում է ՀՀ ֆինանսական կայունության վերաբերյալ հաշվետվություն:

Եռամսյակային կտրվածքով հրապարակվում է դրամավարկային ծրագրի կատարման հաշվետվությունը, որում կա նաև ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի զարգացումների վերաբերյալ բաժին:

Եռամսյակային կտրվածքով ԿԲ-ն աղյուսակների տեսքով հրապարակում է նաև Ֆինանսական համակարգի զարգացման միտումները՝ առանձին բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների վերաբերյալ:

Հրապարակումները տեղադրվում են նաև ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում:

Լիովին համապատասխանում է:

7.2. ԿԲ-ն պետք է պարբերաբար և ժամանակին տեղեկատվություն տրամադրի հասարակությանը ամփոփ հաշվետվական տվյալների վերաբերյալ՝ պահպանելով գաղտնիության ապահովման պահանջները:

Համաձայն «ՀՀ ԿԲ մամլո հրապարակումների կարգի» 2-րդ կետի Դ ենթակետի՝ Կենտրոնական բանկը պետք է հրապարակի «Ֆինանսական համակարգի զարգացման միտումները»: Սույն հաղորդագրությունը հրապարակվում է աղյուսակի տեսքով՝ յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 30-րդ օրվանը հաջորդող 3 օրվա ընթացքում:

Լիովին համապատասխանում է:

7.3. ԿԲ-ն նախապես հայտարարված ժամկետներում պետք է հասարակությանը տրամադրի հաշվեկշիռները:

ՀՀ ԿԲ հաշվեկշիռների հրապարակման մասին տե՛ս 3.2 և 3.2.1 կետերում:

Լիովին համապատասխանում է:

7.4. Ֆինանսական գործակալությունների կողմից ընդունված նորմատիվ ակտերը պետք է հրապարակային լինեն:

ՀՀ ԿԲ կողմից ընդունված նորմատիվ ակտերի հրապարակայնության ապահովման մասին տե՛ս 3.4 կետում:

Լիովին համապատասխանում է:

8. Ֆինանսական գործակալությունների հաշվետվելիությունը և բարեխղճության երաշխիքները

8.1. Ֆինանսական գործակալությունների պաշտոնյաները պետք է պատրաստ լինեն պետական լիազորված մարմնին հաշվետվություն ներկայացնելու ֆինանսական քաղաքականության իրականացման վերաբերյալ, բացառելու կազմակերպության կողմից իրականացվող քաղաքականության նպատակը(ները), նպատակներին հասնելու իրենց գործողությունները, իսկ նպատակահարմարության դեպքում՝ կարծիքներ փոխանակելու ֆինանսական համակարգի իրավիճակի վերաբերյալ:

Տվյալ կետը կիրառելի է այն երկրների համար, որտեղ գործում է վերահսկողության առանձնացված մարմին:

Հայաստանում այս պահանջն իրականացվում է ՀՀ ԿԲ կողմից՝ դրամավարկային քաղաքականության ծրագրերի, ֆինանսական ոլորտի վերաբերյալ տարեկան հաշվետվությունների, ԿԲ հայտարարությունների, ֆինանսական շուկայի մասնակիցների հետ հանդիպումների միջոցով:

Կենտրոնական բանկը յուրաքանչյուր տարի՝ մինչև մայիսի 1-ը, Ազգային ժողով է ուղարկում և "Ազգային ժողովի կանոնակարգ" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ու ժամկետում Ազգային ժողովի նիստում ներկայացնում է ընթացիկ տարվա առաջին եռամսյակում հաստատված դրամավարկային քաղաքականության ծրագիրը, ինչպես նաև նախորդ տարվա դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունը, որի ընթացքում ԿԲ պաշտոնյաները պատասխանում են ֆինանսական քաղաքականությանը վերաբերող հարցերին և կարծիքներ են փոխանակում ֆինանսական համակարգի իրավիճակի մասին:

Լիովին համապատասխանում է:

8.2. Ֆինանսական գործակալությունը հնարավորության դեպքում պետք է հրապարակի գործառնությունների վերաբերյալ աուդիտորների կողմից հաստատված ֆինանսական հաշվետվությունը՝ նախապես սահմանված ժամկետներում:

Անկախ աուդիտորների կողմից հաստատված ՀՀ ԿԲ ֆինանսական հաշվետվության հրապարակման մասին տե՛ս կետ 4.2-ում:

Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի (հոդվածի 24)՝ Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի գործունեությունը յուրաքանչյուր տարի ստուգվում է օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով՝ աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անկախ աուդիտորական կազմակերպության կողմից: Անկախ աուդիտորական կազմակերպության եզրակացությունը և ստուգված տարեկան ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են ՀՀ ԿԲ: Հիմնադրամը պարտավոր է ֆինանսական տարվա ավարտից հետո՝ քառամսյա ժամկետում մամուլում հրապարակել անկախ աուդիտորական կազմակերպության համառոտ եզրակացությունը:

Լիովին համապատասխանում է:

8.2.1. Ֆինանսական հաշվետվությունները պետք է վերստուգվեն արտաքին աուդիտորի կողմից: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և հաշվետվության վերաբերյալ վերապահումները պետք է բացահայտվեն և կազմեն աուդիտորական եզրակացության անբաժանելի մաս:

ՀՀ ԿԲ տարեկան ֆինանսական հաշվետվությունները վերստուգվում են արտաքին աուդիտորի կողմից և հրապարակվում են համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի (հոդվածներ 15, 16, 17): Տե՛ս կետ 4.2.1-ում:

Լիովին համապատասխանում է:

8.2.2. Ներքին կառավարման գործընթացները, ինչպես նաև ներքին աուդիտի գործունեության կանոնակարգումը պեղք է հրապարակային լինեն:

ՀՀ ԿԲ ներքին կառավարման գործընթացները կարգավորվում են ՀՀ օրենքներով, ներքին կանոնակարգող ակտերով (որոնք տեղադրված են ԿԲ տնային էջում): Ինչ վերաբերում է ներքին աուդիտի գործունեությանը, ապա այն կարգավորվում է «ՀՀ ԿԲ մասին» օրենքով, ԿԲ վերստուգիչ խմբի կանոնադրությամբ և ԿԲ վերստուգիչ խմբի գործունեությունը կանոնակարգող ակտերով (տե՛ս մաս 4.2.2): Տե՛ս կետ 4.2.2:

Լիովին համապատասխանում է:

8.3. Ֆինանսական գործակալությունների գործառնական եկամուտների և ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը պեղք է հրապարակվի:

Տարեկան կտրվածքով հրապարակվում են ՀՀ ԿԲ, «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» հաշվետվությունները, որոնց տարր է հանդիսանում գործառնական եկամուտների և ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը: Նշված հաշվետվությունները հրապարակային են և տեղադրվում են ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում:

Լիովին համապատասխանում է:

8.4. Հասարակությանը պեղք է տեղեկացվի ֆինանսական գործակալության պաշտոնյաների և աշխատակիցների անձնական ֆինանսական հարցերը կանոնակարգող ստանդարտների և շահերի բախումը կանխող կանոնների մասին:

Տե՛ս 4.4 կետի պատասխանը:

Լիովին համապատասխանում է:

8.4.1. Հասարակությանը պետք է տեղեկացվի աշխատանքային պարտականությունների կատարման ընթացքում ֆինանսական գործակալության պաշտոնյաների և աշխատակիցների իրավական պաշտպանվածության մասին:

Նմանատիպ մեխանիզմ ՀՀ-ում բացակայում է: Տես 4.4.1 կետի պատասխանը:

Կիրառելի չէ:

Հավելված

ՀՀ կենտրոնական բանկի թափանցիկության մասին նյութի հավելվածներում կամ տողատակերում ներառվող օրենքներ, որոշումներ, կանոնակարգող և տեղեկատվական բնույթի այլ փաստաթղթեր

	Օրենսդրական, ենթաօրենսդրական ակտերի անվանումը	Հոդվածը/ կետը և դրույթի շարադրանքը
1.	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խնդիրների, նպատակների և պատասխանատվության շրջանակների հստակությունը դրամավարկային քաղաքականություն իրականացնելիս	
1.1	ՀՀ Սահմանադրություն, հոդված 83.3	«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հիմնական խնդիրը Հայաստանի Հանրապետությունում գների կայունությունն ապահովելն է: Կենտրոնական բանկը մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագրերը»:
	«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 4	Կենտրոնական բանկի հիմնական խնդիրը 1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հիմնական խնդիրը Հայաստանի Հանրապետությունում գների կայունությունն ապահովելն է: Իր հիմնական խնդիրն իրագործելու նպատակով Կենտրոնական բանկի գործառույթն է հանդիսանում գների կայունության ապահովմանն ուղղված միջոցների ձեռնարկումը: Իր հիմնական խնդիրն իրագործելու նպատակով Կենտրոնական բանկը մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագրերը:
	ՀՀ ԿԲ զարգացման տեսլական (հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 24.06.2008թ. թիվ 179/Ա որոշմամբ)	http://www.cba.am/CBA_SITE/downloads/verluc/teslakan_09_11.pdf
	«ՀՀ ԿԲ կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության ընդունման	http://www.cba.am/CBA_SITE/downloads/dram/gnach/1_gnach_haytarar.pdf

<p>վերաբերյալ» հայտարարություն «ՀՀ ԿԲ կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության հիմնավորում» փաստաթուղթ (19.12.2005թ.)</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/dram/gnach/gnach.pdf</p>
<p>«ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ» փաստաթուղթ (հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 15.12.2009թ. 372Ա որոշմամբ)</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/Press_release_ARM/vor_372_a.pdf</p>
<p>«ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ու ՀՀ կենտրոնական բանկի միջև համագործակցության որդեգրած սկզբունքների վերաբերյալ» համաձայնագիր (կնքված 13.10.2006թ.)</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/dram/gnach/hamacajnagir.pdf</p>
<p>ՀՀ կառավարության 19.08.2004թ «ՀՀ իշխանության որոշ մարմինների և ՀՀ կենտրոնական բանկի միջև տեղեկատվություն փոխանակելու մասին» թիվ 1354-Ն որոշում</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/dram/gnach/1354.pdf</p>
<p>1.1.1 ՀՀ Սահմանադրություն, հոդված 83.3</p>	<p>Տե՛ս սույն հավելվածի 1.1 կետը</p>
<p>«ՀՀ կենտրոնական</p>	<p>Տե՛ս սույն հավելվածի 1.1 կետը՝ «Կենտրոնական</p>

բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 4	բանկի հիմնական խնդիրը»
«ՀՀ ԿԲ կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության ընդունման վերաբերյալ» հայտարարություն	http://www.cba.am/CBA_SITE/downloads/dram/gnach/1_gnach_haytarar.pdf
«ՀՀ ԿԲ կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության հիմնավորում» փաստաթուղթ (19.12.2005թ.)	http://www.cba.am/CBA_SITE/downloads/dram/gnach/gnach.pdf
1.1.2 ՀՀ Սահմանադրություն, հոդված 83.3	<p>Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հիմնական խնդիրը Հայաստանի Հանրապետությունում գների կայունությունն ապահովելն է: Կենտրոնական բանկը մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագրերը:</p> <p>Կենտրոնական բանկը թողարկում է Հայաստանի Հանրապետության արժույթը՝ հայկական դրամը: Կենտրոնական բանկը Սահմանադրությամբ և օրենքով իրեն վերապահված խնդիրները և գործառնություններն իրականացնելիս անկախ է:</p> <p>Կենտրոնական բանկի նախագահը նշանակվում է Հանրապետության Նախագահի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի կողմից՝ վեց տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել Կենտրոնական բանկի նախագահ:</p> <p>Օրենքով սահմանված դեպքերում Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ Հանրապետության Նախագահի առաջարկությամբ կարող է պաշտոնանկ անել Կենտրոնական բանկի նախագահին:</p>
«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 4	Տե՛ս սույն հավելվածի 1.1 կետը «Կենտրոնական բանկի հիմնական խնդիրը»

<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 5</p>	<p>1. Կենտրոնական բանկի խնդիրներն են՝</p> <p>ա) Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունության և բնականոն գործունեության ապահովումը, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելը.</p> <p>բ) գործուն վճարահաշվարկային համակարգ ստեղծելն ու զարգացնելը.</p> <p>գ) Հայաստանի Հանրապետության արժույթի թողարկումը, դրամաշրջանառության կազմակերպումը և կարգավորումը.</p> <p>դ) փողերի լվացման և ահաբեկչություն ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպումն ու կարգավորումը.</p> <p>ե) արժեթղթերում ներդրողների պաշտպանության, շուկայում արժեթղթերի արդար գնագոյացման համակարգի ձևավորման ու պահպանման, արժեթղթերի արդար, թափանցիկ և վստահելի շուկայի կանոնակարգված և բնականոն գործունեության և զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը.</p> <p>զ) ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության համար անհրաժեշտ պայմանների ապահովումը:</p>
	<p>2. Իր խնդիրներն իրագործելու նպատակով Կենտրոնական բանկը սույն օրենքով սահմանված կարգով՝</p> <p>ա) իրականացնում է Կառավարության բանկային սպասարկումը.</p> <p>բ) հանդիսանում է Կառավարության ֆինանսական գործակալն ու խորհրդատուն.</p> <p>գ) լիցենզավորում է բանկերը, օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև այլ անձանց, կարգավորում և վերահսկում է դրանց գործունեությունը.</p> <p>դ) որպես վերջին ատյանի վարկատու՝ վարկեր է տրամադրում բանկերին.</p> <p>ե) կարգավորում և վերահսկում է վճարահաշվարկային համակարգի, այդ թվում՝</p>

		<p>վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների, որոնք բանկ չեն, գործունեությունը.</p> <p>զ) տիրապետում, օգտագործում և տնօրինում է Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստները.</p> <p>է) իրականացնում է դրամավարկային և ֆինանսական վիճակագրության հավաքագրումը, ամփոփումը և հրապարակումը.</p> <p>ը) իրականացնում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ տեղեկությունների հավաքագրումը, համակարգումն ու վերլուծությունը, տեղեկությունների փոխանակումը և տրամադրումը ներպետական իրավասու մարմիններին և միջազգային կազմակերպություններին, իսկ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում նաև այլ պետությունների իրավասու մարմիններին:</p>
<p>1.1.3</p>	<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 9</p>	<p>Ավանդային և վարկային գործառնությունները</p> <p>1. Կենտրոնական բանկը կարող է դրամով կամ արտարժույթով ցպահանջ կամ ժամկետային ավանդներ ընդունել կամ նյութական արժեքներ ի պահ ընդունել միայն Հայաստանի Հանրապետության պետական մարմիններից և բանկերից, օտարերկրյա պետությունների կենտրոնական և այլ բանկերից, միջազգային ֆինանսական և վարկային կազմակերպություններից, իսկ բացառիկ դեպքերում՝ Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ, նաև այլ անձանցից, այնպես էլ նրանց հանձնարարությամբ կամ համաձայնությամբ տիրապետել և օգտագործել ավանդներն ու նյութական արժեքները:</p>
		<p>2. Կենտրոնական բանկն իր խնդիրներն իրագործելու նպատակով կարող է միջազգային ֆինանսական կազմակերպություններից, այլ պետությունների կառավարություններից, կենտրոնական և առաջնակարգ այլ բանկերից ստանալ վարկեր:</p>
	<p>«ՀՀ կենտրոնական</p>	<p>Բաց շուկայական գործառնությունները</p>

<p>բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 10</p>	<p>1. Կենտրոնական բանկը դրամավարկային քաղաքականություն իրականացնելու նպատակով, սույն օրենքով սահմանված կարգով, կարող է ֆինանսական շուկայում ձեռք բերել և օտարել ինչպես պետական, այնպես էլ հուսալի այլ արժեթղթեր:</p> <p>2. Կենտրոնական բանկը չի կարող առաջնային տեղաբաշխման ընթացքում իր հաշվին ձեռք բերել Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր: Պետական արժեթղթերի առաջնային տեղաբաշխման ընթացքում Կենտրոնական բանկը կարող է ձեռք բերել դրանք այլ պետությունների կենտրոնական կամ այլ առաջնակարգ բանկերի հանձնարարությամբ և նրանց հաշվին:</p> <p>3. Ելնելով իր հիմնական խնդրից՝ Կենտրոնական բանկը, բաց շուկայական գործառնություններ իրականացնելու նպատակով, կարող է թողարկել կարծաժամկետ՝ մինչև մեկ տարի մարման ժամկետով արժեթղթեր՝ Կառավարության լիազորված մարմնի հետ համաձայնեցված կարգով:</p>
<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 37</p>	<p>Բանկերի պարտադիր պահուստները</p> <p>1. Կենտրոնական բանկը սահմանում է բանկերի կողմից ներգրավված ցպահանջ, ժամկետային և խնայողական ավանդների և այլ պարտավորությունների դիմաց Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների չափը, պահուստավորման և պահուստավորված միջոցների օգտագործման կարգը:</p> <p>2. Նույնանման գործունեություն իրականացնող բոլոր բանկերի, ինչպես նաև բանկերի կողմից ստանձնած նույնանման բոլոր պարտավորությունների համար սահմանվում է պարտադիր պահուստավորման նույն կարգը:</p> <p>3. Կենտրոնական բանկը կարող է օտարերկրյա բանկերի Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի համար սահմանել պարտադիր պահուստավորման հատուկ կարգ, որը պետք է տարածվի օտարերկրյա բանկերի բոլոր մասնաճյուղերի վրա:</p>

	<p>4. Պարտադիր պահուստավորման ենթակա միջոցների, ինչպես նաև պարտադիր պահուստավորման ենթակա միջոցների չափը գերազանցող մասի դիմաց վճարվող տոկոսադրույքների չափը սահմանում է Կենտրոնական բանկի նախագահը:</p> <p>Սույն մասով սահմանված տոկոսադրույքների չափը պետք է նույնը լինի նույնանման գործունեություն իրականացնող բոլոր բանկերի, ինչպես նաև բանկերի կողմից ստանձնած նույնանման բոլոր պարտավորությունների համար:</p> <p>5. Պարտադիր պահուստավորումը սահմանված կարգով չկատարելու դեպքում Կենտրոնական բանկը բանկից տույժ է գանձում՝ Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած չափով, բայց ոչ ավելի, քան միջին հաշվով պակաս պահուստավորված յուրաքանչյուր օրվա համար պակաս պահուստավորված գումարի մեկ տոկոսը:</p> <p>6. Կենտրոնական բանկի խորհուրդը բանկի, Կենտրոնական բանկի նախագահի, վերստուգող ստորաբաժանման առաջարկության հիման վրա կամ իր նախաձեռնությամբ կամ բանկի հետ սույն օրենքի 39.10 հոդվածով նախատեսված պայմանագրի կնքմամբ բանկի նկատմամբ նշանակված տույժի գանձումը հետաձգելու, տույժի չափը նվազեցնելու կամ տույժի գանձման ժամանակացույց սահմանելու դրոշում է ընդունում, եթե տույժի գանձումը կարող է հանգեցնել բանկի՝ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված չափանիշներով հիմնավորված ծանր ֆինանսական կացությանը:</p>
<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 38</p>	<p>Բանկերի վարկավորումը</p> <p>1. Կենտրոնական բանկը, որպես վերջին ատյանի վարկատու, կարող է իր կողմից սահմանված կարգով, վեց ամիս մարման ժամկետը չգերազանցող վարկեր տրամադրել բանկերին:</p> <p>Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի, ամբողջությամբ վերցրած, միասնականությունը և սահունությունը պահպանելու նպատակով, Կենտրոնական</p>

	<p>բանկը կարող է տրամադրել վեց ամսից ավելի ժամկետ ունեցող վարկեր, որոնց մարման ժամկետը չի կարող գերազանցել հինգ տարին:</p> <p>1.1. Սույն հոդվածով սահմանված Կենտրոնական բանկի կողմից բանկերին վարկավորելու վերաբերյալ որոշումներն ընդունում է Կենտրոնական բանկի խորհուրդը:</p> <p>2. Կենտրոնական բանկի կողմից բանկերին տրամադրվող վարկերը պետք է ապահովված լինեն՝</p> <p>ա) պետական արժեթղթերով.</p> <p>բ) ոչ ավելի, քան ինը ամիս մարման ժամկետ ունեցող հուսալի չեկերով և մուրհակներով.</p>
	<p>գ) Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ՝ այլ արժեթղթերով.</p> <p>դ) ոսկուց և այլ թանկարժեք մետաղներից պատրաստված մետաղադրամներով (այդ թվում՝ հուշադրամներով) և ստանդարտացված ձուլակտորներով.</p> <p>ե) Կենտրոնական բանկում, ինչպես նաև Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ՝ այլ բանկում հայկական դրամով, կայուն արտարժույթով կամ սույն մասի «ա», «բ», «գ» և «դ» կետերում թվարկված արժեթղթերով և թանկարժեք մետաղներով ներդրված ավանդներով:</p> <p>3. Առանձին դեպքերում, Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի, ամբողջությամբ վերցրած, կայունությունն ու զարգացումն ապահովելու նպատակով, Կենտրոնական բանկն իր խորհրդի կողմից սահմանված կարգով կարող է բանկերին տրամադրել այլ միջոցներով ապահովված կամ առանց ապահովման (բլանկային) վարկեր:</p> <p>4. Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է առանձին տեսակի վարկերի համար վարկավորման տարբերակված տոկոսադրույքներ և վարկավորման հատուկ կարգ և պայմաններ սահմանել:</p> <p>5. Առանձին դեպքերում Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է երաշխավորել բանկերի պատավորությունները՝ դրանց զարգացման և հատուկ այլ ծրագրերի իրագործման նպատակով:</p>

	<p>բանկերից և այլ ներդրողներից փոխառություններ ձեռք բերելու համար, եթե ա) տվյալ փոխառության համար բանկի կողմից վճարվող տոկոսադրույքը էականորեն ցածր է Հայաստանի Հանրապետությունում նման փոխառության միջին շուկայական տոկոսադրույքից.</p> <p>բ) տվյալ փոխառությունը երկարաժամկետ է.</p> <p>գ) տվյալ փոխառության օգտագործման ծրագիրն արժանացել է Կենտրոնական բանկի խորհրդի հավանությանը:</p> <p>Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է երաշխիքների տրամադրման լրացուցիչ պայմաններ սահմանել:</p>
<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 51</p>	<p>Կենտրոնական բանկի արժույթային գործառնությունները</p> <p>1. Կենտրոնական բանկը կարող է տիրապետել, օգտագործել և տնօրինել՝</p> <p>ա) ոսկուց և այլ թանկարժեք մետաղներից պատրաստված մետաղադրամներ և ստանդարտացված ձուլակտորներ.</p>
<p>«ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ» փաստաթուղթ՝ հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 15.12.2009թ. 372Ա որոշմամբ</p>	<p>բ) արտարժույթ.</p> <p>գ) այլ պետությունների կենտրոնական և այլ առաջնակարգ բանկերի, միջազգային ֆինանսական կազմակերպությունների, ինչպես նաև օտարերկրյա առաջնակարգ բանկերի թողարկած կամ երաշխավորած արժեթղթեր:</p> <p>2. Կենտրոնական բանկը կարող է սահմանել այն փոխարժեքը, որով գնում կամ վաճառում է արտարժույթը, կամ այլ գործարքներ է իրականացնում արտարժույթով:</p> <p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/Press_release_ARM/vor_372_a.pdf</p>

<p>«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկվող կարճաժամկետ պետական պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգը» հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 7.04.2005թ. 144-Ն որոշմամբ</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/monetary/karger/kb_partatoms.pdf</p>
<p>1.1.4 ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 142, կետ 4</p>	<p>4. Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա արժույթի օգտագործման դեպքերը, կարգը և պայմանները սահմանվում են օրենքով:</p>
<p>ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 143</p>	<p>Արժույթային արժեքներ համարվող գույքի տեսակները և դրանցով կնքվող գործարքների կարգը սահմանվում են արժույթային կարգավորման ու արժույթային վերահսկողության մասին օրենքով և դրան համապատասխան ընդունված այլ իրավական ակտերով:</p>
<p>ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 356, կետ 4</p>	<p>4. Հայաստանի Հանրապետության տարածքում պարտավորություններով հաշվարկներ կատարելիս օտարերկրյա արժույթի, ինչպես նաև օտարերկրյա արժույթով վճարային փաստաթղթերի օգտագործում թույլատրվում է օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:</p>
<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 5 «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 48</p>	<p>Տե՛ս սույն հավելվածի 1.1.2 կետը՝ «Իր խնդիրներն իրագործելու նպատակով Կենտրոնական բանկը սույն օրենքով սահմանված կարգով...» Կենտրոնական բանկը որպես արժույթային գործակալ 1. Կենտրոնական բանկը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության արժույթային գործակալը և լիազորված է իրականացնելու արժույթային քաղաքականություն: 2. Համաձայն սույն օրենքի դրույթների՝ Կենտրոնական բանկը կարող է հանդես գալ հայտարարություններով և տրամադրել անհրաժեշտ</p>

	տեղեկատվություն՝ իր կողմից իրականացվող արժույթային քաղաքականության վերաբերյալ:
<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 49</p>	<p>Արտարժույթային կարգավորում</p> <p>1. Կենտրոնական բանկը սահմանում է արտարժույթային գործառնությունների իրականացման, արտարժույթի նկատմամբ հայկական դրամի փոխարժեքի որոշման, արտարժույթի առջ ու վաճառքի գործառնությունների լիցենզավորման կարգը:</p> <p>2. Կենտրոնական բանկն իրավունք ունի՝</p> <p>ա) սահմանել արժույթային գործառնությունների իրականացման կարգն ու պայմանները, ընդունել արժույթային գործառնությունները կարգավորող որոշումներ և կանոններ.</p> <p>բ) հսկել և կարգավորել արժույթային գործառնություններ իրականացնող դիլերների-բրոքերների, ներառյալ բանկերի, գործունեությունը.</p> <p>գ) սահմանել արժույթային դիլերների-բրոքերների, ներառյալ բանկերի, ներդրումային ընկերությունների և ապահովագրողների արտարժույթի տնօրինման նորմատիվը.</p> <p>դ) սահմանել հայկական դրամի փոխարժեքի որոշման մեթոդները.</p> <p>ե(իրականացնել օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:</p>
<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 51</p>	<p>Տե՛ս սույն հավելվածի 1.1.3 կետը՝</p> <p>«Կենտրոնական բանկի արժույթային գործառնությունները»</p>
<p>«Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենք, հոդված 4, կետ 2</p>	<p>Ընթացիկ արժույթային, կապիտալի շարժի ու ֆինանսական արժույթային գործարքների իրականացումը</p> <p>Կենտրոնական բանկը ֆինանսական համակարգի կայունության պահպանման, հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի, տնտեսական ռիսկերի կանխարգելման և վիճակագրական նպատակներով կարող է սահմանել կապիտալի շարժի ու ֆինանսական արժույթային գործարքների իրականացման համար կարգ և պայմաններ:</p>
<p>«Արժույթային կարգավորման և</p>	<p>Արժույթային արժեքների փոխադրումը,</p>

<p>արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենք, հոդված 5, կետ 2</p>	<p>առաքումը, ներմուծումը և արտահանումը</p> <p>2. Կենտրոնական բանկը ֆինանսական համակարգի կայունությունն ապահովելու, տնտեսական ռիսկերը կանխարգելելու, հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կամ վիճակագրական նպատակներով նորմատիվ իրավական ակտով ՀՀ Կառավարության լիազորված մարմնի համաձայնությամբ կարող է սահմանել արժույթային արժեքների փոխադրման, առաքման, ներմուծման, արտահանման և հայտարարագրման կարգ և պայմաններ:</p>
<p>«Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենք, հոդված 8</p>	<p>Արժույթային շուկաներում ձևավորված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքի հրապարակումը</p> <p>Կենտրոնական բանկը հրապարակում է արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը:</p>
<p>«Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենք, հոդված 9</p>	<p>Արժույթային վերահսկողությունը և հսկողությունը</p> <p>1. Հայաստանի Հանրապետությունում արժույթային վերահսկողությունն իրականացնում են արժույթային վերահսկողության մարմինները, իսկ արժույթային հսկողությունը՝ արժույթային գործակալները: Հայաստանի Հանրապետությունում արժույթային վերահսկողության մարմիններ են սույն հոդվածի 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերում նշված մարմինները: Արժույթային հսկողության գործակալներ են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը, վարկային կազմակերպությունները, դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունները: Արժույթային հսկողության գործակալները հաշվետու են Կենտրոնական բանկին՝ Կենտրոնական բանկի սահմանած կարգով:</p> <p>2. Արժույթային վերահսկողության մարմինները և արժույթային հսկողության գործակալներն իրենց իրավասության սահմաններում վերահսկողու-</p>

	<p>թյուն և հսկողություն են իրականացնում Հայաստանի Հանրապետությունում ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների կողմից իրականացվող արժույթային գործարքների, Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին այդ գործարքների համապատասխանության, լիցենզիաների պայմանների պահպանման նկատմամբ: Արժույթային հսկողության գործակալների կողմից արժույթային հսկողություն իրականացվելու կարգը և պայմանները սահմանում է Կենտրոնական բանկի խորհուրդը:</p>
	<p>3. Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված անձանց՝ սույն օրենքի և սույն օրենքի հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջների, լիցենզիաների պայմանների պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Կենտրոնական բանկը՝ տեղերում կամ հեռակա ստուգումների միջոցով՝ "Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:</p> <p>4. Պետական ֆինանսների կառավարման լիազոր մարմնի կողմից լիցենզավորված անձանց՝ սույն օրենքի և սույն օրենքի հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է պետական ֆինանսների կառավարման լիազոր մարմինը:</p> <p>5. Սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում չնշված անձանց կողմից սույն օրենքի և սույն օրենքի հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված մարմինը՝ "Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:</p> <p>6. Կենտրոնական բանկը սահմանում է</p>

	<p>արժույթային գործարքների հաշվառման, դրանց վերաբերյալ հաշվետվության, փաստաթղթերի և վիճակագրության միասնական ձևեր, ինչպես նաև դրանք վարելու և ներկայացնելու կարգն ու ժամկետները:</p>
<p>«Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենք, հոդված 10</p>	<p>Պատասխանատվությունը</p> <p>1. Կենտրոնական բանկի լիցենզավորած անձանց կողմից արժույթային հարաբերությունները կարգավորող օրենքների և դրանց հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջը (պահանջները) առաջին անգամ խախտելու դեպքում Կենտրոնական բանկը տալիս է նախազգուշացում՝ խախտումը վերացնելու կամ ապագայում նման խախտում թույլ չտալու հանձնարարականով:</p>
	<p>2. Կենտրոնական բանկի լիցենզավորած անձանց կողմից արժույթային օրենքների և դրանց հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջի (պահանջների) խախտում թույլ տալու համար պատասխանատվության ենթարկվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, արժույթային հարաբերությունները կարգավորող օրենքների և դրանց հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջը (պահանջները) կրկին խախտելու դեպքում Կենտրոնական բանկը մինչև մեկ տարի ժամկետով կասեցնում է գործունեության լիցենզիան կամ նշանակում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով:</p> <p>3. Կենտրոնական բանկի լիցենզավորած անձանց կողմից արժույթային օրենքների և դրանց հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջի (պահանջների) խախտում թույլ տալու համար պատասխանատվության ենթարկվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, արժույթային հարաբերությունները կարգավորող օրենքների և դրանց հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջը (պահանջները) երրորդ կամ ավելի անգամ խախտելու դեպքում Կենտրոնական բանկը ուժը կորցրած է ճանաչում գործունեության լիցենզիան կամ նշանակում է տուգանք՝ նվազագույն</p>

	<p>աշխատավարձի չորսհազարապատիկի չափով:</p> <p>4. Պետական ֆինանսների կառավարման լիազոր մարմնի կողմից լիցենզավորած անձանց նկատմամբ սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված պատասխանատվության միջոցները կիրառում է պետական ֆինանսների կառավարման լիազոր մարմինը:</p> <p>5. Սույն հոդվածի 1-ին և 4-րդ մասերում չնշված ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ անձանց կողմից արժույթային հարաբերությունները կարգավորող օրենքների և դրանց հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջների խախտումների համար կառավարության լիազորած մարմինը կիրառում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված պատասխանատվության միջոցներ:</p> <p>6. Արտարժույթի դիլերային առուվաճառք իրականացնող անձանց (արժույթային դիլերների), արտարժույթի առուվաճառք իրականացնող անձանց (փոխանակման կետերի), արտարժույթի առուվաճառքի սակարկություններ կազմակերպող անձանց կողմից իրենց հաճախորդներին արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունները հավաստիացնող փաստաթուղթ (անդորրագիր) չտրամադրելու դեպքում Կենտրոնական բանկը նշանակում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի չորսհազարապատիկի չափով, կամ ուժը կորցրած է ճանաչում գործունեության լիցենզիան:</p> <p>Հաճախորդներին արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունները հավաստիացնող փաստաթուղթ (անդորրագիր) չտրամադրելու համար բանկերը և վարկային կազմակերպությունները պատասխանատվություն են կրում «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին» և «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:</p>
--	---

	<p>7.1. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 6-րդ մասերով նախատեսված դեպքերում Կենտրոնական բանկը կարող է, որպես լրացուցիչ պատասխանատվության միջոց, զրկել լիցենզավորված անձի ղեկավարին կամ լիցենզավորված անձի աշխատակցին Կենտրոնական բանկի տված որակավորման վկայականից, որը կարող է կիրառվել յուրաքանչյուր պատասխանատվության միջոցի հետ միասին:</p> <p>8. Սույն հոդվածով սահմանված պատասխանատվության միջոցները Կենտրոնական բանկը կիրառում է "Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:</p> <p>9. Եթե անձը սույն հոդվածով սահմանված կարգով պատասխանատվությունը կրելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, արժույթային հարաբերությունները կարգավորող օրենքների և դրանց հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջների նոր խախտում թույլ չի տալիս, ապա նա համարվում է սույն հոդվածով սահմանված պատասխանատվության չենթարկված:</p> <p>Սույն օրենքի և դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի իմաստով պատասխանատվություն կրելու պահ է համարվում անձի կողմից իր նկատմամբ պատասխանատվություն կիրառելու մասին որոշման պահանջները կատարելը:</p>
	<p>10. Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառք իրականացնող անձի (արժույթային դիլերի), արտարժույթի առուվաճառք իրականացնող անձի (փոխանակման կետի), արտարժույթի առուվաճառքի սակարկություններ կազմակերպող անձի գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու դեպքում (լիցենզիայի պայմանները կամ արժույթային հարաբերությունները կարգավորող օրենքների և դրանց հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջները խախտելու համար) անձը (այդ թվում՝ լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու պահին տվյալ իրավաբանական անձի կանոնադրական</p>

	<p>կամ բաժնեհավաք կապիտալում 50 և ավելի տոկոս մասնակցություն ունեցող մասնակիցը) իրավունք չունի գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու պահից, լիցենզավորված անձի ղեկավարի կամ լիցենզավորված անձի աշխատակցի՝ Կենտրոնական բանկի տված որակավորման վկայականից զրկելու պահից երեք տարի ժամկետով որևէ կերպ (ուղղակիորեն կամ իրավաբանական անձ հիմնադրելով կամ իրավաբանական անձի կանոնադրական հիմնադրամում որևէ մասնակցություն ունենալով կամ առանց մասնակցության իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունենալով կամ արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի, արտարժույթի առուվաճառքի և արտարժույթի առուվաճառքի սակարկությունների գործունեություն իրականացնող անձանց կողմից որպես աշխատակից ներգրավվելով) իրականացնելու արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի, արտարժույթի առուվաճառքի և արտարժույթի առուվաճառքի սակարկությունների գործունեություն:</p>
<p>«ՀՀ ԿԲ արժույթային քաղաքականության սկզբունքների մասին» ՀՀ ԿԲ հայտարարություն (հավանության է արժանացել ՀՀ ԿԲ վարչության 19.07.1996թ. թիվ 122 որոշմամբ)</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/dram/haitarar.pdf</p>
<p>«Արժույթային արժեքների փոխադրման, առաքման, ներմուծման, արտահանման և հայտարարագրման կարգ» (հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 29.07.2005թ. թիվ 386-Ն որոշմամբ)</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/fmc/low/Ariutain.pdf</p>
<p>«ՀՀ տարածքում միջազգային</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/dram/38</p>

<p>կազմակերպությունների կողմից աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման համար արտարժույթով վճարումների իրականացման կարգ» (հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 29.07.2005թ. թիվ 387-Ն որոշմամբ)</p>	<p>7N.pdf</p>
<p>«Կարճաժամկետ վարկերի ժամկետայնությունը և փոքրածավալ գումարների չափը սահմանելու մասին» ՀՀ ԿԲ խորհրդի 29.07.2005թ. թիվ 389-Ն որոշում</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/dram/389N.pdf</p>
<p>1.1.5 «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 6</p>	<p>Դրամավարկային քաղաքականության ծրագիրը</p> <p>1. Եռամսյակը մեկ անգամ Կենտրոնական բանկը հաջորդ 12 ամիսների համար հրապարակում է դրամավարկային քաղաքականության ծրագիր, որը կրում է ուղեցուցային բնույթ:</p> <p>2. Դրամավարկային քաղաքականության ծրագրերը ներառում են՝</p> <ul style="list-style-type: none"> ա) գնաճի կանխատեսումները. բ) դրամավարկային քաղաքականության ուղղությունները. գ) օրենքով սահմանված խնդիրների իրականացման համար Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած անհրաժեշտ այլ դրույթներ:
<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 17</p>	<p>Տարեկան և եռամսյակային հաշվետվությունները</p> <p>1. Կենտրոնական բանկը մինչև յուրաքանչյուր տարվա մայիսի 1-ը հրապարակում է նախորդ ֆինանսական տարվա տարեկան հաշվետվությունը, որը ներառում է՝</p> <ul style="list-style-type: none"> ա) աուդիտորական կազմակերպության հաստատած ֆինանսական հաշվետվությունը. բ) Կենտրոնական բանկի կառավարման

	<p>վերաբերյալ դրույթները:</p> <p>Կենտրոնական բանկի տարեկան ֆինանսական հաշվետվության վերաբերյալ Վերահսկիչ պալատը տալիս է եզրակացություն:</p> <p>1.1. Կենտրոնական բանկը մինչև յուրաքանչյուր տարվա մայիսի 1-ը կազմում և Ազգային ժողով է ուղարկում սույն օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հաշվետվությունը:</p> <p>2. Կենտրոնական բանկը պարբերաբար, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ հրապարակում է, ինչպես նաև Ազգային ժողովին, կառավարությանը և շահագրգիռ պետական այլ մարմիններին է ուղարկում Հայաստանի Հանրապետության ֆինանսական կայունության վերաբերյալ հաշվետվություն, որի մեջ ներառվում է բանկային, վարկային, ապահովագրական և արժեթղթերի շուկաների վերլուծությունը, ինչպես նաև տեղեկատվություն այդ շուկաների կարգավորման և վերահսկողության ուղղությամբ իրականացված միջոցառումների վերաբերյալ:</p> <p>Կենտրոնական բանկը պարբերաբար, բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ հրապարակում է Կենտրոնական բանկի նախորդ հաշվետու ժամանակաշրջանի հաշվեկշիռը:</p>
	<p>3. Կենտրոնական բանկը, յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո, նախորդող տասներկամսյա ժամանակաշրջանի համար, դրան հաջորդող երկու ամսվա ընթացքում հրապարակում է Կենտրոնական բանկի խորհրդի հաստատած դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունը:</p> <p>4. Կենտրոնական բանկը յուրաքանչյուր տարի՝ մինչև մայիսի 1-ը, Ազգային ժողով է ուղարկում և "Ազգային ժողովի կանոնակարգ" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ու ժամկետում Ազգային ժողովի նիստում ներկայացնում է ընթացիկ տարվա առաջին եռամսյակում հաստատված դրամավարկային քաղաքականության ծրագիրը, ինչպես նաև նախորդ տարվա դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունը:</p>

	<p>5. Սույն հոդվածով սահմանված հաշվետվություններում կարող են ներառվել նաև Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած այլ դրույթներ կամ տեղեկատվություն:</p>
<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 50</p>	<p>Արտարժույթային գործառնությունների վերաբերյալ հաշվետվությունը</p> <p>1. Կենտրոնական բանկն իրավունք ունի իր կողմից լիցենզավորված և վերահսկվող անձանցից պահանջելու պարբերական հաշվետվություններ՝ վերջիններիս կողմից իրականացվող արժույթային գործառնությունների վերաբերյալ:</p> <p>2. Կենտրոնական բանկը սահմանում է արտարժույթային գործառնությունների վերաբերյալ հաշվետվությունների ձևերը և դրանց ներկայացման կարգը:</p>
<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 52, կետ 3</p>	<p>Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստները</p> <p>3. Կենտրոնական բանկը յուրաքանչյուր եռամսյակը մեկ կառավարությանն է ներկայացնում միջազգային պահուստների վիճակի և կազմի մասին տեղեկատվություն և հրապարակում է այն: Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների մակարդակը նվազում է, կամ ըստ Կենտրոնական բանկի, առկա է դրա նվազման</p>
	<p>այնպիսի միտում, որի հետևանքով կարող է վտանգվել դրամավարկային քաղաքականության իրականացումը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների անխոչընդոտ կատարումը, ապա Կենտրոնական բանկն արտահերթ տեղեկատվություն է ներկայացնում կառավարությանը միջազգային պահուստների վիճակի, դրանց մակարդակի նվազման կամ հնարավոր նվազման պատճառների, ինչպես նաև ստեղծված իրավիճակը շտկելու համար անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ և այդ մասին տեղյակ է պահում Հայաստանի Հանրապետության Նախագահին և Ազգային ժողովին:</p>
<p>«ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ</p>	<p>Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության ծրագրերի ներկայացումը</p>

<p>օրենք, հոդված 102</p>	<p>1. Կենտրոնական բանկի կողմից Ազգային ժողով ներկայացվող «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրամավարկային քաղաքականության ծրագիրն Ազգային ժողով ուղարկելու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում, ընդգրկվում է չորսօրյա նիստերի օրակարգում:</p> <p>2. Ազգային ժողովի նախագահը Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության ծրագիրն ստանալուց հետո՝ երկօրյա ժամկետում, այն ուղարկում է Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներ և Կառավարություն:</p> <p>3. Ազգային ժողովի նիստում Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության ծրագիրը ներկայացնելու համար Կենտրոնական բանկի նախագահին տրվում է մինչև 40 րոպե:</p> <p>4. Մինչև 20-ական րոպե տևողությամբ հարակից զեկուցումներով ելույթ են ունենում Կառավարության և ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի ներկայացուցիչները:</p> <p>5. Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության ծրագրի քննարկումն իրականացվում է սույն օրենքի 55-րդ հոդվածով սահմանված կարգով և ավարտվում է ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի ներկայացուցչի և Կենտրոնական բանկի նախագահի եզրափակիչ ելույթներով՝ առանց որևէ փաստաթուղթ ընդունելու:</p>
<p>«ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենք, հոդված 103</p>	<p>Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունը ներկայացնելը</p> <p>1. Կենտրոնական բանկի կողմից Ազգային ժողով ներկայացվող «Հայաստանի Հանրապետության</p>
	<p>կենտրոնական բանկի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունը Ազգային ժողով ուղարկելու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում, ընդգրկվում է չորսօրյա նիստերի օրակարգում:</p> <p>2. Ազգային ժողովի նախագահը Կենտրոնական</p>

		<p>բանկի դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունը ստանալուց հետո՝ երկօրյա ժամկետում, այն ուղարկում է մշտական հանձնաժողովներ եւ Կառավարություն:</p> <p>3. Ազգային ժողովի նիստում Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունը ներկայացնելու համար Կենտրոնական բանկի նախագահին տրվում է մինչեւ 40 րոպե:</p> <p>4. Մինչեւ 20-ական րոպե տևողությամբ հարակից զեկուցումներով ելույթ են ունենում՝</p> <p>ա) ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի ներկայացուցիչը՝ ներկայացնելով Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվության վերաբերյալ հանձնաժողովի եզրակացությունը.</p> <p>բ) Կառավարության ներկայացուցիչը՝ ներկայացնելով Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվության վերաբերյալ Կառավարության եզրակացությունը:</p> <p>5. Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվության քննարկումն իրականացվում է սույն օրենքի 55-րդ հոդվածով սահմանված կարգով եւ ավարտվում է եզրափակիչ ելույթներով՝ առանց որեւէ փաստաթուղթ ընդունելու:</p>
1.1.6	<p>«Սահմանադրություն, հոդված 83.3</p>	<p>«Կենտրոնական բանկը Սահմանադրությամբ և օրենքով իրեն վերապահված խնդիրները և գործառույթներն իրականացնելիս անկախ է»:</p>
	<p>«Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 1, կետ 5</p>	<p>Կենտրոնական բանկն իր խնդիրներն իրականացնելիս անկախ է Հայաստանի Հանրապետության պետական մարմիններից:</p>
1.1.7	<p>«Սահմանադրություն, հոդված 83.3</p>	<p>Կենտրոնական բանկի նախագահը նշանակվում է Հանրապետության Նախագահի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի կողմից՝ վեց տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի</p>
		<p>քան երկու անգամ անընդմեջ նշանակվել</p>

	<p>կենտրոնական բանկի նախագահ: Օրենքով սահմանված դեպքերում Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ Հանրապետության Նախագահի առաջարկությամբ կարող է պաշտոնանկ անել կենտրոնական բանկի նախագահին:</p>
<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 18</p>	<p>Կենտրոնական բանկի նախագահը և նրա տեղակալը</p> <p>1. Կենտրոնական բանկի նախագահը Կենտրոնական բանկի բարձրագույն պաշտոնատար անձն է: Կենտրոնական բանկի նախագահը պատասխանատու է սույն օրենքով սահմանված Կենտրոնական բանկի խնդիրների իրագործման համար: Կենտրոնական բանկի նախագահի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում նրան փոխարինում է Կենտրոնական բանկի նախագահի տեղակալը, իսկ տեղակալի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում Կենտրոնական բանկի խորհրդի տարիքով ավագ անդամը: 2. Կենտրոնական բանկի նախագահը նշանակվում է Հայաստանի Հանրապետության Նախագահի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի կողմից՝ վեց տարի ժամկետով: Կենտրոնական բանկի նախագահի տեղակալը նշանակվում է Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից՝ վեց տարի ժամկետով: 3. Կենտրոնական բանկի նախագահը և նրա տեղակալը չեն կարող լինել որևէ կուսակցության ղեկավար մարմնի անդամ, զբաղվել քաղաքական գործունեությամբ, զբաղեցնել պետական այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից: 4. Կենտրոնական բանկի նախագահը՝ ա) կորոզիանցնում և ապահովում է Կենտրոնական բանկի, նրա խորհրդի և խորհրդի անդամների բնականոն աշխատանքը.</p>

	<p>բ) նախագահում է Կենտրոնական բանկի խորհրդի նիստերը, ստորագրում է Կենտրոնական բանկի խորհրդի ակտերը և խորհրդի նիստերի արձանագրությունները.</p> <p>գ) կազմակերպում է Կենտրոնական բանկի խորհրդի նորմատիվ ակտերի կատարումը.</p> <p>դ) ներկայացնում է Կենտրոնական բանկը Հայաստանի Հանրապետությունում, այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում.</p>
	<p>ե) տալիս է լիազորագրեր.</p> <p>զ) հաստատում է Կենտրոնական բանկի կառուցվածքը, աշխատակիցների հաստիքացուցակը.</p> <p>է) բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի, նշանակում և ազատում է աշխատանքից Կենտրոնական բանկի ստորաբաժանումների ղեկավարներին և մյուս աշխատակիցներին.</p> <p>Է՝) ընդունում է անհատական և ներքին որոշումներ ու կարգադրություններ, այդ թվում՝ վերստուգվող անձանց ստուգումներ նշանակելու մասին որոշումներ.</p> <p>ը) իրականացնում է օրենքով Կենտրոնական բանկի խորհրդի իրավասությանը չվերապահված այլ լիազորություններ:</p>
<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 19</p>	<p>Կենտրոնական բանկի խորհուրդը</p> <p>1. Կենտրոնական բանկի խորհուրդը Կենտրոնական բանկի կառավարման բարձրագույն մարմինն է:</p> <p>Կենտրոնական բանկի խորհուրդը կազմված է Կենտրոնական բանկի նախագահից, նրա տեղակալից և հինգ անդամներից:</p> <p>2. Կենտրոնական բանկի խորհրդի անդամներին նշանակում է Հայաստանի Հանրապետության նախագահը՝ հինգ տարի ժամկետով: Խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետները հետևյալն են՝</p> <ul style="list-style-type: none"> մեկ անդամը՝ մեկ տարի, մեկ անդամը՝ երկու տարի, մեկ անդամը՝ երեք տարի, մեկ անդամը՝ չորս տարի, մեկ և հետագայում նշանակված բոլոր

	<p>անդամները՝ հինգ տարի: Կենտրոնական բանկի խորհրդում թափուր տեղ առաջանալու դեպքում խորհրդի նոր անդամը նշանակվում է ազատված անդամի պաշտոնավարման չլրացած ժամկետով: 3. Կենտրոնական բանկի խորհրդի անդամը պատասխանատվություն է կրում Կենտրոնական բանկի խորհրդի կողմից գործունեության կոնկրետ ոլորտներում իրեն վերապահված պարտականությունների կատարման համար: 4. Կենտրոնական բանկի խորհրդի անդամ կարող են լինել Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք իրենց մասնագիտական կարողություններով ի վիճակի են ապահովել սույն օրենքի 20 հոդվածով սահմանված իրավասությունների կատարումը: Կենտրոնական բանկի խորհրդի անդամ չեն կարող լինել այն անձինք, ովքեր՝</p>
	<p>ա) դատարանի վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ են ճանաչվել, կամ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել են դիտավորյալմբ կատարված հանցագործության համար. բ) օրենքով սահմանված կարգով որակագրկվել են կամ գրկվել են որոշակի պաշտոն վարելու իրավունքից: 5. Կենտրոնական բանկի խորհրդի անդամները չեն կարող լինել որևէ կուսակցության ղեկավար մարմնի անդամ, զբաղվել քաղաքական գործունեությամբ, զբաղեցնել պետական այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից: Կենտրոնական բանկի խորհրդի անդամները չեն կարող Կենտրոնական բանկում այլ պաշտոն զբաղեցնել:</p>
<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 20</p>	<p>Կենտրոնական բանկի խորհրդի իրավասությունը Կենտրոնական բանկի խորհուրդը՝ ա) հաստատում է Կենտրոնական բանկի կանոնադրությունը. բ) հաստատում է Հայաստանի</p>

	<p>Հանրապետության դրամավարկային քաղաքականության ծրագիրը.</p> <p>գ) հաստատում է Կենտրոնական բանկի կողմից իրականացվող բաց շուկայի գործառնությունների, տրամադրվող վարկերի և ներգրավվող ավանդների սահմանաքանակներն ու տոկոսադրույքները.</p> <p>դ) հաստատում է բանկերի կողմից Կենտրոնական բանկում պարտադիր պահուստավորում իրականացնելու կարգը և պայմանները.</p> <p>ե) ընդունում է Կենտրոնական բանկի նորմատիվ ակտերը.</p> <p>զ) Կենտրոնական բանկի նախագահի առաջարկությամբ որոշում և հաստատում է Կենտրոնական բանկի խորհրդի անդամների միջև պարտականությունների բաշխումը.</p> <p>է) սահմանում է Հայաստանի Հանրապետության արժույթի (թղթադրամի ու մետաղադրամի (այդ թվում՝ հուշադրամի)) անվանական արժեքն ու ձևը, թողարկման և շրջանառությունից հանելու կարգն ու պայմանները, որոշում է կայացնում թղթադրամ ու մետաղադրամ (այդ թվում՝ հուշադրամ) թողարկելու և շրջանառությունից հետ կանչելու և հանելու մասին՝ սահմանելով շրջանառությունից հետ կանչելու և հանելու ժամկետները.</p> <p>ը) որոշում է միջազգային կազմակերպություններում Կենտրոնական բանկի անդամակցության հարցը.</p>
	<p>թ) հաստատում է Կենտրոնական բանկի կողմից ներկայացվող հաշվետվություններն ու եզրակացությունները.</p> <p>ժ) (20-րդ հոդվածի ժ կետն ուժը կորցրած է ճանաչվել 25.12.06 ՀՕ-36-Ն օրենքով)</p> <p>ժա) հաստատում է Կենտրոնական բանկի կողմից բանկերի վարկավորման կարգը.</p> <p>ժբ) հիմնադրում և լուծարում է Կենտրոնական բանկի տարածքային ստորաբաժանումները.</p> <p>ժգ) հաստատում է Կենտրոնական բանկի տարեկան ծախսերի նախահաշիվը, տարեկան և այլ հաշվետվությունները.</p> <p>ժդ) սահմանում է այն արժեթղթերի ցանկը,</p>

	<p>որոնք Կենտրոնական բանկը կարող է ձեռք բերել, պահել և օտարել, ինչպես նաև դրանք ձեռք բերելու, պահելու և օտարելու կարգը.</p> <p>ժե) սահմանում է Կենտրոնական բանկի կողմից թողարկվող կարճաժամկետ պետական արժեթղթերի տեսակները, ինչպես նաև հաստատում է այդ արժեթղթերի թողարկման, մարման, դրանցով կատարվող գործառնությունների իրականացման կարգերը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի հետ.</p> <p>ժզ) օրենքով սահմանված կարգով տալիս է բանկային գործունեության և այլ լիցենզիաներ, ուժը կորցրած կամ անվավեր ճանաչում դրանք, սահմանում է բանկերի և այլ անձանց լիցենզավորման կարգը.</p> <p>ժե) "Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով բանկին, վարկային կազմակերպությանը, ներդրումային ընկերությանը կամ ապահովագրական ընկերությանը ճանաչում է անվճարունակ, հարուցում է դրանց սնանկության վարույթ, իրականացնում է այդ օրենքով նախատեսված այլ լիազորություններ, ընդունում է բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների կամ ապահովագրական ընկերությունների վերակազմակերպման հետ կապված՝ օրենքով իր իրավասությանը վերապահված որոշումներ.</p> <p>ժը) հաստատում է Կենտրոնական բանկի խորհրդի աշխատանքի կանոնակարգը.</p> <p>ժթ) հաստատում է բանկերի գործունեությունը կարգավորող նորմատիվները և դրանց հաշվարկման կարգը.</p>
	<p>ի) նախնական համաձայնություն է տալիս կամ մերժում է բանկերի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցության ձեռքբերմանը.</p> <p>իա) հաստատում է բանկերի և Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող և վերահսկվող</p>

	<p>այլ անձանց կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ձևերը.</p> <p>իբ) սահմանում է բանկերում ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները.</p> <p>իգ) (20-րդ հոդվածի իգ կետն ուժը կորցրած է ճանաչվել 23.05.06 ՀՕ-76-Ն օրենքով).</p> <p>իզ) հաստատում է պետական արժեթղթերով կատարվող գործառնությունների (այդ թվում՝ դրանց պահառության գործունեության, հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի գործունեության, տեղաբաշխման, թերտեղաբաշխված արժեթղթերի տեղաբաշխման, երկրորդային շուկայում արժեթղթերի շրջանառության, արժեթղթերի հետգնման և մարման, ինչպես նաև արժեթղթերի գրավի հետ կապված գործառնությունների) իրականացման կարգերը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի հետ.</p> <p>իդ) ընդունում է Հայաստանի Հանրապետության վճարահաշվարկային հարաբերությունները և դրամաշրջանառությունը կանոնակարգող իրավական ակտերը.</p> <p>իե) իրականացնում է "Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով իրեն վերապահված լիազորությունները.</p> <p>իզ) հաստատում է Կենտրոնական բանկի պաշտոնական և այլ պարբերականների թողարկման և հրապարակման կարգը և պայմանները.</p> <p>իե) տալիս է Կենտրոնական բանկի նորմատիվ ակտերի պարզաբանումները.</p> <p>իը) սահմանում է բանկերի համար պարտադիր կատարման ենթակա վարկային ռիսկի գնահատման կանոնակարգը, այն անձանց նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կարգը և պայմանները, որոնց հաշվեկշիռներն օրենքով և Կենտրոնական բանկի իրավական ակտերով սահմանված կարգով բանկը միավորում է իր հաշվեկշռում (համախմբված</p>
--	---

		<p>հաշվեկշիռ). իթ) իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ.</p>
		<p>յ) ընդունում է «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող նորմատիվ իրավական ակտերը, այդ թվում՝ հաստատում է վարկային կազմակերպությունների գործունեության օրինակելի կանոնակարգը, սահմանում է բանկերի հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգին՝ վարկային ռեզիստրին, վարկային կազմակերպությունների մասնակցության կարգը և պայմանները</p>
<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 22</p>		<p>յ) իրականացնում է "Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով իրեն վերապահված լիազորությունները. լա) իրականացնում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով իրեն վերապահված լիազորությունները: լբ) իրականացնում է «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով վերապահված լիազորությունները:</p> <p>Կենտրոնական բանկի խորհրդի անդամներին պաշտոնից ազատելու հիմքերը</p> <p>1. Կենտրոնական բանկի նախագահը կարող է պաշտոնից ազատվել կամովին՝ ազատվելու օրվանից երեսուն օր առաջ գրավոր տեղեկացնելով Հայաստանի Հանրապետության Նախագահին և Ազգային ժողովին: Տեղեկացնելու օրվան հաջորդող երեսուներորդ օրվանից Կենտրոնական բանկի նախագահը համարվում է պաշտոնից ազատված: Կենտրոնական բանկի նախագահի տեղակալը, Կենտրոնական բանկի խորհրդի մյուս անդամները կարող են պաշտոնից ազատվել կամովին՝ ազատվելու օրվանից մեկ ամիս առաջ</p>

		<p>գրավոր տեղեկացնելով Հայաստանի Հանրապետության Նախագահին:</p> <p>2. Ազգային ժողովը Հայաստանի Հանրապետության Նախագահի առաջարկությամբ պաշտոնից ազատում է Կենտրոնական բանկի նախագահին, իսկ Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ Կենտրոնական բանկի նախագահի տեղակալին, խորհրդի մյուս անդամներին, եթե նրանք՝</p> <p>ա) դադարել են Հայաստանի Հանրապետության քաղաքացի լինել:</p> <p>բ) դատարանի վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ են ճանաչվել կամ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել են դիտավորությամբ կատարված հանցագործության համար:</p> <p>գ) թերացել են պաշտոնական պարտականությունները կատարելիս:</p> <p>դ) օրենքով սահմանված կարգով որակագրկվել են կամ զրկվել են որոշակի պաշտոն վարելու իրավունքից:</p> <p>ե) հիվանդության կամ այլ պատճառով վեց ամսից ավելի չեն կատարել իրենց պաշտոնական պարտականությունները:</p> <p>զ) մեկ տարվա ընթացքում ավելի քան հինգ անգամ անհարգելի բացակայել են խորհրդի նիստերից:</p>
<p>1.2</p>	<p>«Սահմանադրություն, հոդված 83.3</p>	<p>Կենտրոնական բանկը Սահմանադրությամբ և օրենքով իրեն վերապահված խնդիրները և գործառնություններն իրականացնելիս անկախ է:</p>
	<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 30</p>	<p>Կառավարության բանկային սպասարկումը</p> <p>Կենտրոնական բանկն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով անվճար իրականացնում է Կառավարության բանկային սպասարկումը:</p>
	<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 31</p>	<p>Խորհրդատվությունը</p> <p>Պետական բյուջեի նախագիծը կազմելիս Կառավարությունը կամ նրա լիազորած պետական կառավարման մարմինը խորհրդակցում է Կենտրոնական բանկի հետ՝ պետական բյուջեի նախագծին առնչվող հարցերի շուրջ, այդ թվում՝</p>

	<p>նախատեսվող ներքին և արտաքին պետական փոխառությունների, դրանց աղբյուրների, ծավալների, ժամկետների և պայմանների, ինչպես նաև փոխառու միջոցների օգտագործման ուղղությունների և նպատակների վերաբերյալ: Կենտրոնական բանկը պետական բյուջեի նախագծի վերաբերյալ Կառավարությանը պաշտոնական եզրակացություն է ներկայացնում: Կենտրոնական բանկի պաշտոնական եզրակացությունը պետական բյուջեի նախագծին կից ներկայացվում է Ազգային ժողովի քննարկմանը՝ օրենքով սահմանված կարգով: Կենտրոնական բանկը կառավարությանը պաշտոնական եզրակացություն է ներկայացնում նաև պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության վերաբերյալ: Կենտրոնական բանկի պաշտոնական եզրակացությունը պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությանը կից կառավարությունը ներկայացնում է Ազգային ժողովի քննարկմանը՝ օրենքով սահմանված կարգով:</p>
<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 32</p>	<p>Ֆինանսական գործակալը Կենտրոնական բանկը Կառավարության ֆինանսական գործակալն է՝</p> <p>ա) կառավարության լիազորած մարմնի կողմից թողարկված պարտատոմսերի և այլ արժեթղթերի բաշխման, գրանցման և փոխանցման, ինչպես նաև արժեթղթերի հիմնական գումարի, տոկոսների կամ սահմանված այլ վճարումների իրականացման գծով հանդիսանում է կառավարության լիազորած մարմնի թողարկած պարտատոմսերի կենտրոնական պահառու:</p> <p>բ) պետական բյուջեի և ներքին ու արտաքին պետական պարտքի սպասարկման հետ կապված գործառնությունների, ինչպես նաև վճարային այլ գործառնությունների իրականացման գծով:</p> <p>գ) Կենտրոնական բանկի խնդիրներին չհակասող այլ գործառնությունների գծով:</p>
<p>«ՀՀ կենտրոնական</p>	<p>Տեղեկատվությունը</p>

<p>բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 33</p>	<p>1. Կենտրոնական բանկը Կառավարության լիազորված մարմնի հետ համաձայնեցված կարգով տրամադրում է Կառավարությանը դրամավարկային և սույն օրենքով իր իրավասությանը վերապահված այլ հարցերին առնչվող տեղեկություններ:</p> <p>2. Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրվում են օրենքով սահմանված կարգով:</p>
	<p>3. Կառավարության լիազորած մարմինները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը Կենտրոնական բանկի հետ համաձայնեցված կարգով Կենտրոնական բանկին է տրամադրում տեղեկություններ՝</p> <p>ա) պետական բյուջեի կատարման, դրա ընթացիկ ծավալների և եկամուտների վերաբերյալ:</p> <p>բ) պետական փոխառությունների մասին, այդ թվում՝ դրանց աղբյուրների, ծավալի, տոկոսադրույքի, մարման ժամկետների, այլ պայմանների, փոխառու միջոցների օգտագործման ուղղությունների և նպատակների վերաբերյալ:</p> <p>գ) վճարային հաշվեկշռի, ֆինանսական և տնտեսական այլ հարցերի վերաբերյալ:</p> <p>4. Պետական գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրվում են օրենքով սահմանված կարգով:</p>
<p>«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 15¹, կետ 1</p>	<p>Կառավարությունը և Կենտրոնական բանկը միջնաժամկետ ծախսերի ծրագրում պարբերաբար համատեղ սահմանում են գնաճի կանխատեսվող մակարդակը:</p>
<p>«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 16</p>	<p>1. Պետական բյուջեի նախագիծը ներառում է՝</p> <p>ա) Կառավարության բյուջետային ուղերձը:</p> <p>բ) պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը:</p> <p>գ) պետական բյուջեի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պաշտոնական եզրակացությունը:</p> <p>5. Յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի</p>

		<p>մասին օրենքով Կենտրոնական բանկին առաջադրվում է գնաճի սահող թիրախ, այն է՝ տարվա ընթացքում որոշումների կայացման համար գնաճի նպատակային մակարդակը և դրանից շեղումների թույլատրելի չափը: Տարվա ընթացքում դրամավարկային քաղաքականության վերաբերյալ որոշումները կայացնելիս ԿԲ-ն առաջնորդվում է որոշման կայացման օրվան հաջորդող 12-ամսյա ժամկետի համար գնաճի նպատակային մակարդակին հասնելու տրամաբանությամբ:</p>
<p>«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 21, կետ 2</p>		<p>2. Պետական բյուջեի նախագիծը կազմելիս Կառավարությունը կամ նրա լիազորած պետական կառավարման մարմինը, «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 31 հոդվածին համապատասխան, խորհրդակցում է Կենտրոնական բանկի հետ՝ պետական բյուջեի նախագծին առնչվող հարցերի, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից գնաճի միջնաժամկետ կանխատեսումների շուրջ:</p>
<p>«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 21, կետ 8.1</p>		<p>8.1. Պետական բյուջեի նախագծի արտարժույթային մուտքեր և ելքերը դրամային արտահայտությամբ հաշվարկվում են՝ կիրառելով պետական բյուջեի նախագիծը Ազգային ժողով ներկայացնելու ամսվա առաջին օրը ՀՀ արտարժույթային շուկայում ձևավորված համապատասխան արտարժույթների նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը, իսկ եթե այդ օրվա դրամի միջին փոխարժեքի կիրառմամբ ողջամիտ ժամկետում արտարժույթային մուտքերի եւ ելքերի նշված հաշվարկը կատարել հնարավոր չէ, ապա այդ ամսվան նախորդող ամսվա առաջին օրը նույն շուկայում ձևավորված համապատասխան արտարժույթների նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը:</p>
<p>«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 25, կետ 1</p>		<p>1. Կառավարությունը յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունն Ազգային ժողով է ներկայացնում մինչև հաջորդ տարվա մայիսի 1-ը: Կառավարությունը յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության հետ Ազգային ժողով է ներկայացնում նաև դրա վերաբերյալ</p>

		Կենտրոնական բանկի կողմից կառավարություն ներկայացված Կենտրոնական բանկի պաշտոնական եզրակացությունը:
	«ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ու ՀՀ կենտրոնական բանկի միջև համագործակցության որդեգրած սկզբունքների վերաբերյալ» համաձայնագիր (կնքված 13.10.2006թ.)	http://www.cba.am/CBA_SITE/downloads/dram/gnach/hamacajnagir.pdf
	ՀՀ կառավարության 19.08.2004թ. «ՀՀ իշխանության որոշ մարմինների և ՀՀ կենտրոնական բանկի միջև տեղեկատվություն փոխանակելու մասին» թիվ 1354-Ն որոշում	http://www.cba.am/CBA_SITE/downloads/dram/gnach/1354.pdf
1.2.1	«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 34	Կառավարության վարկավորումը Կենտրոնական բանկի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ այլ պետական մարմիններին ուղղակիորեն կամ անուղղակիորեն վարկավորելը կամ այլ կերպ ֆինանսավորելն արգելվում է բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:
1.2.2	«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 34	Տե՛ս սույն հավելվածի 1.2.1 կետը՝ «Կառավարության վարկավորումը»
1.2.3	«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 10	Տե՛ս սույն հավելվածի 1.1.3 կետը՝ «Բաց շուկայական գործառնությունները»
	«ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ» փաստաթուղթ (հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 15.12.2009թ.)	http://www.cba.am/CBA_SITE/downloads/Press_release_ARM/vor_372_a.pdf

<p>372Ա որոշմամբ)</p> <p>1.2.4</p>	<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 56</p>	<p>Կենտրոնական բանկի այլ գործարքներ</p> <p>Կենտրոնական բանկը կարող է կատարել հետևյալ գործարքները՝</p> <p>ա) ներդրումներ կատարել այն իրավաբանական անձանց կապիտալում, որոնց գործունեությունն ուղղակիորեն առնչվում է Կենտրոնական բանկի խնդիրների հետ.</p> <p>բ) կապիտալի խնդիրներն իրականացնելու համար ձեռք բերել կամ վարձակալել անհրաժեշտ անշարժ գույք.</p> <p>գ) իր հանդեպ ունեցած պարտավորությունների դիմաց ձեռք բերել, տիրապետել, օգտագործել և օտարել գույք և գույքային իրավունքներ: Կենտրոնական բանկը օտարում է հիշյալ գույքը և գույքային իրավունքները հնարավոր կարճ ժամկետներում.</p> <p>դ) իր կողմից սահմանված կարգով վարկեր տրամադրել Կենտրոնական բանկի նախագահին, նախագահի տեղակալին, խորհրդի մյուս անդամներին և ծառայողներին:</p>
<p>1.2.5</p>	<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 11</p>	<p>Կենտրոնական բանկի կապիտալը</p> <p>1. Կենտրոնական բանկի կապիտալը ներառում է կանոնադրական կապիտալը, գլխավոր պահուստը, արժեթղթերի, հիմնական միջոցների և այլ ակտիվների վերազնահատման պահուստները, չբաշխված շահույթը և շահույթը:</p> <p>2. Կենտրոնական բանկի կանոնադրական կապիտալը կազմում է հարյուր միլիոն հայկական դրամ:</p> <p>3. Կենտրոնական բանկի կանոնադրական կապիտալը Հայաստանի Հանրապետության սեփականությունն է և չի կարող գրավ դրվել, բռնագանձվել կամ այլ կերպ օտարվել Հայաստանի Հանրապետության պարտավորությունների դիմաց:</p> <p>4. Կենտրոնական բանկի հաշվեկշռում, ֆինանսական տարվա արդյունքում առաջացած վնասը պահուստների հանրագումարը գերազանցելու դեպքում, հաշվեկշռի հրապարակման պահից 30 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության</p>

	<p>կառավարությունը՝ գերազանցող գումարի չափով, օրենքով սահմանված կարգով, որպես ներդրում Կենտրոնական բանկի կապիտալում, Կենտրոնական բանկին է տրամադրում անտոկոս ցպահանջ պետական հասարակ մուրհակներ: Այդ մուրհակների մարումը կատարվում է Կենտրոնական բանկի պահանջի դեպքում՝ պետական բյուջեի հաշվին կամ սույն օրենքի 12 հոդվածի համաձայն:</p>
<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 12</p>	<p>Կենտրոնական բանկի շահույթի հաշվարկումն ու բաշխումը</p> <p>1. Կենտրոնական բանկի շահույթը հաշվարկվում է յուրաքանչյուր տարվա համար, հաշվապահական հաշվառման միջազգային չափանիշներին համապատասխան՝ որպես տվյալ ֆինանսական տարվա ընթացքում ստացված բոլոր եկամուտների և կատարված բոլոր ծախսերի (ներառյալ կորուստները) տարբերություն:</p> <p>Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի բաշխման ենթակա շահույթի հաշվարկի մեջ չեն ընդգրկվում սույն օրենքի 13-րդ հոդվածով սահմանված ոսկու, հատուկ փոխառության իրավունքների, արտարժույթների և դրանցով արտահայտված արժեքների վերագնահատումից և ձեռքբերումից առաջացած եկամուտների և ծախսերի դրական տարբերությունը՝ ճշգրտված նախորդ ժամանակաշրջանների բացասական արդյունքների հատուցմանն ուղղված գումարների չափով:</p> <p>2. Կենտրոնական բանկի շահույթից կատարվում են հետևյալ մասհանումները՝</p> <p>ա) շահույթի 20 տոկոսն ուղղվում է գլխավոր պահուստի համալրմանը՝ մինչև դրա ընդհանուր չափը կազմի առկա դրամական զանգվածի 25 տոկոսը.</p> <p>բ) ուղղվում է սույն օրենքի 11 հոդվածով նախատեսված մուրհակների մարմանը, դրա համար անհրաժեշտ գումարի չափով:</p> <p>3. Նշված մասհանումները կատարելուց հետո ֆինանսական տարվա արդյունքում ստացված շահույթի մնացորդը փոխանցվում է պետական բյուջե:</p>
<p>«ՀՀ կենտրոնական</p>	<p>Տե՛ս սույն հավելվածի 1.1.5 կետը՝ «Տարեկան և</p>

բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 17	եռամսյակային հաշվետվությունները»
1.3 «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 32	Տե՛ս սույն հավելվածի 1.2 կետը՝ «Ֆինանսական գործակալը»
1.3.1 «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 5	Տե՛ս սույն հավելվածի 1.1.2 կետը՝ «Կենտրոնական բանկի խնդիրներն են...»
«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 8	Միջազգային համագործակցությունը Կենտրոնական բանկն իր իրավասության շրջանակներում ներկայացնում է Հայաստանի Հանրապետության շահերը միջազգային ֆինանսական կազմակերպություններում, միջազգային և օտարերկրյա բանկերում, ինչպես նաև այլ երկրների Կենտրոնական և այլ բանկերի հետ հարաբերություններում, օրենքով
	սահմանված կարգով կնքում է միջազգային պայմանագրեր: Կենտրոնական բանկն իրավունք ունի համագործակցելու արժեթղթերի շուկայի օտարերկրյա կարգավորողների հետ: Այդ համագործակցությունը ներառում է կարգավորման առարկային վերաբերող տեղեկություններ հայթայթելն ու փոխանակելը, ինչպես նաև նման տեղեկություններ ստանալուն աջակցելը: Կենտրոնական բանկն իրավունք ունի օրինական հիմքով իր տիրապետմանն անցած տեղեկությունները փոխանցելու այդ մարմիններին՝ պայմանով, որ դրանց փոխանցումն օրենքին չի հակասում, փոխանցումից հետո կպահպանվի դրանց՝ օրենքով սահմանված գաղտնիության ռեժիմը, և այդ տեղեկությունները կօգտագործվեն բացառապես օրենքի խախտումները կանխելու կամ հետապնդելու նպատակով: Նման համագործակցության նպատակով Կենտրոնական բանկն իրավունք ունի ստեղծելու տեղեկատվության փոխանակման համակարգեր կամ իր անունից մասնակցելու դրանց, մասնավորապես՝ ստորագրելու հուշագրեր և այլ համաձայնագրեր, որոնք ընդամենը կսահմանեն փոխանակման ենթակա տեղեկությունների կազմը, դրանց փոխանակման կարգն ու պայմանները:
«ՀՀ կենտրոնական	Տե՛ս սույն հավելվածի 1.1.5 կետը՝ «Տարեկան և

<p>բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 17</p>	<p>եռամսյակային հաշվետվությունները»</p>
<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 32</p>	<p>Տե՛ս սույն հավելվածի 1.2 կետը՝ «Ֆինանսական գործակալը»</p>
<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 52</p>	<p>Տե՛ս սույն հավելվածի 1.1.5 կետը՝ «Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստները»</p>
<p>1.3.2 Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական(պարտատոմսերի թողարկման պայմանները, Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական(պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 3-ի N 1103-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1580-Ն որոշում</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/dram/gnach/1580.pdf</p>
<p>«ՀՀ պետական (գանձապետական) խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման պայմանների և ՀՀ պետական (գանձապետական) խնայողական</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/dram/gnach/1606.pdf</p>

<p>արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխման և մարման սպասարկման կարգ» հաստատված ՀՀ կառավարության 19.10.2006թ. թիվ 1606-Ն որոշմամբ</p>	
<p>«ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, հետգնման կազմակերպման և մարման սպասարկման» կարգ՝ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 30.03.2004թ. թիվ 75-Ն որոշմամբ</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/monetary/karger/partatoms_auction.pdf</p>
<p>«Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի պահառության գործունեության մասին» կարգ՝ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 30.03.2004թ. թիվ 75-Ն որոշմամբ</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/monetary/karger/partatoms_paharu.pdf</p>
<p>«Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի գրավի հետ կապված գործառնությունների իրականացման մասին» կարգ՝ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 30.03.2004թ. թիվ 75-Ն որոշմամբ</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/monetary/karger/partatoms_grav.pdf</p>
<p>«Պետական արժեթղթերի հաշվառման և</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/monetary/karger/partatoms_hashvarum.pdf</p>

<p>հաշվարկների համակարգում կիրառվող հաշվեհամարների կողավորման» կարգ՝ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 30.03.2004թ. թիվ 75-Ն որոշմամբ</p>	
<p>«Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում շրջանառության» կարգ՝ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 30.03.2004թ. թիվ 75-Ն որոշմամբ</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/monetary/karger/partatoms_erkror.pdf</p>
<p>«Պետական պարտատոմսերով գործառնություններում կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների մասին» կարգ՝ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 30.03.2004թ. թիվ 75-Ն որոշմամբ</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/monetary/karger/partatoms_vaverapaiman.pdf</p>
<p>2.</p>	<p>Դրամավարկային քաղաքականության մշակման և հրապարակման գործընթացը</p>
<p>2.1 «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 17</p>	<p>Տե՛ս սույն հավելվածի 1.1.5 կետը՝ «Տարեկան և եռամսյակային հաշվետվությունները»</p>
<p>2.1.1 «ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության անողղակի գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ» փաստաթուղթ՝</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/Press_release_ARM/vor_372_a.pdf</p>

<p>հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 15.12.2009թ. 372Ա որոշմամբ</p>	
<p>«Դրամական միջոցների ներգրավման» գլխավոր համաձայնագիր՝ հաստատված ՀՀ ԿԲ Նախագահի 18.12.2009թ. 1/1567Ա որոշմամբ</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/monetary/karger/paymanagir_avand.pdf</p>
<p>«Լոմբարդային վարկերի տրամադրման» գլխա- վոր համաձայնագիր հաստատված ՀՀ ԿԲ Նախագահի 07.06.2007թ. 1/745Ա որոշմամբ՝</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/monetary/karger/paymanagir_vark.pdf</p>
<p>«Ռեսպո և հակադարձ ռեսպո գործարքների կնքման» գլխավոր համաձայնագիր՝ հաստատված ՀՀ ԿԲ Նախագահի 24.12.2009թ. 1/1573Ա որոշմամբ</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/monetary/karger/repo_hakadarc.pdf</p>
<p>«Պետական պարտատոմսերի հետ երկրորդային շուկայում գործառնությունների իրականացման» գլխավոր համաձայնագիր՝ հաստատված ՀՀ ԿԲ Նախագահի 28.04.2006թ. 1/306Ա որոշմամբ</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/monetary/karger/paymanagir_erkord.pdf</p>
<p>«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկվող կարճաժամկետ</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/monetary/karger/kb_partatoms.pdf</p>

<p>պետական պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգը» հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 7.04.2005թ. 144-Ն որոշմամբ</p>	
<p>2.1.2 «ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ» փաստաթուղթ՝ հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 15.12.2009թ. 372Ա որոշմամբ</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/Press_release_ARM/vor_372_a.pdf</p>
<p>«Դրամական միջոցների ներգրավման» գլխավոր համաձայնագիր՝ հաստատված ՀՀ ԿԲ նախագահի 18.12.2009թ. 1/1567Ա որոշմամբ</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/monetary/karger/paymanagir_avand.pdf</p>
<p>«Լոնբարդային վարկերի տրամադրման» գլխավոր համաձայնագիր՝ հաստատված ՀՀ ԿԲ նախագահի 07.06.2007թ. 1/745Ա որոշմամբ</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/monetary/karger/paymanagir_vark.pdf</p>
<p>«Ռեպո և հակադարձ ռեպո գործարքների կնքման» գլխավոր համաձայնագիր՝ հաստատված ՀՀ ԿԲ նախագահի 24.12.2009թ. 1/1573Ա որոշմամբ</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/monetary/karger/repo_hakadarc.pdf</p>

<p>որոշմամբ «Պետական պարտատոմսերի հետ երկրորդային շուկայում գործառնությունների իրականացման» գլխավոր համաձայնագիր՝ հաստատված ՀՀ ԿԲ նախագահի 28.04.2006թ. 1/306Ա որոշմամբ</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/monetary/karger/paymanagir_erkrord.pdf</p>
<p>2.2 «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 19</p>	<p>Տե՛ս սույն հավելվածի 1.1.7 կետը՝ «Կենտրոնական բանկի խորհուրդը»</p>
<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 20</p>	<p>Տե՛ս սույն հավելվածի 1.1.7 կետը՝ «Կենտրոնական բանկի խորհրդի իրավասությունը»</p>
<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 21</p>	<p>Կենտրոնական բանկի խորհրդի նիստերը 1. Կենտրոնական բանկի խորհրդի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության՝ նախագահի, նրա տեղակալի կամ խորհրդի առնվազն երեք անդամի պահանջով, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ: Կենտրոնական բանկի խորհրդի նիստերն արձանագրվում են: 2. Կենտրոնական բանկի խորհրդի փակ նիստեր կարող են գումարվել, եթե քննարկվում են առանձին բանկերի հետ կապված հարցեր, որոնք բանկային գաղտնիք են պարունակում, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով գաղտնի համարվող տեղեկությունների հետ կապված հարցեր կամ ապահովագրական գործունեություն իրականացնող առանձին անձանց հետ կապված հարցեր, որոնք ապահովագրական գաղտնիք են պարունակում կամ քննարկվում են խորհրդի անդամներին վերաբերող հարցեր: Կենտրոնական բանկի փակ նիստերին կարող են մասնակցել միայն Կենտրոնական բանկի խորհրդի անդամները և խորհրդի հրավերն ունեցող անձինք: 3. Կենտրոնական բանկի խորհուրդն իրավասու է որոշումներ ընդունել, եթե նիստին ներկա են խորհրդի անդամներից առնվազն հինգը, այդ</p>

		<p>թվում Կենտրոնական բանկի նախագահը կամ նրա տեղակալը: Որոշումը համարվում է ընդունված, եթե կողմ են քվեարկել նիստին</p>
		<p>ներկա գտնվող անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Ձայների հավասարության դեպքում Կենտրոնական բանկի նախագահի, իսկ վերջինիս բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում նրա տեղակալի ձայնը որոշիչ է:</p> <p>4. Կառավարության լիազոր ներկայացուցիչը, ինչպես նաև Կենտրոնական բանկի խորհրդի ընդունած որոշմանը դեմ քվեարկած անդամը կարող են պահանջել նիստի արձանագրության մեջ իրենց կարծիքի մանրամասն արտացոլումը:</p> <p>5. Անհրաժեշտության դեպքում Կենտրոնական բանկի խորհուրդն իր սահմանած աշխատանքի կանոնակարգի համաձայն կարող է որոշումներ ընդունել հարցման կարգով: Հարցման կարգով որոշումն ընդունվում է սույն հոդվածի 3-րդ կետով սահմանված քվեարկության կարգով:</p>
	<p>«ՀՀ ԿԲ խորհրդի աշխատանքի կանոնակարգ» հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 18.11.2008թ. թիվ 310-Ա որոշմամբ, Գլուխ 2</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/dram/gnach/455.pdf</p>
<p>2.2.1</p>	<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 19</p>	<p>Տե՛ս սույն հավելվածի 1.1.7 կետը՝ «Կենտրոնական բանկի խորհուրդը»</p>
	<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 20</p>	<p>Տե՛ս սույն հավելվածի 1.1.7 կետը՝ «Կենտրոնական բանկի խորհրդի իրավասությունը»</p>
	<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 21</p>	<p>Տե՛ս սույն հավելվածի 2.2 կետը՝ «Կենտրոնական բանկի խորհրդի նիստերը»</p>
	<p>«ՀՀ ԿԲ խորհրդի աշխատանքի կանոնակարգ» հաստատված ՀՀ ԿԲ</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/dram/gnach/455.pdf</p>

	<p>խորհրդի 18.11.2008թ. թիվ 310-Ա որոշմամբ, Գլուխ 2</p>	
<p>2.3 «ՀՀ ԿԲ խորհրդի աշխատանքի կանոնակարգ» հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 18.11.2008թ. թիվ 310-Ա որոշմամբ, Գլուխ 4, կետ 12</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/dram/gnach/455.pdf</p>	
	<p>«ՀՀ ԿԲ մամլո հրապարակումների կարգը հաստատելու մասին» ՀՀ ԿԲ նախագահի 15.02.2006թ. թիվ 1/63L որոշում (կարգի կետ 2/Ա)</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/dram/gnach/1-63L.pdf</p>
<p>2.3.1 «ՀՀ ԿԲ խորհրդի աշխատանքի կանոնակարգ» հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 18.11.2008թ. թիվ 310-Ա որոշմամբ, Գլուխ 5</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/dram/gnach/455.pdf</p>	
<p>2.4 «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 7</p>	<p>Պետական մարմինների հետ համագործակցությունը</p> <p>1. Իր խնդիրներն իրականացնելիս Կենտրոնական բանկը համագործակցում է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների հետ:</p> <p>2. Կենտրոնական բանկի նախագահը կամ նրա տեղակալը պարբերաբար պարզաբանումներ կամ բացատրություններ են տալիս Ազգային ժողովին և նրա հանձնաժողովներին՝ Կենտրոնական բանկի քաղաքականության մասին:</p> <p>3. Կենտրոնական բանկը մասնակցում է Կառավարության տնտեսական և ֆինանսական ծրագրերի մշակմանը, ինչպես նաև աջակցում է դրանց իրականացմանը, եթե դա չի հակասում Կենտրոնական բանկի խնդիրներին:</p> <p>Դրամավարկային քաղաքականության ծրագրի մշակման ընթացքում Կենտրոնական բանկը</p>	

		<p>խորհրդակցում է Կառավարության հետ:</p> <p>4. Կենտրոնական բանկի նախագահը կարող է խորհրդակցական ծայնի իրավունքով մասնակցել Կառավարության բաց նիստերին և գրավոր կարծիք ներկայացնել քննարկվող հարցերի վերաբերյալ: Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչը կարող է խորհրդակցական ծայնի իրավունքով մասնակցել Կենտրոնական բանկի խորհրդի բաց նիստերին և գրավոր կարծիք ներկայացնել քննարկվող հարցերի վերաբերյալ:</p>
	«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 17	Տե՛ս սույն հավելվածի 1.1.5 կետը՝ «Տարեկան և եռամսյակային հաշվետվությունները»
2.4.1	«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 7	Տե՛ս սույն հավելվածի 2.4 կետը՝ «Պետական մարմինների հետ համագործակցությունը»
	«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 17	Տե՛ս սույն հավելվածի 1.1.5 կետը՝ «Տարեկան և եռամսյակային հաշվետվությունները»
2.5	«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 39	<p>Համագործակցությունը բանկային միությունների և ասոցիացիաների հետ</p> <p>1. Կենտրոնական բանկը համագործակցում է բանկային միությունների և ասոցիացիաների հետ բանկային գործունեությանը վերաբերող հարցերի շուրջ, այդ թվում՝ մինչև բանկային համակարգի և բանկերի գործունեության վրա էապես ազդող ակտերի ընդունումը խորհրդակցում է նրանց հետ և տալիս է անհրաժեշտ բացատրություններ:</p> <p>2. Բանկային միությունների և ասոցիացիաների հետ համագործակցության և բանկային գործունեության հետ կապված խնդիրների ուսումնասիրության և կարգավորման նպատակով Կենտրոնական բանկը կարող է մասնակցել բանկային միությունների և ասոցիացիաների աշխատանքային խմբերի և այլ կառույցների աշխատանքին:</p>
2.6	ՀՀ ԿԲ խորհրդի 26.02.2008թ. «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և	http://www.cba.am/CBA_SITE/downloads/orenk/kan/kan-3.pdf

<p>հրապարակումը» կանոնակարգ 3-ը հաստատելու մասին» թիվ 50-Ն որոշում</p>	
<p>ՀՀ ԿԲ խորհրդի 03.03.2005թ. «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ը նոր խմբագրությամբ հաս- տատելու մասին» թիվ 93-Ն որոշում</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/orenk/kan/kan-15.pdf</p>
<p>«Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկա- տվությունը, ներկայաց- նելու կարգը և ժամկետ- ները» կանոնակարգ՝ հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 2007թ նոյեմբերի 16-ի թիվ 366-Ն որոշմամբ</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/dram/gnach/366.pdf</p>
<p>«Վճարահաշվարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 22՝ հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 2005 թ. հուլիսի 6-ի թիվ 333-Ն որոշմամբ</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/dram/gnach/333.pdf</p>
<p>«Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները,</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/orenk/kan/kan-403.pdf</p>

<p>դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 4/03' հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 22.04.2008թ. թիվ 140Ն որոշմամբ</p>	
<p>«Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեության լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 12-ը հաստատելու մասին» ՀՀ ԿԲ խորհրդի 04.05.2007թ. թիվ 135-Ն որոշում</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/orenk/kan/kan-12.pdf</p>
<p>«Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ը հաստատելու մասին» ՀՀ ԿԲ խորհրդի 15.05.2007թ. թիվ 138 Ն որոշում</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/orenk/kan/kan-10.pdf</p>
<p>«Գրավատնային գործունեություն իրականացնող անձանց կողմից ներկայացվող հաշվետվությունները, դրանց ձևերը և լրացման կարգը» հաստատելու մասին ՀՀ ԿԲ խորհրդի 12.09.2006թ. թիվ 534-Ն որոշում</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/dram/gnach/534.pdf</p>
<p>«Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» 4/04 կանոնակարգը հաստատելու մասին ՀՀ ԿԲ խորհրդի 11.03.2008թ. թիվ 68Ն որոշում</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/orenk/kan/kan_404.pdf http://www.cba.am/CBA_SITE/downloads/orenk/kan/rus/reg_404.pdf</p>

3.	Դրամավարկային քաղաքականության վերաբերյալ հրապարակվող տեղեկատվությունը	
3.1	«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 5	Տե՛ս սույն հավելվածի 1.1.2 կետը՝ «Կենտրոնական բանկի խնդիրներն են...»
	«ԱՄՀ-ի ՏՏՀԶ-ին Հայաստանի Հանրապետության անդամակցության շրջանակներում ՀՀ կենտրոնական բանկի մեթատվյալների հավանություն տալու մասին» ՀՀ ԿԲ խորհրդի 2003թ. դեկտեմբերի 9-ի թիվ 416 որոշում	http://www.cba.am/CBA_SITE/downloads/dram/gnach/416.pdf
3.2	«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 17	Տե՛ս սույն հավելվածի 1.1.5 կետը՝ «Տարեկան և եռամսյակային հաշվետվությունները»
	«ՀՀ ԿԲ պարբերականների թողարկման և հրապարակման կարգի ու պայմանների մասին» ՀՀ ԿԲ խորհրդի 11.03.2008թ. թիվ 70-Ն որոշում (ենթահավելված 1)	http://www.cba.am/CBA_SITE/downloads/orenk/kanon/vor_70.pdf
3.2.1	«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 17	Տե՛ս սույն հավելվածի 1.1.5 կետը՝ «Տարեկան և եռամսյակային հաշվետվությունները»
	«ՀՀ ԿԲ պարբերականների թողարկման և հրապարակման կարգի ու պայմանների մասին» ՀՀ ԿԲ խորհրդի 11.03.2008թ. թիվ 70-Ն որոշում (ենթահավելված 1)	http://www.cba.am/CBA_SITE/downloads/orenk/kanon/vor_70.pdf
	«ՀՀ ԿԲ պարբերականների պատրաստման, հաստատման, հրատա-	http://www.cba.am/CBA_SITE/downloads/orenk/kanon/vor_304.pdf

<p>րական, բաշխման և թարգմանության» մասին ՀՀ ԿԲ նախագահի 03.04.2008թ. թիվ 1/304Լ որոշում (ենթահավելված 1)</p>	
<p>3.2.2 «ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության անողղակի գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ» փաստաթուղթ հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 15.12.2009թ. 372Ա որոշմամբ</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/Press_release_ARM/vor_372_a.pdf</p>
<p>«Դրամական միջոցների ներգրավման» գլխավոր համաձայնագիր՝ հաստատված ՀՀ ԿԲ նախագահի 18.12.2009թ. 1/1567Ա որոշմամբ</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/monetary/karger/paymanagir_avand.pdf</p>
<p>«Լոմբարդային վարկերի տրամադրման» գլխավոր համաձայնագիր՝ հաստատված ՀՀ ԿԲ նախագահի 07.06.2007թ. 1/745Ա որոշմամբ</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/monetary/karger/paymanagir_vark.pdf</p>
<p>«Ռեպո և հակադարձ ռեպո գործարքների կնքման» գլխավոր համաձայնագիր՝ հաստատված ՀՀ ԿԲ նախագահի 24.12.2009թ. 1/1573Ա որոշմամբ</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/monetary/karger/REPO__AGREEMENT_22.12.08.pdf</p>
<p>«Պետական պարտատոմսերի հետ երկրոր-</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/monetary/karger/paymanagir_erkord.pdf</p>

	<p>դային շուկայում գործառնությունների իրականացման» գլխավոր համաձայնագիր՝ հաստատված ՀՀ ԿԲ նախագահի 28.04.2006թ. 1/306Ա որոշմամբ</p>
<p>3.2.3</p>	<p>Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման միջազգային ստանդարտների (ՖՀՆՄՍ) հաշվապահական հաշվառման ստանդարտներ</p> <p>http://www.iasb.org</p>
<p>3.2.4</p>	<p>ՏՏՀ-ի պահանջներ և ԱԱՀ մեթոդաբանություն</p> <p>http://dsbb.imf.org/Applications/web/sddshome/</p>
<p>3.3</p>	<p>«ՀՀ ԿԲ մամլո հրապարակումների կարգը հաստատելու մասին» ՀՀ ԿԲ նախագահի 15.02.2006թ. թիվ 1/63L որոշում</p> <p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/dram/gnach/1-63L.pdf</p>
<p>3.3.1</p>	<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 6</p> <p>Տե՛ս սույն հավելվածի 1.1.5 կետը՝ «Դրամավարկային քաղաքականության ծրագիրը»</p>
<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 17</p>	<p>Տե՛ս սույն հավելվածի 1.1.5 կետը՝ «Տարեկան և եռամսյակային հաշվետվությունները»</p>
<p>«ՀՀ ԿԲ պարբերականների թողարկման և հրապարակման կարգն ու պայմանները» ՀՀ ԿԲ խորհրդի 11.03.2008թ. թիվ 70-Ն որոշում</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/orenk/kanon/vor_70.pdf</p>
<p>«ՀՀ ԿԲ պարբերականների պատրաստման, հաստատման, հրատարակման, բաշխման և թարգմանության</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/orenk/kanon/vor_304.pdf</p>

	կարգը» հաստատված «ՀՀ ԿԲ նախագահի 03.04.2008թ. թիվ 1/304Լ որոշմամբ	
3.3.2	«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 7	Տե՛ս սույն հավելվածի 2.4 կետը՝ «Պետական մարմինների հետ համագործակցությունը»
4.	Կենտրոնական բանկի հաշվետվելիությունը և բարեխղճության երաշխիքները	
4.1	«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 7	Տե՛ս սույն հավելվածի 2.4 կետը՝ «Պետական մարմինների հետ համագործակցությունը»
4.2	«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 15	<p>Հաշվապահական հաշվառումն ու ֆինանսական հաշվետվությունը</p> <p>1. Կենտրոնական բանկում հաշվապահական հաշվառումը վարվում է Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված կարգով հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի ընդունած հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին համապատասխան:</p> <p>2. Կենտրոնական բանկը յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար կազմում է ֆինանսական հաշվետվություն՝ հաշվապահական հաշվառման միջազգային չափանիշներին համապատասխան: Ֆինանսական հաշվետվությունները ներառում են՝ տարեկան հաշվեկշիռը, եկամուտների և ծախսերի, շահույթի բաշխման վերաբերյալ հաշվետվությունները, ինչպես նաև Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված այլ դրույթներ:</p> <p>3. Ազգային ժողով ներկայացվող Կենտրոնական բանկի հաշվետվությունը բաղկացած է Կենտրոնական բանկի վարչական ծախսերի և կապիտալ ներդրումների վերաբերյալ հաշվետվություններից:</p>
	«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 16	Արտաքին աուդիտը Կենտրոնական բանկի ֆինանսական հաշվետվությունը յուրաքանչյուր տարի վերստուգվում է միջազգային ճանաչում ունեցող անկախ աուդիտորական

		<p>կազմակերպությունների կողմից: Արտաքին ատղիտորական կազմակերպությունը կամ կազմակերպությունները մինչև երեք տարի ժամկետով ընտրվում են Կենտրոնական բանկի խորհրդի կողմից:</p> <p>Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատն իրականացնում է վերահսկողություն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և պետական պարտքի սպասարկման մասով Կենտրոնական բանկի գործունեության նկատմամբ:</p>
<p>4.2.1</p>	<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 15-16</p>	<p>Տես սույն հավելվածի 4.2 կետը</p>
<p>4.2.2</p>	<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 25</p>	<p>Վերստուգիչ խումբը և գլխավոր վերստուգիչը</p> <p>1. Կենտրոնական բանկի վերստուգիչ խումբը Կենտրոնական բանկի հատուկ կառուցվածքային ստորաբաժանումն է: Վերստուգիչ խմբի աշխատանքը ղեկավարում է գլխավոր վերստուգիչը: Գլխավոր վերստուգիչին և վերստուգիչ խմբի անդամներին Կենտրոնական բանկի նախագահի առաջարկով նշանակում և ազատում է աշխատանքից Կենտրոնական բանկի խորհուրդը:</p> <p>2. Կենտրոնական բանկի վերստուգիչ խումբը՝</p> <p>ա) վերահսկողություն է իրականացնում Կենտրոնական բանկի ստորաբաժանումների գործունեության նկատմամբ.</p> <p>բ) վերստուգում է Կենտրոնական բանկի ծախսերի նախահաշվի կատարումը, հաշվապահական հաշվառումն ու հաշիվները.</p> <p>գ) վերստուգում է Կենտրոնական բանկի ֆինանսական հաշվետվությունը, այլ նման փաստաթղթերը և վավերացնում է դրանք:</p> <p>3. Կենտրոնական բանկի վերստուգիչ խումբը հաշվետու է Կենտրոնական բանկի խորհրդին: Կենտրոնական բանկի վերստուգիչ խումբը պարտավոր է բացահայտված խախտման կամ թերացման յուրաքանչյուր փաստի մասին տեղեկացնել Կենտրոնական բանկի նախագահին և խորհրդին:</p>

<p>«ՀՀ կենտրոնական բանկի վերստուգիչ խմբի կանոնադրություն» հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 2002թ. դեկտեմբերի 5-ի թիվ 397Ն որոշմամբ</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/dram/gnach/397.pdf</p>
<p>«ՀՀ կենտրոնական բանկի վերստուգիչ խմբի էթիկայի նորմեր»</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/dram/gnach/ethics.pdf</p>
<p>«ՀՀ կենտրոնական բանկի ներքին աուդիտի կազմակերպման և անցկացման» կարգ հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 2002թ. դեկտեմբերի 5-ի թիվ 397Ն որոշմամբ</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/dram/gnach/397.pdf</p>
<p>«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտի առաջատար աշխատակիցների միջազգային մասնագիտական որակավորման ծեռքբերման և շարունակական ուսուցման ապահովման վերաբերյալ» կարգը հաստատելու մասին, հաստատված ՀՀ ԿԲ նախագահի 2009թ. հուլիսի 28-ի թիվ 1/958L որոշմամբ</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/dram/gnach/35_1.958L.pdf</p>
<p>4.3 «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 17</p>	<p>Տե՛ս սույն հավելվածի 1.1.5 կետը՝ «Տարեկան և եռամսյակային հաշվետվությունները»</p>
<p>4.4 «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ</p>	<p>Տե՛ս սույն հավելվածի 1.1.7 կետը՝ «Կենտրոնական բանկի խորհուրդը»</p>

<p>օրենք, հոդված 19</p> <p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 23</p>	<p>Կենտրոնական բանկի խորհրդի անդամների եկամուտների և շահերի մասին հայտարարությունը</p> <p>1. Կենտրոնական բանկի նախագահը, նախագահի տեղակալը և խորհրդի մյուս անդամները առաջադրվելիս և նշանակվելիս, իսկ նշանակումից հետո յուրաքանչյուր տարին մեկ պարտավոր են հրապարակել տեղեկատվություն իրենց եկամտի աղբյուրների, ինչպես նաև իրենց և իրենց հետ ընդհանուր տնտեսություն վարող անձանց բոլոր էական ֆինանսական շահերի մասին:</p> <p>2. Կենտրոնական բանկի խորհրդում սույն հոդվածով նախատեսված շահերի հետ առնչվող որևէ հարցի քննարկման դեպքում խորհրդի շահագրգռված անդամը քննարկումն սկսելուց առաջ պարտավոր է հայտարարել իր շահագրգռվածության մասին և չմասնակցել քննարկմանն ու տվյալ հարցի վերաբերյալ քվեարկությանը:</p>
<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 24</p>	<p>Կենտրոնական բանկի աշխատակիցները</p> <p>1. Կենտրոնական բանկի աշխատակիցները Կենտրոնական բանկի ծառայողներն են և սպասարկող անձնակազմը:</p> <p>Կենտրոնական բանկի ծառայողներ են համարվում Կենտրոնական բանկի խնդիրների իրագործման բնագավառում ուղղակիորեն ընդգրկված և Կենտրոնական բանկի կանոնադրությամբ և հաստիքացուցակով հաստատված պաշտոն զբաղեցնող անձինք:</p> <p>2. Կենտրոնական բանկում ծառայության ընթացքում Կենտրոնական բանկի ծառայողներն առանց Կենտրոնական բանկի նախագահի համաձայնության չեն կարող զբաղեցնել պետական այլ պաշտոն, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:</p> <p>Կենտրոնական բանկի ծառայողները չեն կարող աշխատել բանկերում կամ լինել դրանց կառավարման մարմինների անդամներ:</p> <p>3. Կենտրոնական բանկի նախագահին, նրա</p>

		<p>տեղակալին, խորհրդի անդամներին, Կենտրոնական բանկի ծառայողներին արգելվում է անձամբ կամ իրենց հետ փոխկապակցված անձանց միջոցով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակով բանկերից ստանալ առևտրային վարկեր: Նշված անձինք պարտավոր են Կենտրոնական բանկին հայտնել իրենց կողմից ստացված սույն մասով չնախատեսված բոլոր այն վարկերի մասին, որոնք Կենտրոնական բանկի կողմից չեն</p>
		<p>տրամադրված: Այդպիսի վարկերը հաշվառվում են Կենտրոնական բանկում:</p> <p>4. Կենտրոնական բանկի սպասարկող անձնակազմը ներառում է Կենտրոնական բանկի այն աշխատակիցներին, որոնց պարտականություններն ուղղակիորեն չեն առնչվում Կենտրոնական բանկի խնդիրների կատարման հետ, այդ թվում օժանդակ տնտեսության սպասարկման բնագավառում ընդգրկված աշխատակիցները: Կենտրոնական բանկի սպասարկող անձնակազմի հաստիքացուցակը, պարտականությունները, վարձատրության չափը և աշխատանքային պայմանները սահմանում է Կենտրոնական բանկի նախագահը:</p>
<p>«Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 26</p>		<p>Կենտրոնական բանկի խորհրդի անդամների և ծառայողների վարձատրության չափը</p> <p>1. Կենտրոնական բանկի նախագահի, նրա տեղակալի և խորհրդի մյուս անդամների վարձատրության չափը սահմանում է Կենտրոնական բանկի խորհուրդը:</p> <p>2. Կենտրոնական բանկի ծառայողների վարձատրության չափը սահմանում է Կենտրոնական բանկի նախագահը՝ ելնելով սույն օրենքի 14 հոդվածի երկրորդ մասի դրույթներից: Վարձատրության չափի հաշվարկում ընդգրկվում է ինչպես աշխատավարձը, այնպես էլ Կենտրոնական բանկի կողմից տրվող լրացուցիչ վարձատրությունը:</p>
<p>«Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 27</p>		<p>Շահերի բախումը</p> <p>1. Կենտրոնական բանկի նախագահը, նրա տեղակալը, խորհրդի մյուս անդամները և ծառայողներն իրենց պաշտոնական պարտականությունները կատարելիս առաջնորդվում են օրեն-</p>

		<p>քով և Կենտրոնական բանկի խնդիրների իրագործման անհրաժեշտությունից բխող շահերով:</p> <p>2. Կենտրոնական բանկի նախագահը, նրա տեղակալը, խորհրդի մյուս անդամները և Կենտրոնական բանկի ստորաբաժանումների ղեկավարները, ինչպես նաև նրանց հետ փոխկապակցված անձինք չեն կարող պաշտոնավարման կամ ծառայության ընթացքում բանկերում բաժնեմաս ձեռք բերել կամ խորհուրդ տալ բանկերում բաժնեմաս ձեռք բերել:</p> <p>3. Կենտրոնական բանկի նախագահը, նրա տեղակալը և խորհրդի մյուս անդամներն իրավունք չունեն ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցելու հաշվետու թողարկողի արժեթղթերով կատարվող կամ մասնագիտացված գործունեություն իրականացնող որևէ անձի գործարքներին այլ կերպ, քան օրենքով սահմանված կարգով:</p>
		<p>4. Կենտրոնական բանկի նախագահին, նրա տեղակալին կամ խորհրդի մյուս անդամներին, ինչպես նաև Կենտրոնական բանկի ծառայողին (նրանց ամուսիններին) պատկանող՝ հաշվետու թողարկողների կողմից թողարկված արժեթղթերը պետք է օտարվեն կամ տրվեն հավատարմագրային կառավարման՝ նրանց պաշտոնեական պարտականությունների ստանձնման կամ ծառայության անցնելու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում:</p>
<p>«Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենք, հոդված 5, կետ 2</p>		<p>Հոդված 5. Հայտարարատուն Անկախ սույն օրենքի 9-րդ հոդվածի դրույթներից, հայտարարագիր են ներկայացնում՝ 2) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահը, նրա տեղակալը, խորհրդի անդամները և կենտրոնական բանկի ծառայողները:</p>
<p>4.4.1</p>	<p>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, առաջին և երրորդ բաժիններ</p>	<p>http://www.parliament.am/legislation.php?sel=alpha&lang=arm</p>
<p>5.</p>	<p>Ֆինանսական քաղաքականությունների համար պատասխանատու ֆինանսական գործակալությունների դերի, պատասխանատվությունների և նպատակների հստակությունը</p>	

5.1	<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 35</p>	<p>Բանկերի և Կենտրոնական բանկից լիցենզիա ստացած այլ անձանց հետ փոխհարաբերությունները</p>
		<p>1. Կենտրոնական բանկը նպաստում է բանկերի և Կենտրոնական բանկից լիցենզիա ստացած այլ անձանց գործունեությանը, կայուն զարգացմանը և դրանց համար ազատ մրցակցության հավասար պայմանների ստեղծմանը՝ ձեռնարկելով օրենքով նախատեսված միջոցները:</p> <p>2. Կենտրոնական բանկը չի կարող միջամտել բանկերի և իրենից լիցենզիա ստացած այլ անձանց ընթացիկ գործունեությանը՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:</p> <p>3. Կենտրոնական բանկի սահմանած կարգով և պայմաններով Կենտրոնական բանկում ստեղծվում է բանկերի հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ՝ վարկային ռեզիստր, որին պարտադիր մասնակցում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր բանկերը: Կենտրոնական բանկը հրապարակում է բանկերի և (կամ) առանձին բանկի հանդեպ խոշոր պարտավորություն(ներ) ունեցող անպարտաճանաչ պարտապանների անվանումներն ու անունները՝ «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6 հոդվածով սահմանված կարգով:</p>
	<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 36</p>	<p>Բանկային գործունեության կարգավորումը և լիցենզավորումը: Այլ անձանց լիցենզավորումը</p> <p>1. Կենտրոնական բանկը, օրենքին համապատասխան, սահմանում է բանկերի գործունեության հիմնական և այլ տնտեսական նորմատիվները, դրանց հաշվարկման կարգը</p>
		<p>և կապիտալի հաշվարկման կանոնները:</p> <p>2. Կենտրոնական բանկն օրենքով սահմանված կարգով լիցենզավորում է բանկային գործունեությունը, վերահսկում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի գործունեությունը, սահմանում է դրանց կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների և տեղեկանքների ձևերը և</p>

		<p>դրանք ներկայացնելու կարգը: Բանկերի գործունեության վերահսկողությունը Կենտրոնական բանկի բացառիկ իրավասությունն է: Կենտրոնական բանկն օրենքով նախատեսված դեպքերում կարող է բանկերի նկատմամբ պատժամիջոցներ կիրառել:</p> <p>3. Կենտրոնական բանկն այլ անձանց լիցենզիա է տրամադրում օրենքով սահմանված կարգով:</p> <p>4. Բանկերից, վարկային կազմակերպություններից և Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող ու վերահսկվող այլ անձանցից հաշվետվություններ պահանջելու և ստանալու բացառիկ իրավասությունը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, պատկանում է Կենտրոնական բանկին:</p>
<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 37</p>		<p>Բանկերի պարտադիր պահուստները</p> <p>1. Կենտրոնական բանկը սահմանում է բանկերի կողմից ներգրավված ցպահանջ, ժամկետային և խնայողական ավանդների և այլ պարտավորությունների դիմաց Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների չափը, պահուստավորման և պահուստավորված միջոցների օգտագործման կարգը:</p> <p>2. Նույնանման գործունեություն իրականացնող բոլոր բանկերի, ինչպես նաև բանկերի կողմից ստանձնած նույնանման բոլոր պարտավորությունների համար սահմանվում է պարտադիր պահուստավորման նույն կարգը:</p> <p>3. Կենտրոնական բանկը կարող է օտարերկրյա բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի համար սահմանել պարտադիր պահուստավորման հատուկ կարգ, որը պետք է տարածվի օտարերկրյա բանկերի բոլոր մասնաճյուղերի վրա:</p> <p>4. Պարտադիր պահուստավորման ենթակա միջոցների, ինչպես նաև պարտադիր պահուստավորման ենթակա միջոցների չափը գերազանցող մասի դիմաց վճարվող տոկոսադրույքների չափը սահմանում է</p>
		<p>Կենտրոնական բանկի նախագահը: Սույն մասով սահմանված տոկոսադրույքների չափը պետք է նույնը լինի նույնանման գործունեություն</p>

		<p>իրականացնող բոլոր բանկերի, ինչպես նաև բանկերի կողմից ստանձնած նույնանման բոլոր պարտավորությունների համար:</p> <p>5. Պարտադիր պահուստավորումը սահմանված կարգով չկատարելու դեպքում Կենտրոնական բանկը բանկից տույժ է գանձում՝ Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած չափով, բայց ոչ ավելի, քան միջին հաշվով պակաս պահուստավորված յուրաքանչյուր օրվա համար պակաս պահուստավորված գումարի մեկ տոկոսը:</p> <p>6. Կենտրոնական բանկի խորհուրդը բանկի, Կենտրոնական բանկի նախագահի, վերստուգող ստորաբաժանման առաջարկության հիման վրա կամ իր նախաձեռնությամբ կամ բանկի հետ սույն օրենքի 39¹⁰ հոդվածով նախատեսված պայմանագրի կնքմամբ բանկի նկատմամբ նշանակված տույժի գանձումը հետաձգելու, տույժի չափը նվազեցնելու կամ տույժի գանձման ժամանակացույց սահմանելու դրոշում է ընդունում, եթե տույժի գանձումը կարող է հանգեցնել բանկի՝ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված չափանիշներով հիմնավորված ծանր ֆինանսական կացությանը:</p>
	<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 38</p>	<p>Տե՛ս սույն հավելվածի 1.1.3 կետը:</p>
	<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 39</p>	<p>Տե՛ս սույն հավելվածի 2.5. կետը:</p>
	<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, Գլուխ 5¹</p>	<p>ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ, ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ, ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ</p> <p>Հոդված 39¹. Կենտրոնական բանկի կողմից իրականացվող վերահսկողությունը և ստուգումների անցկացումը</p> <p>Հոդված 39². Ստուգման պայմանները</p> <p>Հոդված 39³. Վերստուգող անձի պարտականու-</p>

	<p>թյունները: Կենտրոնական բանկի պատասխանատվությունը Հոդված 39⁴. Վերստուգող խմբի իրավունքները և պարտականությունները</p>
	<p>Հոդված 39⁵. Ստուգումների ուղղությունները (ուղորտները) և ամփոփումը Հոդված 39⁶. Վերստուգող անձի տարածքային ստորաբաժանումների ստուգումը Հոդված 39⁷. Պատասխանատվության միջոցի կիրառման հիմքերը և պատասխանատվության միջոցները Հոդված 39⁸. Խախտման արձանագրումը Հոդված 39⁹. Տուգանքների գանձումը, պատասխանատվության այլ միջոցների կիրառումը Հոդված 39¹⁰. Բանկի, ներդրումային ընկերության, ապահովագրական կամ վերաապահովագրական ընկերության կամ վարկային կազմակերպության և Կենտրոնական բանկի միջև կնքվող պայմանագիրը Հոդված 39¹¹. Վաղեմության ժամկետը Հոդված 39¹². Վարույթը կարճելը Հոդված 39¹³. Վարույթի կասեցումը Հոդված 39¹⁴. Տուգանքի գանձումը հետաձգելու, տուգանքը կամ այլ պատասխանատվության միջոց չկիրառելու կամ տուգանքը մեղմացնելու մասին որոշումը (Հոդվածների մանրամասներին կարելի է ծանոթանալ http://www.cba.am/orenk/orenq1.pdf ինտերնետային հասցեում գետեղված «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի ամբողջական տարբերակում)</p>
<p>«Ֆինանսական կարգավորման և վերահսկողության միասնական համակարգի ներդրման մասին» ՀՀ օրենք, հոդված 5</p>	<p>Ֆինանսական համակարգի այլ մասնակիցների գործունեության կարգավորումը և վերահսկողությունը</p> <p>1. Ֆինանսական համակարգի այլ մասնակիցների նկատմամբ կարգավորման և վերահսկողության գործառույթները փոխանցվում են ՀՀ կենտրոնական բանկին՝ սույն օրենքով և դրան համապատասխան ընդունված այլ իրավական ակտերով սահմանված կարգով և պայմաններով:</p> <p>2. Կենտրոնական բանկի՝ որպես</p>

	<p>Ֆինանսական համակարգը կարգավորող և վերահսկող մարմնի գործառույթները և լիազորությունները սահմանվում են սույն օրենքով, «ՀՀ կենտրոնական բանկ մասին» ՀՀ օրենքով, ֆինանսական համակարգի մասնակիցների գործունեությունը, ինչպես նաև մասնագիտացված գործունեությունը կարգավորող այլ օրենքներով:</p>
<p>«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենք, հոդված 4</p>	<p>Երաշխավորողը Ավանդների հատուցման երաշխավորողն է սույն օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված կարգով ստեղծված Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը:</p>
<p>«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենք, հոդված 5</p>	<p>Երաշխավորված ավանդների հատուցման դեպքը Երաշխավորված ավանդների հատուցման դեպք է համարվում «Բանկերի և վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով բանկին անվճարունակ ճանաչելը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը հաստատելը կամ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով բանկին սնանկ ճանաչելը: Բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելը ի վիճակի չլինելու մասին որոշումը (բանկի պարտատերերի պահանջների բավարարման սառեցումը) Կենտրոնական բանկի խորհուրդը կայացնում է այդ փաստը բացահայտելուց մեկ շաբաթվա ընթացքում:</p>
<p>«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը</p>	<p>Հիմնադրամի գործառույթները Հիմնադրամն իրականացնում է հետևյալ գործառույթները՝ ա) հավաքագրում է երաշխի-</p>

<p>երաշխավորելու մասին» ՀՀ օրենք, հոդված 18</p>	<p>քային վճարները. բ) իրականացնում է Հիմնադրամի միջոցների, երաշխավորված ավանդների, ավանդատուների թվի և այլ վերլուծություն. գ) միջնորդություններ է ներկայացնում Կենտրոնական բանկ՝ սույն օրենքով սահմանված երաշխիքային վճարները չվճարած բանկերի նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու, բանկերի ներկայացրած հաշվետվությունների արժանահավատությունը պարզելու նպատակով Կենտրոնական բանկի կողմից ստուգումներ անցկացնելու համար. դ) սույն օրենքով սահմանված պայմաններով կառավարում է Հիմնադրամի միջոցները. ե) հատուցում է երաշխավորված ավանդները՝ սույն օրենքով սահմանված կարգով, չափերով և դեպքերում. զ) ստանում է վարկեր (փոխառություններ), երաշխիքներ, դրամաշնորհներ, նվիրատվություններ և նվիրաբերություններ. է) ստանում է անհրաժեշտ տեղեկատվություն՝ հատուցումը սույն օրենքով սահմանված կարգով կազմակերպելու համար. ը) լուսաբանում է ավանդների երաշխավորման և հատուցման գործընթացը. թ) իրականացնում է սույն օրենքով սահմանված այլ գործառույթներ:</p>
<p>5.1.1 «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 5</p>	<p>Տե՛ս սույն հավելվածի 1.1.2 կետը՝ «Կենտրոնական բանկի խնդիրը»</p>
<p>«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենք, հոդված 18</p>	<p>Տե՛ս սույն հավելվածի 5.1 կետը՝ «Հիմնադրամի գործառույթները»</p>
<p>5.1.2 «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 4</p>	<p>Տե՛ս սույն հավելվածի 1.1 կետը՝ «Կենտրոնական բանկի հիմնական խնդիրը»</p>
<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 5</p>	<p>Տե՛ս սույն հավելվածի 1.1.2 կետը՝ «Կենտրոնական բանկի խնդիրը»</p>
<p>5.1.3 «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 15</p>	<p>Տե՛ս սույն հավելվածի 4.2 կետը</p>
<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 17</p>	<p>Տե՛ս սույն հավելվածի 1.1.5 կետը</p>

<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 20, կետ «թ»</p>	<p>Կենտրոնական բանկի խորհրդի իրավասությունը. թ) հաստատում է Կենտրոնական բանկի կողմից ներկայացվող հաշվետվություններն ու եզրակացությունները:</p>
<p>«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենք, հոդված 24</p>	<p>Տեղեկությունների փոխանակումը: Հիմնադրամի կողմից տրվող հաշվետվությունները: Վերահսկողությունը Հիմնադրամի գործունեության նկատմամբ (Հոդվածի մանրամասներին կարելի է ծանոթանալ http://www.cba.am/CBA_SITE/downloads/orenk/orenk/rus/law_on_guarantee.pdf ի ինտերնետային հասցեում զետեղված «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի ամբողջական տարբերակում)</p>
<p>5.3 «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 5</p>	<p>Տե՛ս սույն հավելվածի 1.1.2 կետը «Կենտրոնական բանկի խնդիրը»</p>
<p>«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, Գլուխ 5¹</p>	<p>Տե՛ս սույն հավելվածի 5.1 կետը՝ «ԿԲ կողմից իրականացվող ստուգումները, վերահսկողությունը, ուսումնասիրությունները և լիցենզավորված անձանց պատասխանատվության ենթարկելու կարգն ու պայմանները»</p>
<p>«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 13</p>	<p>Վճարահաշվարկային համակարգի գործունեության նկատմամբ վերահսկողությունը (Հոդվածի մանրամասներին կարելի է ծանոթանալ http://www.cba.am/CBA_SITE/downloads/orenk/oreng_vchar.pdf ինտերնետային հասցեում զետեղված «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի ամբողջական տարբերակում)</p>
<p>«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 14</p>	<p>Վճարահաշվարկային համակարգի դիտորդ խորհրդի վերահսկողությունը վճարահաշվարկային համակարգի մասնակիցների նկատմամբ (Հոդվածի մանրամասներին կարելի է ծանոթանալ http://www.cba.am/CBA_SITE/downloads/orenk/</p>

	orenq_vchar.pdf ինտերնետային հասցեում զետեղված «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի ամբողջական տարբերակում)
«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 15	Վճարահաշվարկային համակարգի մասնակիցների կողմից օրենսդրության պահանջների խախտման համար պատասխանատվությունը (Հոդվածի մանրամասներին կարելի է ծանոթանալ http://www.cba.am/CBA_SITE/downloads/orenk/orenq_vchar.pdf ինտերնետային հասցեում զետեղված «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի ամբողջական տարբերակում)
«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 16	Տեղեկությունների հրապարակումը (Հոդվածի մանրամասներին կարելի է ծանոթանալ http://www.cba.am/CBA_SITE/downloads/orenk/orenq_vchar.pdf ինտերնետային հասցեում զետեղված «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի ամբողջական տարբերակում)
5.3.1 «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 5	Տե՛ս սույն հավելվածի 1.1.2 կետը «Կենտրոնական բանկի խնդիրը»
«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 5	Հայաստանյան վճարահաշվարկային համակարգի ստեղծման և գործունեության, ինչպես նաև արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության վերաբերյալ Կենտրոնական բանկի թույլտվությունը և դրա ուժը կորցրած ճանաչելը (Հոդվածի մանրամասներին կարելի է ծանոթանալ http://www.cba.am/CBA_SITE/downloads/orenk/orenq_vchar.pdf ինտերնետային հասցեում զետեղված «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի

<p>«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 6</p>	<p>ամբողջական տարբերակում)</p> <p>Վճարահաշվարկային համակարգի ներկայացվող պահանջները (Հոդվածի մանրամասներին կարելի է ծանոթանալ http://www.cba.am/CBA_SITE/downloads/orenk/orenq_vchar.pdf ինտերնետային հասցեում գետեղված «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի ամբողջական տարբերակում)</p>
<p>«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 7</p>	<p>Հայաստանյան վճարահաշվարկային համակարգի ստեղծման և գործունեության թույլտվության տրամադրումը (հոդվածի մանրամասներին կարելի է ծանոթանալ http://www.cba.am/CBA_SITE/downloads/orenk/orenq_vchar.pdf ինտերնետային հասցեում գետեղված «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի ամբողջական տարբերակում)</p>
<p>«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 8</p>	<p>Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվության տրամադրումը (Հոդվածի մանրամասներին կարելի է ծանոթանալ http://www.cba.am/CBA_SITE/downloads/orenk/orenq_vchar.pdf ինտերնետային հասցեում գետեղված «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի ամբողջական տարբերակում)</p>
<p>«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 13-16</p>	<p>Տես սույն հավելվածի 5.3 կետը</p>
<p>«ՀՀ կենտրոնական բանկի կողմից վճարային համակարգի նկատմամբ հսկողության</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/vchar/hrap/conception.pdf</p>

<p>իրականացման հայեցակարգ» հաստատված ՀՀ ԿԲ նախագահի 2006թ. դեկտեմբերի 21-ի թիվ 1/1384Ա որոշմամբ</p>	
<p>6. Ֆինանսական քաղաքականությունների մշակման և հաշվետվելիության գործընթացը</p>	
<p>6.1 «ՀՀ ԿԲ մամլո հրապարակումների կարգ», 2-րդ կետի «գ» ենթակետ</p>	<p>«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի նիստում» հաղորդագրությունը պետք է ընդգրկի տեղեկատվություն.</p> <ol style="list-style-type: none"> 1) նոր ընդունվող կամ փոփոխվող նորմատիվ և անհատական ակտերի վերաբերյալ, 2) տրված, կասեցված կամ ուժը կորցրած ճանաչված լիցենզիաների վերաբերյալ, 3) ազդագրերի և արժեթղթերի գրանցման, ազդագրերի և արժեթղթերի գրանցումը կասեցնելու կամ արժեթղթերի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ, 4) արժեթղթերի վաճառքի կասեցման վերաբերյալ, 5) ինքնակարգավորվող կազմակերպությունների և դրանց կանոնների գրանցման վերաբերյալ, 6) բանկում կամ վարկային կազմակերպությունում ժամանակավոր ադմինիստրացիա նշանակելու և բանկի կամ վարկային կազմակերպության ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու վերաբերյալ, 7) օրենքով սահմանված կարգով պարտադիր հրապարակման ենթակա որոշումների վերաբերյալ:
<p>«ՀՀ ԿԲ զարգացման տեսլական» հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 24.06.2008թ. թիվ 179/Ա որոշմամբ</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/verluc/teslakan_09_11.pdf</p>
<p>6.1.1 «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 20</p> <p>«Իրավական ակտերի</p>	<p>Տե՛ս սույն հավելվածի 1.1.7 կետը՝ «Կենտրոնական բանկի խորհրդի իրավասությունները»</p> <p>ՀՈԴՎԱԾ 87. ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԻ</p>

<p>մասին» ՀՀ օրենք, հոդված 87</p>	<p>ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ</p> <p>1. Իրավական ակտի դրույթների ոչ հստակ կամ տարաբնույթ ընկալման, իրավական ակտն ավելի բարձր կամ նույն իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտին կամ նույն իրավական ակտի տարբեր դրույթների հակասության կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում, իրավական ակտի ուժի մեջ մտնելու ժամկետի որոշման, իրավաբանական ուժ ունենալու հարցերի պարզաբանման, ինչպես նաև իրավական ակտի կիրառման բնագավառում ծագած այլ հարցերի ճշտման նպատակով տրվում է իրավական ակտի պարզաբանում:</p> <p>Իրավական ակտի պաշտոնական պարզաբանումը պետք է ունենա ընդունման օր, հերթական համար և վերնագիր:</p> <p>2. Իրավական ակտերի պաշտոնական պարզաբանումներ կարող են տալ՝</p> <p>ա) Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած իրավական ակտը կիրառող գործադիր իշխանության մարմինը՝ ընդ որում, մեկ բնագավառի վերաբերյալ պարզաբանումներ տալու իրավունք ունի միայն մեկ մարմին.</p> <p>բ) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը՝ իր կողմից կիրառվող կամ ընդունված իրավական ակտերի վերաբերյալ.</p>
<p>6.1.4 «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք, հոդված 8</p>	<p>Բազային տուրքի չափ է սահմանվում 1000 դրամը:</p>
<p>«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք, հոդված 16</p>	<p>կետ 5. բանկերը, ներդրումային հիմնադրամները, արժեթղթավորման հիմնադրամները, ապահովագրական ընկերությունները, կենսաթոշակային հիմնադրամները գրանցելու համար՝ բազային տուրքի 40-պատիկի չափով.</p> <p>կետ 5.1. ներդրումային հիմնադրամների, ապահովագրական ընկերությունների, կենսաթոշակային հիմնադրամների ընթացիկ պետական գրանցման համար՝ բազային տուրքի</p>

	<p>քանապատիկի չափով.</p> <p>կետ 6. օտարերկրյա բանկերի, ներդրումային հիմնադրամների, ապահովագրական ընկերությունների, կենսաթոշակային հիմնադրամների մասնաճյուղերը գրանցելու համար՝ բազային տուրքի 40-պատիկի չափով.</p> <p>կետ 7. Հայաստանի Հանրապետությունում գրանցված բանկերի, ներդրումային հիմնադրամների, ապահովագրական ընկերությունների, կենսաթոշակային հիմնադրամների մասնաճյուղերը գրանցելու համար՝ բազային տուրքի 20-պատիկի չափով.</p> <p>կետ 8. օտարերկրյա բանկերի, ներդրումային հիմնադրամների, ապահովագրական ընկերությունների, կենսաթոշակային հիմնադրամների ներկայացուցչությունները գրանցելու համար՝ բազային տուրքի տասնապատիկի չափով.</p> <p>կետ 9. (16-րդ հոդվածի 9-րդ կետն ուժը կորցրած է ճանաչվել 08.12.05 ՀՕ-249-Ն օրենքով)</p> <p>կետ 16. արժեթղթերի ազդագրի գրանցման համար՝</p> <p>ա) եթե արժեթղթերը ազդագրի գրանցվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից՝ բազային տուրքի 50-ապատիկի չափով</p> <p>բ) եթե արժեթղթերի ազդագրի գրանցվում են ֆոնդային բորսայի կողմից՝ բազային տուրքի 25-ապատիկի չափով:</p>
<p>«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք, հոդված 19</p>	<p>5.1. բանկային գործունեության համար՝ տարեկան բազային տուրքի՝ 3000-ապատիկի չափով,</p> <p>5.2. գրավատների կազմակերպման համար՝ տարեկան բազային տուրքի 100-ապատիկի չափով,</p> <p>5.3. ինվեստիցիոն ընկերությունների, ինվեստիցիոն բազային հիմնադրամների գործունեության համար՝ տարեկան բազային տուրքի 200-ապատիկի չափով,</p> <p>5.4. կյանքի յուրաքանչյուր դասի ապահովագրության բազային տուրքի իրականացման համար՝ տարեկան բազային տուրքի 700-ապատիկի չափով,</p>

	<p>5.4.1. ոչ կյանքի յուրաքանչյուր դասի ապահովագրության բազային տուրքի իրականացման համար՝ տարեկան բազային տուրքի 250-ապատիկի չափով</p> <p>5.4.2. յուրաքանչյուր դասի վերաապահովագրության բազային տուրքի իրականացման համար՝ տարեկան բազային տուրքի 2000-ապատիկի չափով</p> <p>5.6. ապահովագրական բրոքերային գործունեության բազային տուրքի համար՝ տարեկան բազային տուրքի 100-ապատիկի չափով,</p>
	<p>5.8. վարկային գործունեության համար՝ տարեկան բազային տուրքի 500-ապատիկի չափով,</p> <p>5.9. դրամական (փողային) փոխանցումների իրականացման բազային տուրքի համար՝ տարեկան բազային տուրքի 250-ապատիկի չափով</p> <p>5.10. վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգի և քլիրինգի իրականացման համար՝ տարեկան բազային տուրքի 250-ապատիկի չափով</p> <p>5.11. վարկային բյուրոյի գործունեության համար՝ տարեկան բազային տուրքի 500-ապատիկի չափով</p>
<p>«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք, հոդված 20</p>	<p>8. պետական մենաշնորհային բնույթի ծառայությունների (գործողությունների) մատուցումը հաստատող փաստաթղթի (վկայականի) տրամադրման համար յուրաքանչյուր քննությունը ընդունելու համար (բացառությամբ բժշկական և դեղագործական, արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեության լիցենզավորման և արտոնագրային հավատարմատարների որակավորման համար քննությունների) բազային տուրքի եռապատիկի չափով.</p> <p>կետ 8.1. արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնելու որակավորման քննությանը մասնակցելու համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով:</p>
<p>«ՀՀ ԿԲ նախագահի և խորհրդի կողմից պատասխանատվության</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/dram/gnach/1071.pdf</p>

<p>միջոցների կիրառման մասին որոշումների հրապարակային կարգը հաստատելու մասին» ՀՀ ԿԲ նախագահի 2006թ. նոյեմբերի 3-ի թիվ 1/1071L որոշում</p>	
<p>6.3 «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 17</p>	<p>Տե՛ս սույն հավելվածի 1.1.5 կետը՝ «Տարեկան և եռամսյակային հաշվետվությունները»</p>
<p>6.4 «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 39</p>	<p>Տե՛ս սույն հավելվածի 2.5 կետը՝ «Համագործակցությունը բանկային միությունների և ասոցիացիաների հետ»</p>
<p>«ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ հանրության կողմից կաճիքների ներկայացման հնարավորություն ընձեռելու վերաբերյալ կարգի մասին» ՀՀ ԿԲ նախագահի 2009թ. փետրվարի 26-ի թիվ 1/205L որոշում</p>	<p>http://www.cba.am/CBA_SITE/downloads/dram/gnach/37_1-205L-26_pdf.pdf</p>
<p>7.</p>	<p>Ֆինանսական քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը հասարակությանը</p>
<p>7.1 «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 17</p>	<p>Տե՛ս սույն հավելվածի 1.1.5 կետը՝ «Տարեկան և եռամսյակային հաշվետվությունները»</p>
<p>7.2 «ՀՀ ԿԲ մամլո հրապարակումների կարգ», 2-րդ կետի «դ» ենթակետ</p>	<p>Աղյուսակները հրապարակվում են ամեն եռամսյակ և պարունակում են հետևյալ տեղեկատվությունը.</p> <p>1) Ամփոփ տվյալներ ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և դրանց մասնաճյուղերի քանակի, բանկերի կապիտալի, ակտիվների և պարտավորությունների, ինչպես նաև դրանց առանձին տարրերի դինամիկայի մասին՝ նախորդ ժամանակաշրջանում:</p> <p>2) Ամփոփ տվյալներ ՀՀ բանկային համակարգի՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված նորմատիվային դաշտին համապատասխանու-</p>

		<p>թյան մասին: Տեղեկատվությունը տրվում է հետևյալ ֆորմատով՝ յուրաքանչյուր նորմատիվի համար առանձնացվում են մի շարք թվային միջակայքեր և յուրաքանչյուրի համար տրվում է այդ միջակայքում ցուցանիշներ ունեցող բանկերի թիվը՝ եռամսյակի վերջի դրությամբ:</p> <p>3) Ամփոփ տվյալներ ապահովագրական շուկայի մասին:</p> <p>4) Ամփոփ տվյալներ արժեթղթերի շուկայի մասին:</p>
<p>8</p>	<p>Ֆինանսական գործակալությունների հաշվետվելիությունը և բարեխղճության երաշխիքները</p>	
<p>8.2</p>	<p>«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենք, հոդված 24</p>	<p>ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ: ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՅ ՏՐՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ</p> <p>1. Հիմնադրամն ու Կենտրոնական բանկը սույն օրենքով սահմանված դեպքերում անհրաժեշտ տեղեկություններ են փոխանակում՝ օրենքով և Կենտրոնական բանկի կողմից ընդունված իրավական ակտերով սահմանված կարգով և ձևով: Բանկերը Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված ձևերով և կարգով կազմում և Կենտրոնական բանկ են ներկայացնում երաշխիքային վճարները հաշվարկելու, ավանդատուների թվի և հատուցման ենթակա գումարի վերաբերյալ եռամսյակային հաշվետվություններ: Հիմնադրամը կարող է ստանալ Կենտրոնական բանկից այդ հաշվետվությունները Կենտրոնական բանկ ներկայացնելու պահից տասնօրյա ժամկետում:</p> <p>2. Բացի սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հաշվետվություններից, Հիմնադրամը Կենտրոնական բանկից և (կամ) բանկերից բանկային գաղտնիք կազմող (պարունակող) այլ տեղեկություններ կարող է ստանալ բացառապես սույն օրենքով սահմանված հատուցման դեպքն առաջանալիս՝ «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Հիմնադրամի աշխատակիցների կողմից պետական, բանկային, առևտրային և ծառայողական գաղտնիքի պահպանումն ու</p>

	<p>օգտագործումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված կարգով:</p> <p>3. Հիմնադրամի գործունեությունը յուրաքանչյուր տարի ստուգվում է օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անկախ աուդիտորական կազմակերպության կողմից: Անկախ աուդիտորական կազմակերպության եզրակացությունը և ստուգված տարեկան ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են Կենտրոնական բանկ:</p> <p>Հիմնադրամը պարտավոր է ֆինանսական տարվա ավարտից հետո՝ քառամսյա ժամկետում, մամուլում հրապարակել անկախ աուդիտորական կազմակերպության համառոտ եզրակացությունը:</p> <p>4. Հիմնադրամի միջոցների վերաբերյալ տեղեկությունները, բացառությամբ Հիմնադրամի վարչական ծախսերի, գործառնական ծախսերի և կապիտալ ներդրումների վերաբերյալ տեղեկությունների, չեն կարող հրապարակվել, տրամադրվել այլ անձանց և պետական մարմինների: Այդ տեղեկությունների պահպանումը, տրամադրումը և հրապարակումն իրականացվում է «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և պայմաններով:</p> <p>5. Հիմնադրամի կողմից սույն օրենքով, Հիմնադրամի գործունեությունը կարգավորող այլ օրենքներով և դրանց համապատասխան ընդունված իրավական այլ ակտերով սահմանված գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Կենտրոնական բանկը՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և պայմաններով: Հիմնադրամի գործունեության նկատմամբ իրականացվող վերահսկողության վերաբերյալ Կենտրոնական բանկը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով է ներկայացնում հաշվետվություն, որը ներառվում է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության</p>
--	--

	<p>օրենքով նախատեսված տարեկան հաշվետվության մեջ:</p> <p>6. Սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված խախտումների համար Կենտրոնական բանկը կարող է Հիմնադրամի նկատմամբ կիրառել նախազգուշացում և խախտումները որոշակի ժամկետում վերացնելու հանձնարարական: Նախազգուշացումը նախատեսում է նաև թույլ տված խախտումը Կենտրոնական բանկի սահմանած ժամկետում վերացնելու և (կամ) ապագայում նման խախտումը կանխելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարական:</p> <p>7. Սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված խախտումների համար Կենտրոնական բանկը կարող է Հիմնադրամի տնօրենի նկատմամբ կիրառել հետևյալ պատասխանատվության միջոցները՝</p> <ul style="list-style-type: none"> - նախազգուշացում և խախտումները որոշակի ժամկետում վերացնելու հանձնարարական, և (կամ) - տուգանք, կամ - որակավորման վկայականից զրկում: <p>8. Սույն հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցները Հիմնադրամի և (կամ) Հիմնադրամի տնօրենի նկատմամբ Կենտրոնական բանկը կարող է կիրառել, եթե Հիմնադրամը և (կամ) Հիմնադրամի տնօրենը թույլ են տվել հետևյալ խախտումները՝</p> <ul style="list-style-type: none"> ա) խախտել են սույն օրենքի, Հիմնադրամի գործունեությունը կարգավորող այլ օրենքների, դրանց հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջները. բ) խախտել են հաշվապահական հաշվառում վարելու կանոնները, ինչպես նաև ֆինանսական և այլ հաշվետվությունների ներկայացման և հրապարակման կարգն ու պայմանները, և (կամ) այդ փաստաթղթերում ներկայացվել են կեղծ կամ անարժանահավատ տվյալներ. գ) չեն կատարել Կենտրոնական բանկի՝ սույն օրենքով սահմանված կարգով տված հանձնարարականը: <p>9. Սույն հոդվածով սահմանված պատասխանա-</p>
--	--

		տվության միջոցները կենտրոնական բանկը Հիմնադրամի և (կամ) Հիմնադրամի տնօրենի նկատմամբ կիրառում է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով;
8.2.1	«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 15	Տե՛ս սույն հավելվածի 4.2 կետը՝ «Հաշվապահական հաշվառումն ու ֆինանսական հաշվետվությունը»
	«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 16	Տե՛ս սույն հավելվածի 4.2 կետը՝ «Արտաքին աուդիտը»
	«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 17	Տե՛ս սույն հավելվածի 1.1.5 կետը՝ «Տարեկան և եռամսյակային հաշվետվությունները»